


ԷԶՄԻԱԾԻՆ



ԺԲ
2003



112 ԵՊԹ ԵՊԹ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
Է Ջ Մ Ի Ա Ր Ն Ի



Դ Ե Կ Դ Ե Դ Բ Ե Դ
2003

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսի այցը Նարավային Ռուսաստանի թեմ	3
--	---

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արթուր Բաղդյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	10
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արթուր Բախարությանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	12
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Արման Բախարությանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	14
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Գոհար Գասպարյանին «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	16
Նայրապետական գնահատություն	18
Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրեց երգչուհի Գոհար Գասպարյանին և նկարիչ Նակոբ Նակոբյանին	19
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Նայոց Կաթողիկոսը Երեանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց բուվեյրաբնակ բարերար Կիրակոս Գույումջյանին	21

ԶԱՐՈՋԵՈՍԱԿԱՆ

Տ. Եզնիկ եպիսկոպոս Պեպրոսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պարարագին	22
Տ. Իգնատիոս արեղա Մալխասյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում Ս. Աստվածածնի եղության փոփոխ մատուցված Ս. Պարարագին	25
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պաղատալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պարարագին	28
Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանի քարոզը՝ խոսված	

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին	30
S. Սիոն եպիսկոպոս Աղամյանի քարոզը խոսված	
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Սյրեպիանոս նախասարկավագի տոնին մատուցված Ս. Պատարագին	32
S. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանի քարոզը խոսված	
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին	34

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նվիրվում է Նարեկի գրության 1000-ամյակին

ՔՆԱՐԻԿ ՏԵՐ - ԴԱՎԹՅԱՆ - Գրիգոր Նարեկացու գրուցապատում վարքի աղբյուրներից	36
ՀԱՎՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հայրախոսական աստվածաբանության արձագանքները Նարեկում	43
ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻՍՅԱՆ - Նարեկացու «Մատենի» քնարական հերոսը	54
ԳԱՐԵԳԻՆ ԱԲԵՂԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Նարեկը XXI դարի գործնական աստվածաբանության տեսանկյունից	62

Հրապարակումներ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի նամակները Շահամիր Շահամիրյանին ու նրա հարազատներին	67
ՍԱՆՆԱՆ ԲԵՀՐԱՄՅԱՆ - Խորեն Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը	76
Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական անդրանիկ կոնդակը	78
ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ - Կոմիտասը և «Սիփանա քաջերը»	83
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ - Սիփանա քաջերը	86
ԱԶՆԻՎ ՄՈՎՍԵՍՅԱՆ - Նորվեգական հրապարակությունը հայ մանրանկարչության մասին	91

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի Ս. Գայանե եկեղեցին	93
Գիտաժողով նվիրված Նարեկին	94
Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանը	97
Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Կալկաթայի հայոց հոգևոր հովիվ Տ. Օշական վարդապետ Գյուլգյուլյանը	97

Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը	98
Հոգեհանգիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	99
Մուղանում աշխատող օղաչուներն իրենց երախտագիտությունը հայտնեցին Վեհափառ Հայրապետին	100
Աղբարության հաղթահարմանը նվիրված խորհրդակցություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	100
Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	101
Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյան	102
Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյան	103
Ս. Սյրևիանոսի Կոնստն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ձեռնադրվեցին 17 նոր սարկավագներ	104
Ս. Սյրևիանոսի Կոնստն Սեանի Ս. Առաքելոց եկեղեցում Կնդի ունեցավ դպրական ձեռնադրություն	108
Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս	
Ընդունելութիւն ի պատիւ Ամերիկայի Ուղղափառ Եկեղեցոյ առաջնորդ Ամենապատիւ Տ. Ներսէս Մեսրոպոսի	109
Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս	
Տէր եւ Կիկին Ճէգ Գալայճեան կը պարգեւատրուեն «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով	110
Շարաթական լուրեր Առաջնորդարանէն	111
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՌՈՒՄ	
Վեհափառ Հայրապետն ընդունեց Համաշխարհային Բանկի Գործադիր Կնօրենքների խորհրդի անդամներին	114
Հանգիստ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աջնյանի	115
Եկեղեցական բնմ. լուրեր	117
Ցանկ «Էջմիածին» ամսագրում 2003 թվականի ընթացքում տպագրված նյութերի	119
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата	143
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	147
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	151

ՀԱՄԱՐԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՆԱՓԱՌ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՅՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈԻՍԱՍՏԱՆԻ ԹԵՄ

Նոյեմբերի 27-30-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսն իր օրհնաբեր հայրապետական այցը կարարեց հարավային Ռուսաստանի հայոց թեմ: Այցն անմիջապես հաջորդում էր նոյեմբերի 26-ին, Մոսկվայի և համայն Ռուսիայի Պապրիարք Ալեքսի Բ-ի հրավերով Մոսկվայում կայացած Կովկասի կրոնական առաջնորդների՝ Ամենայն հայոց Կաթողիկոսի, համայն Վրաստանի Կաթողիկոս-Պապրիարք Իլիա Երկրորդի և Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուբյուր Փաշա-զադեի քառակողմ հանդիպմանը, որը նվիրված էր Կովկասյան տարածաշրջանում խաղաղության ամրապնդման և միջկրոնական հանդուրժողականության գործադան խնդիրներին: Այս հանդիպումից հետո հայոց հայրապետի եռօրյա այցը հարավային Ռուսաստանի թեմ դարձավ կովկասյան ժողովուրդների հին ու նոր բարեկամության ևս մի կենդանի վկայություն: Վեհափառ հայրապետը հյուսիսային Օսեթիայի մայրաքաղաք Վլադիկավկազում իր մասնակցությունը բերեց Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու 160-ամյակի հոբելյանական տոնակատարությանը, Պյատրիգորսկ քաղաքում, ձեռամբ Նորին Սրբության, կատարվեց Ս. Սարգիս նորակառույց եկեղեցու օծումը:

«Դարավոր սիրո ու փոխըմբռման հարաբերություններ»

Նոյեմբերի 27-ին Ամենայն հայոց հայրապետը Մոսկվայից ժամանեց Ստավրոպոլի երկրամաս: Վեհափառ հայրապետի շքախմբում էին Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը և Տ. Մեսրոպ արք. Պարսամյանը՝ որպես գավազանակիր:

Միևնույն օդանավակայանում Ամենայն հայոց հայրապետին դիմավորեցին ավանդական աղ ու հացով: Վեհափառ հայրապետին դիմավորելու էին եկել հարավային Ռուսաստանի հայոց թեմակալ առաջնորդ Տ. Մեսրոպ եպս. Մովսիսյանը, թեմի հոգևոր ղասը: Հայ համայնքի հոգեոր և աշխարհիկ ներկայացուցիչների կողքին էին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու Ստավրոպոլի և Վլադիկավկազի հոգևոր առաջնորդ Ֆեոֆան նախկնդուսը, Ստավրոպոլի երկրամասի փոխնախագահներ Վիտալի Միխայիլենկոն, Պյատրիգորսկի քաղաքապետը, հարավային Ռուսաստանում ՀՀ գլխավոր հյուպարտոս Արարատ Գոմբյանը:

Իր բարիգալստյան խոսքում Ֆեոֆան նախկնդուսը մասնավորապես նշեց. «Ամենայն հայոց Կաթողիկոսի այցը Ստավրոպոլի հիմնավորը երկրամաս հարաբերություն է ոչ միայն ուղղափառ հայ հավատացյալների, այլև Ռուս Ուղղափառ Եկեղեցու գավազանների համար:

Քիչ առաջ, երբ ինձ հարցնում էին, թե ինչպիսին են հարաբերությունները Ռուս Ուղղափառ և հինավուրց Հայ Ուղղափառ Եկեղեցիների միջև, ես պատասխանեցի՝ 1000-ամյա սիրտ և փոխըմբռնման: Այդպես եղել է, այդպես կա ու այդպես կլինի»:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց այս ազնիվ խոսքերի և ջերմ ընդունելության համար՝ աղոթելով Ռուսաստանի ժողովրդի բարօրության ու քույր Եկեղեցիների եղբայրության գորացման համար:

Հաջորդ օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Վլադիկավկազ՝ մասնակցելու Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու օծման 160-ամյակի տոնակատարությունը:

«Վլադիկավկազի հայոց եկեղեցին բարեկամության ու փոխադարձ սիրտ կենդանի վկայությունն է»

Գարեգին Բ

Հյուսիսային Օսեթիայի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին հունրապետության Ազգությունների գծով նախարար Սերգեյ Տաբուլովը, Մշակույթի նախարար Ա. Չերոմինը, Ներքին գործերի փոխնախարար Մ. Մ. Մասուլովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ հայր Վլադիմիրը և Օսեթիայի մահմեդականների առաջնորդը: Այսպիսով ամբողջությամբ ուղղվեց դեպի Վլադիկավկազ:

Հայոց Հայրապետի առաջին հանդիպումը Վլադիկավկազում Հյուսիսային Օսեթիայի նախագահ Ալեքսանդր Չաստխովի հետ էր: Հանդիպումից հետո Ալեքսանդր Հայոց Հայրապետը շքախմբով, Ալ. Չաստխովի ընկերակցությամբ, ուղղվեց դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Արմյանական փողոցի վրա գտնվող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Վլադիկավկազի հնագույն եկեղեցիներից է, որի օծումը կատարվել է 1843 թ.: Ավելի քան մեկուկեսդարյա պատմություն ունեցող եկեղեցին սկզբնապես փայտաշեն է եղել: Այս փայտաշեն տաճարում 21 տարի շարունակ իր աղոթքն էր առկա մարված բարձրացրել Թերեքի ափերին արմատներ ձգած դեռևս նոր կազմավորվող ու փոքրաթիվ հայ համայնքը: Երկու տասնամյակ անց, սակայն, արդեն մեծաթիվ համայնքն առավել ընդարձակ աղոթարան կարիք ուներ, առավել ևս, որ բազմազգ Վլադիկավկազում հայոց եկեղեցին պաշտելի սրբավայր էր դարձել ոչ միայն հայերի համար:

Այն ժամանակ, 1862 թվականին, Աստիֆանի հայոց թեմը, որի կազմում էր Վլադիկավկազը, նոր բարակերպ եկեղեցի կառուցելու հարց է բարձրացնում: Իսկ արդեն 1864 թ. ճիշտ նույն վայրում, ուր փայտաշեն եկեղեցին էր, Սիմոն անունով ճարտարապետը սկսում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նոր շենքի կառուցումը: Շուտով վեր է հանում հնգանավ բազիլիկ եկեղեցին՝ զավթով և զանգակատնով: Եկեղեցու կառուցման գործում մեծ էր ավանդը Միքայել Լոբիս-Մելիքովի՝ Լորիս Մելիքյանների հայկական ազնվական տոհմի ականավոր ներկայացուցչի, որը 1860-1873 թթ. նշանակված էր Թերեքի կառավարիչ: Լինելով կրթական գործի մեծ ջատագով, Լորիս-Մելիքովը եկեղեցուն կից հիմնում է նաև ծխական դպրոց: Շատ շուտով եկեղեցին դառնում է հոգևոր ու մշակութային կենտրոն:



מדינת ישראל משרד המבחן והחינוך
מחלקת המבחן והחינוך
מחלקת המבחן והחינוך
מחלקת המבחן והחינוך



הנשיא אברהם ליכטנשטיין (ימין) מקבל את הספר "המדינה והחברה" מאת הרב אברהם יצחק הכהן קוק (שמאל).



Երջանիկ բարերախտությամբ, թե Աստծո կամոք, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին 160 փարիսների ընթացքում, շրջանցելով անգամ խորհրդային փարիսների անաստվածության պարտադրանքը, իր դոկտրինը միշտ բաց է պահել հավատարմությանն առջև: Այսօր էլ, անընդմադ փոփոխություններով, կանգուն է եկեղեցին: Վերջերս բարեկարգվել է եկեղեցու շրջափակը: Եկեղեցուն կից կրկին գործում է կիրակնօրյա դպրոց:

Նոյեմբերի 28-ին, Վլադիկավկազի հայոց եկեղեցու 160-ամյա հոբելյանի տոնակատարությանը մասնակցելու ու Վենափառ Հայրապետի օրհնությունը ստանալու համար, այսօրեղ էին եկել ոչ միայն Վլադիկավկազի, այլև շրջակա բնակավայրերի հայ հավատացյալները:

Վենափառ Հայրապետը շնորհավորեց բոլոր ներկաներին այս հոբելյանի առիթով՝ հղելով իր հայրապետական պարգաժն ու օրհնությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՐԵՆ Բ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրեցյալ եղբայրներ և քույրեր,

Աստծո ողորմածությամբ Մենք այսօր գտնվում ենք պատմական հողում Այսնների երկրի և հոգու անհուն բերկրանքով մասնակից ենք Վլադիկավկազի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու 160-ամյակի տոնակատարություններին:

Պատմությունը շատ կարևոր տեղ է զբաղեցնում մեր երկու փոքր ժողովուրդների կյանքում: Մենք խորապես գնահատում ենք և այսօր անկեղծ ուրախությամբ ենք հիշատակում այն պատմական առևտությունները, որ ունեցել են մեր նախնիները՝ սկսյալ հայոց Արարածես թագավորի և ալանաց Սաթենիկ արքայադստեր ժամանակներից: Մտաքին դարում, երբ Զրիստոսի առաքյալները քարոզում էին Հայաստանում, անմիջապես նրանց աշակերտներից Սուրբ Ավետարանի քարոզությունը լսեցին ալանաց իշխանները, ովքեր արդեն հայոց թագուհի դարձած Սաթենիկի հետ եկել էին Հայաստան: Նրանք ընդունեցին քրիստոնեություն և ի սեր Զրիստոսի նահատակվեցին հայոց հողում՝ դառնալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջին նահատակներից՝ Ս. Սուքիասյանք ընդհանուր անունով: Այսնների երկրում Հայ Եկեղեցու եպիսկոպոսները քրիստոնեություն են քարոզել 6-7-րդ դարերում: Նոր ժամանակներում ավելի սերտացան մեր ժողովրդի հարաբերությունները հիշատակներով հարուստ այս երկրամասի հետ: 18-րդ դարից սկսյալ հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ իրենց երկրորդ հայրենիքը գտան Ռուսական Կայսրությունում և մասնավորաբար՝ Նյուսիսային Օսեթիայում՝ մշտապես զգալով պետական իշխանությունների հոգածությունը, որու և օս ժողովուրդների եղբայրական սերը:

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովրդին մեկ անգամ չէ, որ վիճակված է եղել ապրել հեռու հայրենիքից, ուրիշ ժողովուրդների կողքին: Այս հյուրընկալ հողում էլ մեր ժողովրդի զավակները գտան իրենց նոր հայրենիքը,

հիմնեցին իրենց համայնքները՝ համեմատելի ապրելով մյուս ժողովուրդների հետ, իրենց ջանքերը քերելով երկրամասի սրեղծագործ ցանքին: Հավատքի մեր հոր՝ Մուրթ Գրիգորի անունով օժիւմ այս հիկողեցին, որ դարձել է համընդհանուր աղոթքի տուն ոչ միայն հայ քրիստոնյաների, այլն՝ օսերի, ռուսների և այլոց համար, վկան է ժողովուրդների բարեկամության: 160 տարեկան այս տաճարից աղոթք է բարձրացել **երկինք՝** լսելի Աստծուն, ինչ լեզվով էլ որ հնչի: Դրավի, մեկ Աստծու զավակները լինելու գիտակցությունից ծնունդ առնող սիրտ և փոխադարձ հարգանքի համակրոնական արժեքներն են երաշխավորը տարբեր ժողովուրդների համակցության՝ բազմազգ ու բազմակրոն աշխարհի տարբեր երկրներում:

Մենք գիրենք, որ Վրացիկավկազի Ս. Գրիգոր Լուսավորչից հիկողեցին արժանացել է նաև Վրացիկավկազի մահմեդական բնակչության հարգանքին:

Եկեղեցու օժման հոբելյանի հանդիսավոր տոնակատարության պիտի լինի Մենք ողջունում ենք Վրացիկավկազի բոլոր բնակիչներին և բնրում ենք հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները: Ջերմորեն ողջունում ենք և օրհնում հյուսիսային Օսեթիայի և ախազաի մեծապարիվ Ալեքսանդր Չապալովին և Վրացիկավկազի քաղաքապետ Միխայիլ Շաբալովին:

Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում հյուսիսային Օսեթիայում ապրող մեր ժողովրդի բոլոր զավակներին և Մեր գնահատանքը՝ հարավային Ռուսաստանի հայոց թեմի բարեջան ու բազմաթիվ առաջնորդ Գիրաշնորի Տ. Մովսես Կախկոպոս Մովսիսյանին: Հայրապետական Մուսքիլական Եկեղեցու հարավային Ռուսաստանի թեմ հայրապետական Մեր այցը մեծագույն խնդրության առիթ պարգևեց Մեզ: Բարեբաղն Աստծո կամոք այսօր արժանացանք մասնակից լինելու հայոց դարավոր այս եկեղեցու օժման հոբելյանական տոնին:

Միևնի բարեպաշտ ժողովուրդ, Ձեզ ենք բերում Ս. Էջմիածնի օրհնությունը և աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի Ս. հոգին Իր շնորհներով այս եկեղեցու խնկաբույր հարկից ներս միշտ հովանի լինի հավատացյալներին՝ անկախ նրանց ազգությունից ու կրոնական պատկանելությունից:

Եվ թող փառավորվի Մեր Տեր Կրիստոս Զրիստոսի անունը հավիտյանս հավիտյանից ամեն:

Նույն օրը, հոբելյանական տոնակատարությունից հետո, տեղի ունեցավ նաև հանդիսավոր երեկո, որին ներկա էին և՛ հարավային Օսեթիայի և ախազաի Ա. Չապալովը, և՛ Վրացիկավկազի քաղաքապետ Մ. Շաբալովը:

Ս. Մարգիսը՝ Պյատրիգորսկի 6-րդ քաղաքում

Ամենայն հայոց հայրապետի այցի հաջորդ օրը՝ նոյեմբերի 29-ը ևս հիշարժան դարձավ հարավային Ռուսաստանի թեմի հայ հավատացյալների համար: Այդ օրը Ամենայն հայոց Կաթողիկոսը մեկնեց Պյատրիգորսկ՝ օժելու Ս. Մարգիս նորակառույց եկեղեցին: Օժման սրբազան արաքողությանը ներկա էին Սրավոթայի երկրամասի փոխնահանգապետ Վ.



ՊՅԱՏԻՔՈՐԱՆԿԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ, ՕՏՈՒՆ ԸՆԹԱՇՊՈԽՄ





ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՌՈՒՄ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՏԱՎՐՈՊՈԼԻ ՈՒ
ՎԼԱՅԻԿԱՎԿԱՄԻ ԱՌԱՋՆՈՐԻ ՖԵՌՅԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ
ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԻԳՈՐ ՍՎԱՆԵՍՅԱՆԻ ՈՒ ՌԱՖԵՍԻԿ ԱՐԱՍՅԱՆԻ ՀԵՏ

Միխայիլենկոն, Հարավային Ռուսաստանում ՏՏ գլխավոր հյուպարտոս Ա. Գոմցյանը, Համախարհային Հայկական Միության նախագահ Ա. Աբրահամյանը, Կեդի իշխանությունների, ՌԴ փոքրեր համայնքների ներկայացուցիչներ, պետական-հասարակական գործիչներ, Հայաստանի և Ռուսաստանի ճանաչված մտավորականներ:

Տարիներ առաջ, երբ դեռ կանգուն չէր եկեղեցին, ու ընթացքի մեջ էին շինարարական աշխատանքները, այցելելով Պյատիգորսկի եկեղեցու շինարարակ՝ Լրջանկաիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսն ասաց. «Պյատիգորսկ» նշանակում է հինգ լեռների քաղաք, սակայն ես այսօր այս քաղաքը անվանում եմ «Շխարիգորսկ», որովհետև ես բերել եմ նաև վեցերորդ լեռը՝ Սուրբ Էջմիածինը՝ հավաքելի լեռ մեր ժողովրդի»:

Այս միտքը վերահասարակեց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ սրբագործելով Ս. Սարգիս եկեղեցին: Ինչպես նշեց Ամենայն Հայոց Հայրապետը, Ս. Սարգիսը, որի հիշատակը կապված է Կովկասում քրիստոնեության տարածման հետ, հաղորդակից է դարձնում հոգիներն ազնիվ ու մաքուր մտածումների՝ օգնելու կարիքավորին, լինի նա ուղղափառ, մահմեդական կամ մեկ այլ կրոնի հավատացյալ:

Ս. Սարգիս եկեղեցում շուրջ երկու ժամ փևած օծման արարողությունից հետո՝ մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը:

Հընթացս սրբական արարողության ներկաներին իր խոսքն ուղղեց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Ռուսաստանի Հայերի Միության Ստավ-րոպոլի մարզային կազմակերպության նախագահ Ռազմիկ Արամյանին, մոսկվահայ ճանաչված գործարար Իգոր Ավանեսյանին, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի Ստավ-րոպոլի մարզի փոխառնադատ Տեր Արամ քահանա Հունանյանին՝ եկեղեցու կառուցման գործում ներդրած ջանքերի համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՄԵՆԵՄՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՊՅԱՏԻԳՈՐՍԿԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»:

Միտքի բարեպաշտ հավատացյալներ,

Հավատո մեր Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մեր Հայրապետի այս պատգամը հաղթանակած թևածում է այսօր այստեղ, Լորակառույց հայկական եկեղեցու կամարների ներքո:

«Եկեք կառուցենք լուսի Ս. Խորանը»:

Այս հրավերով 1700 տարի առաջ Արարարի դիմաց, Միածնի Էջքի փնդում, կառուցվեց հայոց Մայր Տաճարը, որի Կանթեղի լուսից դարեր շարունակ իրենց լույսն առան հայոց եկեղեցիները աշխարհի բոլոր կողմերում: Այսօր գոհություն և փառք ենք մատուցում Աստծուն, որ Լուսավորչի Կանթեղի լույսով, ձեր հոգիներում Միածնի Էջքի փնդիցով հայկական ևս մեկ եկեղեցի իր օրհնության դռներն է բացում Պյատիգորսկ քաղաքում:

Լուսահողի մեկը նախորդ հայրապետը, երբ տակավին եկեղեցու շինարարության ընթացքում այցելում է Պյատիգորսկ և փեղեկանում է որ քաղաքի ակունք թարգմանվում է հինգ բարձունք, ասում է, որ քաղաքի կյանքում կառուցվում է վեցերորդ բարձունքը, որը լինելու է հայոց եկեղեցին: Արդարև, Տերունական Սուրբ Խաչը դեպի վեր պարզող, մեր աղոթքների երկինք բարձրացնող նվիրական բարձունք է եկեղեցին, որը ձեր հավաքի գործությամբ պիտի դառնա Այսկերպության՝ պայծառակերպության Թաքող լիռ:

Սուրբ Մարգհա եկեղեցին, ինչպես հայոց բոլոր եկեղեցիները, պիտի դառնա ձեր աստվածապարզ շնորհների և տաղանդների զանախանն ու շրմարանը: Այս խորաններից լույս պիտի հորդի ձեր հոգիներից ներս՝ հույսով ու սիրով շաղախելով ազգային-եկեղեցական ձեր կյանքը: Եկեղեցին նաև կամուրջն է քառասույն ձեր՝ այսօրվա՝ Ռուսաստանում ապրող հայության և մեր նվիրալից հայրենիքի միջև: Եկեղեցիով է, որ Ռուսաստանի օրինյալ հողի վրա պիտի ապրենք և նախապես որպես հայոց զավակներ, արժանի ժառանգորդներ մեր նախնյաց ու նախնիքի, որոնց հավաքով ու նվիրումով կերպվել է բարեկամությունը հայ և ռուս ժողովուրդների ու դիմացել ժամանակի բոլոր փորձություններին: Հարցը են բարեկամության պարտքները, որի վկայությունն է նաև նորակառույց այս եկեղեցին: Մենք հավաքում ենք, որ դուք, համախումբ Սուրբ Մարգհա եկեղեցու շուրջ, հավաքավոր ձեր կյանքով ու գործով նոր վկայություններ եք հավելելու սրբազան այդ բարեկամությանը, որն իբրև թանկ ժառանգություն փոխանցվել է ձեզ՝ այն սմբակներում և գորակներում պարզի հեղ միասին:

Միևնի բարեպաշտ հայորդիներ, ամենքիս համար ցնծալի օր է այսօր, երբ տեսնում ենք զարթոյալ մեր հավաքը և հայրենասիրությունը: Զարթոյալ՝ ինչպես Ռուսաստանում ապրող հայության սրբերում, այնպես և՛ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդի: Իր զավակներով է պայծառ Սուրբ Էջմիածինը, իր զավակներով գործող՝ Մայր հայրենիքը: Ուր էլ ապրենք՝ զավակներն ենք մեր հնագույն հայրենիքի ու հոգևոր մեր հայրենիքի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Ամուր պահենք ձեր հոգու մեջ հավաքն առ Աստված և հայրենյաց արժեքները, որպեսզի հավերժական լինի մեր ժողովրդի ընթացքը, և մեր ճանապարհները՝ օրհնված: Աստծո ողորմության շնորհով ապրել ենք ու կանք, Աստծուն ապավինած հաղթահարել ենք մեզ բաժին ընկած ամեն փորձություն և հաճախ հաղթություն ենք առել մոխիրներից: Ուրեմն, Աստծո հեղ մեր հաղթության պսակը միշտ բաժինը դարձրենք մեր ժողովրդի: Դարձրենք յուրաքանչյուր ձեր կյանքի պսակը՝ հյուսված հոգևոր-ազգային մեր արժեքներով, և Աստված կօրհնի ձեզ՝ անհաղթական ձեր կյանքում, և Աստված կօրհնի մեզ՝ հայրենական մեր կյանքում: Այս աղոթքով ու մաղթանքով պարզամտում ենք ձեզ, սիրելի զավակներ մեր Սուրբ Եկեղեցու, փարված մնացեք մեր հայրենի սուրբ հավաքին և ձեր հայացքը միշտ ուխտյալ պահեք հայրենիք տանող ճանապարհներին: Թող ձեր հոգում միշտ բարձրորդեն հեղ հավաքի մեր հոր՝ Սուրբ Լուսավորչի պարզամտ՝ «Եկեք կառուցենք լույսի Ս. խորանը»: Թող միշտ կանգուն լինի ու բազմամարդ Աստվածային Լույսի այս



ՆՈՐԱՐԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԸ
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՒՈՋՆԵՐՆԵՐ ԲԱԶՄՈՒԹՅԱՆԻ





ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՏԱՎԵՐԻՊՈՒՄԸ ԵՐԶԱՆԻ ՔՈՏԱՆԻ ԶԱՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆԻՄԵՐ

ևորած խորանը՝ Սուրբ Մարգիս եկեղեցին՝ օրհնություն հասկնելով ռուսաց հողին, ռուսահայոց կյանքին, զորություն ու արգասավորություն հավնելով հայ-ռուսական բարեկամությանը, որն այքի լույսի պես պահպանել է և մեր նախնիները:

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք քերում ամենքիդ, Մեր բարձր գնահատանքը՝ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ սիրելի Մովսես Սրբազանին և նրա առաջնորդության ներքո՝ թեմում սպասավորող հոգևորականներին:

Ամփոփելով իր խոսքը, Նորին Սրբությունը որպես գնահատանք՝ ավագ քահանայության պարվին արժանացրեց Պյարիգորսկի եոզևոր հովիվ Տ. Արամ քին, Հունանյանին՝ զարդարելով նրա կուրծքը քահանայական լանջախաչով, իսկ Մովսես Սրբազանին նվիրեց արծաթյա սկիհ:

Եկեղեցու օժման առիթով շնորհավորանքի խոսքեր ասացին նաև արարողությանը ներկա Սրավրուպոլի մարզի փոխնահանգապետ Վիտալի Միխայիլենկոն, Համաշխարհային Հայկական Միության նախագահ Արա Աբրահամյանը, Ռ. Հարավային մարզերում ՀՀ հյուպարտոս Արարատ Գոմցյանը: Իսկ Սրավրուպոլի և Վլադիկավկազի եոզևոր առաջնորդ Ֆեոֆան Եպիսկոպոսը փոխանցեց Մոսկվայի և Համայն Ռուսիայի Ալեքսի Բ Պատրիարքի մաղթանքը՝ նշելով, որ բոլոր կրոնների ձգտումն է համերաշխությունը, սերն ու խաղաղությունը: Ռուս Եպիսկոպոսը նորակառույց եկեղեցուն նվիրեց Աստվածամոր մի սրբանկար՝ վստահությամբ, որ աղոթարար հավատացյալին այն մշտապես հիշեցնելու է հայ և ռուս ժողովուրդների ու եկեղեցիների նդրայրության մասին:

Այցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն առանձին հանդիպում ունեցավ նաև Ֆեոֆան Եպիսկոպոսի հետ, որի ժամանակ քննարկվեց այն հարցը, թե Կարածաշրջանի հրապրապ խնդիրների լուծմանն ինչ համարեղ նպաստ կարող են բերել Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիները:

Պյարիգորսկում Նորին Սրբությունն այցելեց նաև Սրավրուպոլի շրջանի № 8 հայկական դպրոց: Իր օրհնությունը տրվով դպրոցականներին՝ Վեհափառ Հայրապետը ծանոթացավ դպրոցի առօրյային, պարմությանը, դիրեց երեխաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսը:

Նոյեմբերի 30-ին, ավարտելով այցը Հարավային Ռուսաստանի հայոց թեմ, Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ՆՆԴԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԱՆ ԱՐԹՈՒՐ ԲԱՂՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱՎ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ԲԱՂԵԱՆ,
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ**

Համայն հայության հաւատքի նուիրական օրրան լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատոր զաւակիդ:

Յարգարժան պրն Բաղդեան, անձնապէս ճանաչում ենք հաւաքաւոր հայորդոյդ եւ ի մօտոյ ծանօթ ենք Ձեր բարի, ասպտաճախանոյ գործերին: Այսօր ուրախ ատիւ ունենք Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին մարտոցած Ձեր ծառայութեան համար, որին տեղեակ ենք թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եգորաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով: Հաւաքաւոր Ձեր ոգու եւ ազնիւ գոհողութեան շնորհիւ ՌԴ մայրաքաղաք Մոսկուայում տարիներ առաջ կառուցուեց Սուրբ Գեորգ մարտիր, որ արարայայտութիւնն է ռուսահայոց եկեղեցական կեանքը միշտ աշխոյժ տեսնելու Ձեր նախանձախնդրութեան: Այսօր էլ Դուք շարունակում էք Ձեր յամենայնի զօրակցութիւնը թեմակալ առաջնորդին՝ Ձեր նիւթական եւ հոգեւոր կարողութիւնները ներդնելով յանուն Տիրախնամ թեմի շինութեան եւ պայծառութեան:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու նուիրումը բարի պատուներ է տուել նաեւ հայրենարեակ մեր ժողովրդի կեանքում: Ձեր ջանքերով ու հովանաւորութեամբ հիմնովին վերանորոգուեցին ու բարեզարդուեցին Գուգարաց թեմի Սուրբ Գայանէ եկեղեցին եւ յարակից շինութիւնները՝ կոչուած ծառայելու Ոսկեվանի եւ շրջակայ գիւղերի ազգաբնակչութեանը: Մենք անձամբ կատարեցինք եկեղեցու ժաման սրբազան արարողութիւնը՝ փառաբանական Մեր աղօթքը բարձրացնելով առ Աստուած, որ ազգս հայոց օրինուած է Ձեզ պէս բարեգործ գաւակներով, ովքեր հաւատարմոր եղով միշտ պատրաստակամ են իրենց ռազմականութիւնը եւ հնարաւոր աջակցութիւնը բերելու մեր ժողովրդին:

Յարգարժան պրն Բաղդեան, ի գնահատութիւն Մայր Եկեղեցուն եւ Նոր Նախիջեւանի եւ Ռոսաստրանի հայոց թեմին զօրակցելու Ձեր ազնիւ նախանձախնդրութեան ու արդեն իսկ բերած բազում ծառայութեանց, սիրով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Եզրաս Լալիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնաւոր Տէրը հաւաւոյ մեր հայր եւ մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրինութեան եւ հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, Ձեր Տիկնոջն ու գաւակաց՝ պարգեւելով բաջառողջ ու նրջանիկ կեանք եւ յարանորոգ յաջողութիւններ ազգանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

Ողջ լինուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Տոգոյն եւ յաւեր օրինեալ ի Մէնջումէն:

Օրինութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 4-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 218

**ԳԱՐԵԳՐՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐ ԲԱՆԱՏՈՒՐՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱԿԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱՆ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ՊԱՆԱՏՈՒՐԵԱՆ,
ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԻԱ**

Նամագգային մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանատր զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար տեղեկանալ Կենտրոնական Եւրոպայի Նայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Գիւր արքեպիսկոպոս Նազգաշեանից, որ Դուք բազում տարիներ, զօրացած Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ, որդիական պատրաստականութեամբ Ձեր ծառայութիւնն էք բերում Մայր Եկեղեցու սրբազան առաքելութեան իրականացմանը՝ օրինակ ունենալով սիրեցեալ Ձեր ծնողներին՝ ազգային բարերարներ Տէր եւ Տիկին Ճիպրայէլ եւ Ազատուհի Պահապտութեաններին: Յիրախ, աստուածահաճոյ կեանք ապրեցին Ձեր ծնողները, բազում բարի իրագործումներով ծառայեցին աստուածասէր մեր ժողովրդին եւ այսօր երկնքում վստահաբար ուրախ են իրենց հոգիները, որ Պահապտութեան ընտանիքի բարի աւանդները ծաղկում ու արգասատրուում են Ձեր գործերով:

Յաւկապէս գովելի եւ արդիւնաշատ է Ձեր վաստակը Լիոնի շրջանի հայութեան կեանքում: Ճրանսիա կարարած եովուապետական Մեր այցի ընթացքին Մենք ուրախութեամբ ականաւրես եղանք, որ Ձեզ պէս հայորդիների քաջեռանդ ջանքերով եւ հոգեւոր դասի ծառայութեամբ Լիոնի շրջանում աշխտյժ է հայ կեանքը եւ զօրաւոր՝ հայորդեաց որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Եկեղեցին եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ուրախ ենք նշելու, որ ազնիւ հոգով եւ սրտաբոխ նուիրատւութիւններով Դուք Ձեր ծառայութիւնն էք բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը՝ արժանանալով Երջանկայիշապակ Գարեգին Ա Ամենայն Նայոց Կաթողիկոսի Նայրական օրհնութեանը:

Յարգարժան պրն Պահապուրեան, բարձր գնահատելով Ձեր ծառայությունները մեր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Գիւր արքեպիսկոպոս Նազգաշեանի ազնիւ խնդրանքին եւ Վայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթքով Բարձրեայն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջամտոյ արեւշապութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրինի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհազարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւաքացեալներին:

Ողջ լիբոյր ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Տոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թոին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 215

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԱՆ ԲԱՀԱՏՈՒՐՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԱՆ ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ,
ՈՐ Ի ԼԻՈՆ, ՖՐԱՆՍԻԱ**

Համազգային մեր հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր գաւալիդ:

Գոռունակութիւն է Մեզ համար փեղեկանալ Կենտրոնական Եւրոպայի Հայրապետական Պապօրհնակ Գերաշնորհ Տ. Գիւր արքեպիսկոպոս Նազգաշեանից, որ Դուք բազում տարիներ, զօրացած Բարձրեայի ամենախնամ օրհնութեամբ, որդիական պապրաստականութեամբ Ձեր ծառայութիւնն էք բերում Մայր Եկեղեցու սրբազան առաքելութեան իրականացմանը՝ օրինակ ունենալով սիրեցեալ Ձեր ծնողներին՝ ազգային բարերարներ Տէր Եւ Տիկին Ճիպրայէլ Եւ Ազգապօռնի Պահապտութեաններին: Յիրաւի, աստուածահաճոյ կեանք ապրեցին Ձեր ծնողները, բազում բարի իրագործումներով ծառայեցին աստուածասէր մեր ժողովրդին Եւ այսօր երկնքում վստահաբար ուրախ են իրենց հոգիները, որ Պահապտութեան ընտանիքի բարի աւանդները ծաղկում ու արգաստուտրում են Ձեր գործերով:

Յատկապէս գովելի Եւ արդիւնաշար է Ձեր վաստակը Լիոնի շրջանի հայութեան կեանքում: Ֆրանսիա կապարած հովուապետական Մեր այցի ընթացքին Մենք ուրախութեամբ ականաւորես եղանք, որ Ձեզ պէս հայորդիների քաջեռանդ ջանքերով Եւ հոգևոր դասի ծառայութեամբ Լիոնի շրջանում աշխտյժ է հայ կեանքը Եւ զօրաւոր՝ հայորդեսց որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Եկեղեցին Եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ուրախ ենք նշելու, որ ագնի հոգով Եւ սրտաբոխ նուիրապտութիւններով Դուք Ձեր ծառայութիւնն էք բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը՝ արժանանալով Երջանկայիշապակ Գառեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրական օրհնութեանը:

Յարգարժան այրն Պահապուրեան, բարձր զնախադելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն, սիրով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Գիւր արքեպիսկոպոս Նազգաշեանի ազնիւ խնդրանքին եւ հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հաւապագ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առաքապէս շնորհագարդի մեր Եկեղեցու բոլոր բարեպաշտ հաւատացեալներին:

Ողջ լինուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենջ սմէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Դեկտեմբերի

յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 214

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳՈՆԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՆԿԿ - Ս. ՄԵՍՐՈՂ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՆԱՅՐԱԴԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՄԵՆԻ ՄԵԾԱԶՆԻԻ ՏԻԿԻՆ ԳՈՆԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նամայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի սիրելի գաւակիդ:

Միրելի Տիկին Գասպարեան, հոգու առանձնակի գոհունակութեամբ ~~ենք~~ անդրադառնում հայ երգարուեստի զարգացմանը շնորհաշար հայուհիւդ բերած հարուստ ու պերճախօս աւանդին: Տառնամեակներ շարունակ Դուք Երեւանի մայր բեմից մեր ժողովրդին էք մատուցել Ձեր բարձր ու գեղեցիկ արուեստը՝ երաժշտաւեր հասարակայնութեանը հիացնելով Աստուածաբան Ձեր ծայնով ու կարարողական բարձր վարպետութեամբ: Ձեր աւուրնը թանկ ու սիրելի է մեր ժողովրդի գաւակների համար եւ այսօր էլ, փարիներ անց, հայրենաց յիշողութեան մէջ անջնջելիօրէն տպաւորուած են Անուշի, Օլիմպիայի, Գոհարի, Մարգարիտի, Մանոնի եւ բազմաթիւ այլ դերերում Ձեր անկրկնելի կատարումները:

Դուք նուաճել էք նաեւ աշխարհի բազում հռչակաւոր բեմահարթակներ եւ հայ ու հաւաքաշարային երաժշտութեան գոհարների բարձրարուեստ կատարումներով հմայել օտարազգի հանդիսատեսներին: Ձեր գործունէութիւնը գնահատուած է միջազգային ամենաբարձր մակարդակներով՝ մեծ ճանաչում ու պատիւ բերելով Ձեզ նաեւ Նայրենիքից դուրս:

Ուրախ ենք իաստատել, որ Ձեր երգացանկում յաջուկ տեղ են գրաւել հայ հոգեւոր երաժշտութեան գանձերը, որոնք Դուք սովորել էք դեռեւս Ձեր ծննդավայրում, հայ կեանքի ամանութիւններով հարուստ Եգիպտոսում՝ մանուկ հասակից երգելով եկեղեցու դպրաց դասում: Ձեր երգը հնչել է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպէս աղօթք ու փառաբանութիւն առ Բարձրեալն Աստուած, Ով Իր առաջ օրհնութեամբ պարգեւել է Ձեզ երգչուհու փաղանդն ու շնորհները:

Երաժշտական Ձեր հմտութիւնները Դուք ամենայն սիրով ու նուիրումով բաշխել էք նաեւ բազմաաարիւր երիտասարդ երգիչ-երգչուհիների՝ երկար փարիներ դասաւանդելով Երեւանի Կոմիտասի անուան Պետական Կոնսերուատորիայում: Այսօր Ձեր սաներից շատերը

շարունակում են Ձեր առանդները եւ, ունենալով Ձեր բարի օրինակը, անխոնջ ծառայում հայ երգարուեստի զարգացմանը:

Մենազնիւ Տիկին Գասպարեան, հայ երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ՄԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պարույր բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ թարգմանիչ մեր մեծ սրբերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած Իր ամենագոր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Ձեզ՝ պարգևելով քաջառողջ արեւշարութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լիշուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրինեալ ի Մէնջ ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Դեկտեմբերի
յամի Տեառն ՉԻՈՅ եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
րեղ համարաւ 211



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթո-
ղիկոսի սրբապատե կոնդակով

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել են.

Վուֆանգ Գուսպ (Գերմանիայի հայոց թեմ)

Բալֆ Զիորդանտ (Գերմանիայի հայոց թեմ)

Գրիգոր Փիլեռեյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Բաֆֆի Զեպապյան-Զանդյան (Գերմանիայի հայոց թեմ)

Ալբերտ Սևինյ (Գերմանիայի հայոց թեմ)

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Ռաֆայել Բաբանյան (Գերմանիայի հայոց թեմ)

Բաֆֆի Պեդրիկյան (Գերմանիայի հայոց թեմ)

Շավարշ Նովասափյան (Գերմանիայի հայոց թեմ)

Հրայր Դեմիրճյան (Անգլիայի հայոց թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Սմբատ Տերունյան (Կիպրոս)

Վարդան ավագ բեն. Տյուրկերյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)



ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

«Ս. ՄԱՆԱԿ - Ս. ՄՆՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ԵՐԳՉՈՒՆԻ ԳՈՏԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՎ ՆԿԱՐԻՉ ՀԱԿՈՒԲ ՀԱԿՈՒԲՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Վեհաբանի հանդիսությունների սրահում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ հայ արվեստի բազմավաստակ մշակների Գոհար Գասպարյան-Լիև և Հակոբ Հակոբյանիև Հայ Եկեղեցու «Ա. Սահակ - Ս. Մնսրոպ» շքանշանով պարգևատրելու առթիվ:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պողոս-պալյանը՝ մեծապես արժևոճելով նրանց հայրենանվեր գործունեությունը: Գնահատանքի խոսքեր ասացին նաև արվեստագետ Շահեն Խաչատրյանը և Տիգրան Լևոնյանը՝ անդրադառնալով երկու նվիրյալների ստեղծագործական ուղուն և հայ երգարվեստին ու զեղանկարչությանը բերած իրենց մեծ ավանդին:

«Էջ Միածինն ի Հորե» շարականի երգեցողության ներքո բերվեցին և Նորին Արքուքյան ձեռամբ տրվեցին Գ. Գասպարյանին և տիար Հ. Հակոբյանին հանձնվեցին Հայրապետական սրբաբառ կոնդակները: «Ուրախ ենք հաստատել, որ Ձեր երգացանկում հատուկ տեղ են զբաղեցնում հայ հոգեւոր երաժշտության գանձերը, որոնք Դուք սովորել եք դեռևս Ձեր ծննդավայրում, հայ կյանքի ավանդույթներով հարուստ Եզիպտոսում՝ մանուկ հասակից երգելով եկեղեցու դպրաց դասում: Ձեր երգը հնչել է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ որպես աղոթք ու փառաբանություն առ Բարձրյայն Աստված, Ով Իր առաքյալ օրհնությամբ պարգևել է Ձեզ երգչուհու տաղանդն ու շնորհները»,- նշված է հանրահռչակ հայ երգչուհուն ուղղված Հայրապետական կոնդակում (տե՛ս էջ 16):

«Գեղանկարչության բարձունքները նվաճած Ձեր կրթվները անուն ու ճանաչում են բերում Ձեզ և հռչակ հավելում հարուստ ու հինավուրց մշակույթ ունեցող մեր ժողովրդին, որի արժանավոր և շնորհաշատ գավակն եք Դուք՝ Ձեր հոգում միշտ կրելով քրիստոնյա մեր ժողովրդի արժեքներն ու հայրենի ժառանգությունը: Տասնամյակներ շարունակ նշանավոր տարբեր քաղաքների հանրահայտ թանգարաններում ցուցադրվող Ձեր նկարները ծառայում են հոգեւորի գործըմանը մարդկանց սրտերում և բարու արգասավորմանը աշխարհում»,- ասվում է 80-ամյակի առիթով բազմավաստակ նկարչին շնորհված Հայրապետական կոնդակում (տե՛ս «Էջմիածին», Զ, էջ 10):

Պարգևատրելով երկու նվիրյալներին «Ս. Սահակ - Ս. Մնսրոպ» շքանշանով՝ Նորին Արքությունն իր գնահատանքն ու օրհնությունը բաշխեց ներկաներին:

«Հանդիսությունը որքան որ նպատակ է հետապնդում գնահատանքի արժանացնելու այն ծառայությունը, որ իրենք մատուցել են մեր ժողովրդին մշակույթի ասպարեզում, նույնքան նաև արտահայտելու մեր՝ հոգևորականներիս երախտագետ գագցումները, որ դժվարին տարիներին, երբ արգելված էր հոգեւոր քարոզչությունը մեր կյանքում, նրանք հասա-

րական կյանքից ներս տալիքին, գորացում, զարգացում պարզեցնելն ու հնչեցրեցին հոգեւոր մեր արժեքները»,- նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր խոսքում:

Իրենց երախտագիտության խոսքը Վեհափառ Հայրապետին ուղղեցին նաև շքանշանակիր վաստակաշատ Գոհար Գասպարյանը և Հակոբ Հակոբյանը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Կիկ. Թամարա Պողոսյանը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը և մշակույթի անվանի գործիչներ:

Հանդիսության գեղարվեստական մասում հոգեզմայլ կապարտումներով համոզեա եկտի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի սաները:





ՎԵՀԱԺԱՌ ԴԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ԵԶԱՆԸՆ
 Է ԴԱՆՁՆՈՒՄ ԴԱՅ ԵՐԳԸ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐ ԵԱՐՈՒՐԱԿ
 ԱԾԽԱՐՀԻ ԲԵՄԵՐԻՑ ԴՆԶԵՑՐԱՄ ԳՈՂԱՐ ԳԱՄԻՆՈՅԱՐԻՆ





ՄԱՆ ՀԱՅՈՒՅ ԵԿԵՐԵԼԵՑԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԵՆՅԱ ԼՎԻՐԱԾՈՒԹՅԱՆ
ՄԱՐԻ ԽՈՍԹԵՆ ԵՆ ՍՏՈՒՄ ՏԵՐ ԵՎ ՏՐԿԻՆ ԳՐԻԳՈՐԻԱՆՆԵՐԸ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՔՈՒՎԵՅԹԱԲՆԱԿ ԲԱՐԵՐԱՐ
ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆԻՆ**

Դեկտեմբերի 28-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո թարձր շրանշան շնորհեց քուվեյթահայ թարերար Կիրակոս Գույումջյանին, որն իր նպաստն է րերել Էրևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու թարեգարդման աշխատանքներին՝ պատրաստելով եկեղեցու աստիճանավանդակի ճաղաշարերը՝ ի եիշապակ իր հանգուցյալ հոր՝ Ներսես Գույումջյանի:

«Էջ Միածինն ի Տօրե» շարականի երգեցողությունից ետո Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Այնուհետք տեր և տիկին Կիրակոս և Միլվա Գույումջյաններին իր օրհնության ու գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «Մենք մխիթարություն ենք ապրում, որ հայրենիքից հեռու մեր սիրելի զավակներն այդպիսի նախանձախնդրության ոգի են դրսևորում և մասնակցություն բերում մեր հայրենաշինության գործին ու մեր հայրենիքում իրականացվող եկեղեցաշինության աշխատանքներին», - նշեց Նորին Սրբությունը:

Իր պատասխան խոսքում Կիրակոս Գույումջյանը խորին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ թարձր պարգևի արժանացնելու համար՝ նշելով. «Շատ ուրախ և հրճված եմ ինչպես նս, այնպես էլ իմ ընտանիքի մյուս անդամները, որ աօիթ և հնարավորություն ունեցա այս հրաշալի եկեղեցու շինարարության մեջ մի եամեստր քար գետեղելու: Թող այս եկեղեցին և մեր թղոր տաճարներն անսասան մնան իրենց թարոյական, հոգևոր և նյութական արժեքներով»:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**

ՔԱՐՈՋԽՈՍԱԿԱՆ

Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՄԿՈՂՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 դեկտեմբերի 2003 թ.)

«Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացալ ժողովուրդ.

Այսօր ես ցանկանում եմ իմ քարոզը սկսել՝ վերհիշելով և վերապատմելով այն պոռոները, որ ընթերցվեցին Ս. Պատարագի ընթացքում Ս. Ավետարանից.

Քրիստոս մի սեղանի շուրջ նստելով իր աշակերտների և Կարբեր մարդկանց հետ մի առակ է պատմում: Նա ասում է, թե ինչպես մի մեծատուն մարդ, մի հարուստ մարդ իր փան մեջ խնջույք է կազմակերպում և ճոխ սեղան պատրաստել փայխ: Երբ գալիս է խնջույքը սկսելու ժամը, ծառաները գալիս են իր մոտ և ասում. «Տեր, դառնա՞ր դատարկ է. որովհետև այն մարդկանց, որ մենք հրավիրեցինք, նրանք Կարբեր-Կարբեր պատճառաբանությամբ չենք խնջույքի: Նրանցից մեկն ասաց, թե մի ազարակ եմ գնել և պիտի գնամ Կեսնեի, մեկ ուրիշն ասաց, թե հինգ եզ եմ գնել և պիտի գնամ եզներին նայելու: Իսկ երրորդն էլ ասաց, թե նոր եմ ամուսնացել և չեմ կարող այժմ գալ» (Խմբ. Ղուկ. Ժ. 15-24):

Այդ ժամանակ փանտերը պատվիրում է ծառաներին. «Գնացեք և քաղաքի հրապարակներում ու փողոցներում զգնված բոլոր աղքատներին, բոլոր խեղանդամներին, կույրներին հրավիրեք այս խնջույքին»: Եվ երբ ծառաները կատարում են տիրոջ պատվերը, նորից ասում են, որ «տեր, սենյակը դեռ չի լցվել: Քո հրամանը կատարեցինք, սակայն դեռ շատ ազատ տեղեր կան»: Տերը պատվիրում է. «Ուրեմն դուրս եկեք քաղաքի պարիսպներից և օտար մարդկանց հրավիրեք, որպեսզի սեղանի շուրջ զգնված բազմականների տեղերը լրացվեն»: Այս առակը մի շարք հարցեր է առաջ բերում. այսինքն՝ եթե հրավիրյալները գալին, աղքատներին, խեղանդամներին և կույրներին տեղ չէ՞ր լինի այդ խնջույքին, և կամ եթե մեկը աղքատ կամ խեղանդամ չէ, նա չի կարող Աստծո արքայությանն արժանանալ, որովհետև այս պատմությունը փոխաբերական խմաստ ունի և այն ներկայացնում է Աստծո թագավորությունը:

Ընդհանհրապես երբ մենք ընթերցում ենք Ս. Գիրքը, պետք է շատ ուշադիր լինենք, որպեսզի այնտեղից առանձին մի հարված վերցնելով՝ եզրակացություններ չանենք: Այդ մեթոդն օգտագործում են աղանդավոր քարոզիչները, որոնք մեկ հարված, մեկ նախադասություն կամ մեկ բառ են վերցնում և սկսում են խեղաթյուրել Ավետարանի խմաստը, և հետևաբար ցանկացած բառ և ցանկացած պատմություն մենք պետք է փորձենք ամբողջական կոնտեքստի մեջ տեսնել, թե ինչու և ինչ պայմաններում Քրիստոս արտասանեց այդ խոսքերը:

Մենք երբ կարդում ենք Ավետարանի այդ առակին նախորդող փողերը, փեսնում ենք, թե Քրիստոս ինչ է ասում. «Երբ ճաշ կամ ընթրիք ես փալիս, մի՛ կանչիր ո՛չ ըտ բարեկամներին, ո՛չ ըտ եղբայրներին, ո՛չ ըտ ազգականներին և ո՛չ էլ ըտ հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չիրավիրեն և քեզ հատուցում լինի» (Ղուկ. ԺԴ. 12): Ուստի Տերը պարզվորում է. «...կանչիր աղքատներին, կաղերին ու կույրերին և նրանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն»։ Այնուհետև Քրիստոս ասում է. «Ես ձեզ հիմա մի առակ պիտի պատմեմ, որը նմանվում է Աստծո արքայությանը»։ Այսինքն՝ մենք այսօրեղ գործ ունենք մի պատմության հետ, որ Աստծո արքայությունն է ներկայացնում։ Անշուշտ, երբ բոլոր հրավիրյալները գային, Աստծո արքայությունը դեռ դատարկ կմնար, որովհետև Աստծո ներողամտությունն անսահմանափակ է և Աստծո արքայությունը սահմաններ չունի, այնպեղ րեղ կա բոլորի համար, ովքեր ցանկանում են քայլել այն ճանապարհով, որ գնում է դեպի Աստծո արքայությունը։

Այսպեղ պետք է անդրադառնանք և հիշենք, որ Աստծո արքայությանն արժանանում են ոչ թե նրանք, ովքեր արտաքուստ իրենց արղար են ձևացնում, ոչ թե նրանք, ովքեր հասարակության մեջ երևում են իբրև բարեպաշտ անձնավորություններ (հիշենք փարիսեցու և սամարացու առակը), այլ նրանք, ովքեր իսկապես մեղա են գալիս, ովքեր մեղանշում են, զգում են կատարած մեղքը և ներողություն են խնդրում։

Աստծո արքայությանը կարող են արժանանալ ոչ թե նրանք, ովքեր որ առերևույթ փորձում են հաշտ ու խաղաղ հարաբերություններ ստեղծել իրենց շրջապարի հետ՝ իրենց հոգում ծածկելով իրենց նենց էությունը, այլ նրանք, ովքեր ընղվզելով հանղերձ իրենց կարծիքով թվացող անարղարությունների դեմ, շարունակում են ընթանալ այղ նեղ ճանապարհով, որ տանում է դեպի Աստծո արքայությունը։ Եվ բնական է, որ Աստծո արքայության մեջ րեղ կա բոլորիս համար։

Ներքին մեծ խորհուրղ ունի և այն իրողությունը, որ այսօրվա հետի համընկավ Ավետարանի հիշյալ հարվածի ընթերցվածը, երբ մենք այժմ դեկտեմբերյան երկրաշարժի 15-րղ տարելիցի շեմին ենք։ 15 տարիներ առաջ Աստված մի անգամ ևս փորձեց մեզ, փորձեց մեր ժողղվղղին։ Մեր ժողղվղղը, որ 1700 տարիներ ընթացել է այն ճանապարհով, որով կանչում է Աստված, մեր ժողղվղղը, որ միշտ իր արղուն է թափել և իր կյանքն է գոհել իր հավարքի համար, իր հայրենիքի համար, րեսնում ենք, որ հարաբն ենթարկվում է փորձությունների։

Կարող ենք ասել, որ բավական չե՞ն այս փորձությունները, արղոյ՞ք 2000 տարիներ շարունակ Աստված չկարողացավ հասկանալ, որ մենք Իրեն նվիրյալ ժողղվղղն ենք։ Եվ այսպեղ մեր առակը տալիս է պատասխանը։ Նսարավոր է, որ մենք մեզ քրիստոնյաներ ենք կոչում, հնարավոր է, որ օտարներն էլ մեզ քրիստոնյաներ են կոչում, սակայն ինչքանո՞վ ենք մենք իղական քրիստոնյաներ, արղոյ՞ք մեզ համար ապահղվղված է Աստծո արքայությունը, որովհետև մեր մարղկային կյանքի իմաստը այս աշխարհի վայելքները չեն, այս աշխարհի խաղաղղությունը և հանղիստը չէ մեր կյանքի իմաստը, այլ Աստծո արքայությանն արժանանալը, իսկ այնպեղ տանղղ ճանապարհը շատ դժվարին է, փշտր է նեղ։

Ս. Գրքի մեջ բաղմաթիվ անղամներ Աստված օրինակներ է տվել մեզ, թե ինչպես մեղանշում են մարղիկ, և ինչպես Աստված ներողամիտ է լինում։ Սակայն միշտ Աստված

պատժում է նրանց ներողամտություն ցուցաբերելուց առաջ: Հենց առաջին օրերից Ադամը և Եվան մեղանջեցին: Աստված պատժեց նրանց: Մակայն Աստված ուղարկեց Իր Միածին Որդուն, Իր Հուրյունն ուղարկեց, որպեսզի Նա խաչվի և մեզ ցույց տա այն ճանաչալիքը և հնարավորությունը, որով մենք կարող ենք փրկվել:

Այս մտածումներով է սիրելի հավատացյալներ, որ մենք պետք է վերաբերվենք այն ահավոր ժողովրդությանը, որ տեղի ունեցավ 15 տարիներ առաջ: Այդ երկրաշարժն այնքան եզոթ էր, որ ի վիճակի էր եիմնաքայտակ կործանելու հյուսիսային շրջանները Հայաստանի: Մակայն, հավանաբար, Աստծո նկատմամբ ունեցած մեր հավատն էր, որ պահպանեց այն: Քանդվեց, սակայն չկործանվեց: Եվ մենք մի անգամ ևս ցույց տվեցինք ամբողջ աշխարհին հավատարմությունը մեր Աստծո նկատմամբ. մենք չընդվզեցինք, այլ սկսեցինք բուժել այն վերքերը, որոնք պատճառվել են մեզ այդ օրը:

Այսօր, հավարտ Ս. Պատարագի, պիտի կատարվի Հոգեհանգստյան, պաշտոն բոլոր նրանց հոգիների համար, ովքեր իրենց հոգին տվեցին երկրաշարժի օրերին:

Միաժամանակ, սիրելի հավատացյալներ, փխտոր մի լուր ունեմ ձեզ հաղորդելու, որ մի քանի օրեր առաջ Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանկարծամահ եղավ Հայ Եկեղեցու եռգևորականներից մեկը, հավանաբար ձեզ բոլորիդ ծանոթ՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը: Եվ հավարտ Ս. Պատարագի, հոգեհանգստի ընթացքին, մենք պիտի աղոթենք նաև Մեսրոպ Սրբազանի հոգու հանգստության համար՝ խնդրելով Աստծուն, որ Նա խնջույքի Իր անսահմանափակ սեղանին մի տեղ հապկացնի Մեսրոպ Սրբազանին. ամեն:

**Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՀՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(9 դեկտեմբերի 2003 թ.)

*«Այսօր գաղիկն օրհնականն Յովակիմ եւ Աննա՝
հարուն մեզ զգնդն ընդունիչ զցօղն երկնային,
յորմէ հոսեաց անձրեւն կենաց՝
եւ բղխեաց աշխարհի աղբիւրն իմաստից»:
(Շարական)*

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացւոյնք ի Քրիստոս.

Իրապես այսօր մեզ ամենքիս եամար մեծ փոն է ուրախության, քանզի այսօր սաղմնավորվեց մեր հույսը, որից հոսեց կենաց անձրեւն և բխեց իմաստության աղբյուրն աշխարհի: Այո, այսօր փոնն է Սուրբ Աստվածածնի եղությանն Աննայից:

Աստծո անսահման ողորմությունն ու նպատակադիր նախախնամությունն էր, որ գրեթե ամենևին հույսը կորցրած ու առաջացած փարիքի բարեպաշտ Հովակիմն ու Աննան, հակառակ բնության օրենքներին, ի վերջո դուստր ունեցան: Ո՞րն էր այդ հուսո աղբյուրը, պատճառը և գրավականը, անշուշտ մշտնջենավոր աղոթքը և աներեր վստահությունն առ Աստված:

Հովակիմն այն աստիճան էր նախափութ, որ անգամ Տաճարում ընծա մատուցելիս պաշտոնյա բաժանան հրահանգում է ներկայանալ ամենավերջում: Դրանից ազդվելով՝ Հովակիմը փոխ չի վերադառնում ուխտելով չուրել և չխմել, մինչև որ Աստված չայցելի իրեն: Այս մասին իմանալով՝ Աննան սգո զգեստ է հագնում և րթվում աղոթքի ու պահեցողության: Այնքան մեծ էր Աննայի վիշտը, որ փսնելով, թե ինչպես են թոչուններն իրենց ձագերին կերակրում ու խնամում, լացակումած դիմում է Աստծուն՝ ասելով. «Վա՛յ ինձ, որ թոչուններն անգամ առավել են, քան ես, քանզի ձագուկներ ունեն, իսկ ես զրկված եմ այդ բաղձալի շնորհից»:

Փա՛ռք Ամենակարող Տիրոջը, Աննայի արտասովոր աղոթքը լսելի եղավ, և Աստված հաճեց զավակ շնորհել անդադար հայցողին: Նույն ավերիսը փրկեց նաև փառապալա Հովակիմին, որը խանդավառ հոգով շրապեց բազմաթիվ ընծաներ բաշխելու Տաճարին, բաժանաներին և աղքատներին: Աննան միաժամանակ ուխտում է, որ եթե զավակ ունենա, լինի փղա թե աղջիկ, միանշանակ պիտի ընծայի Աստծուն:

Սիրելի՛ հայրերդիք, սա լույ գեղեցիկ պարամություն չէ, այլ մեծ դաս և օրինակ է մեզ ամենքիս, բանզի ինչպես Եսայի Մարգարեն է վկայում՝ «Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի բեզ. մինչև դու խոսես, Նա պիտի ասի, թե՛ «Ահա հասել եմ» (Եսայի ԾԸ 9):

Նույնպես և դուք մի՛ հապաղեք դիմելու, կանչելու, հայցելու Ամենագթառարին՝ վասն ամենայն պիպոտից հոգվու և մարմնու»:

Աղոթքն է, որ վերակերպում է մարդուն և լսելի դարձնում անհատանելի թվացյալը Ճշմարիտ Աստծուն: Աղոթքը տալիս է իր օգտաշահ պտուղը՝ Նույսը:

Մաքիստը հղավ այն հուստ, այն խոստման մեծագույն գրավականը, որ տրվել էր Աստծո կողմից մեր հայրերին: Նրա աստվածանվեր ու աստվածավախ անձի մեջ են նշմարվում ու երևում հուստ ցուլերը, վասնզի ինչպես Աստծոց էր և Աստծուն ընծայվեց, նույնպես արժանացավ լինելու այն հուստ ընծան, որով պիտի ծագեր «Արեգակն արդար»՝ փրկագործության իրագործիչը՝ ինքը ճշմարիտ Փրկիչ Տիտու Ջրիստոս՝ լուծող վաղեմի խոստման:

Ինչպես որ Նովակիմի և Ամնայի աղոթքն ու բաղձանքն ինքնանպատակ չեղան, նույնպես և Մարիամ Աստվածածին հուստ ծագումը դարձավ, որովհետև նա էր այն եզակի անձնավորությունը, իսկապես մարդկության պատմության մեջ, որ հակառակ իր ազնավական սկզբնական մեղքի՝ ի ծննդենն ապրեց կապարյալ և հույժ օրինակելի, աստվածահաճո կյանքով: Նրա մեջ միայն զգացվեցին խոստման լույսը և հույսը, որոնք ի վերջո Աստծո կամոք տվեցին իրենց մեծագույն արդյունքը՝ փրկություն և հավիտենական փրկագործություն Ջրիստոսով:

Միքելինդի, այսու կարող ենք եզրակացնել, որ ոչ միայն այն բանի համար է ոգեկոչվում այս տոնը, որ Աստծո Միածին Որդուն լույս աշխարհ բերող Ամենասրբունի Նույսի հղացումն է Ամնայից, այլ նաև այս հրաշալիքով իրողությունը մեծագույն դասերից է, որ տրվում է մեզ, այն է, թե՛ աղոթքի հավատքով հասնում ենք այն երանելի վիճակին, որ հույս և անխափան խոստման սպասում է բերում իր երևից, որից էլ ի վերջո ծագում է փրկությունը և ի գործ դրվում փրկագործությունը: Այս երեք հանգրվանները հույժ կարևոր գործոններ են մեզ ամենեքիս՝ Աղոթքը, Նույսը և Փրկությունը, որոնց հաղորդ դառնալով՝ ամենայն իրավամբ մտնում ենք երանական վիճակի մեջ:

Այո՛, մեր Տեր և Փրկիչ Տիտու Ջրիստոս մեկ անգամ ընդմիշտ Շնորհք տվեց և փրկեց մարդկային ազգը, սակայն չենք կարող այս փաստը արձանագրել միայն և ապրել կրավորական կյանքով: Մենք ենք, որ պիտի ձգտենք, բաղձանք ու ջանանք այդ փրկության իրագործմանը, մենք պիտի կանչենք Տիրոջը, այն Տիրոջը, որ լսելուն պես անմիջապես տալիս է հույս ու հավատ ատ ի փրկություն: Իզուր չէ ասված. «Խնդրեցեք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցեք և կգտնեք, բախեցեք, և կբացվի ձեր առաջ» (Մատթ. է 7): Ավելի բան ստույգ ու փորձառությամբ ապացուցելի են այս սրբալիք խոսքերը, որոնք պիտի սեպենք յուրաքանչյուրիս հոգուց ներս, մեր սրտերի ու մարմնի մեջ:

Միքելի քույրեր և եղբայրներ, Հայ Եկեղեցին անբաղդատելի մեծություն է տեսնում Նույս Մարիամի մեջ, որ հակառակ սկզբնական մեղքի ծանրությանը՝ իր Որդու սիրով դարձավ առաջին փրկվածը, և իրենով արդեն ամբողջ մարդկությունն է, որ փրկված է: Մարիամն է, որ «այո՛» է ասում փրկությանը՝ ամբողջ մարդկության անունից: Այսպիսով մարդկությունը փրկության ճամփան է բռնում, երբ Տերն իր վրա է կրում Ս. Աստվածածնի մարմնի գգեստը: Ս. Նույսը գլխավոր միջնորդն է Տիտուսի և մարդու միջև, և նրա շնորհիվ մարդը ճանաչեց վերանորոգումը ու մարդկային բնության երկրորդ կյանքը: Ծիշո՛ւ է, մեկ Փրկիչ

կա, բայց փրկությունը լիապես ընկալված է Մարիամի կողմից, և իր ընթացքով է, որ մարդկությունն ընդունում է այն:

Աստվածածինը ճանաչում է սկզբնական մեղքը և, հետևաբար, փրկության կենսունակությունը, ուստի նա փրկված մարդկության, մարդուն դեպի իր Տերը տանող կատարյալ օրինակն է: Ս. Մարիամը՝ փրկության զավակը, որ ի վերուստ է ստանում իր նոր ծնունդը՝ Փրկչի զայուստով, նաև մայրն է փրկության, որովհետև նա ծնունդ է տալիս աշխարհի Փրկչին և այսպիսով վստահաբար մարդկային տեսակի փրկության գրավակաՆՆ ու միջնորդն է:

Եկնք, ուրեմն, այս վստահությամբ, բոլորս անխափր ուղղենք մեր աղոթքը Ս. Կույս Մարիամին՝ հայցելով նրա բարեխոսությանը, խնդրենք, որ մեզ էլ հաղորդ դարձնի իր հոգու կորովին, որպեսզի մեր մեջ էլ հղանա և ծնունդ առնի Հույսն ու Հավատը, սաղմնավորվի առաքինության պատուրդ՝ աղոթքով գարդարուն ու լուսավորյալ, և ի վերջո նրա միջոցով արժանանանք Աստծո սիրտյն և ճշմարիտ Փրկությանը:

Տև'ր Աստված, ինչպես որ շարականագիրն է վկայում, այսօր օրինակելի գառները՝ Հովակիմը և Աննան, լավեցին մեզ երկնային ցաղի ընդունելի գեղմը, որը մեր բոլորիս հոգադար մայրն է՝ Ս. Մարիամ Աստվածածինը, որից հոսեց կյանքի անձրևը և բխեց իմաստության աղբյուրը համայն աշխարհի. փա՛ռք ենք տալիս Զեզ՝ Ամենասուրբ Երրորդություն. Զո հրաշայի հոգածության և իսնսպառ սիրով լեցուն Զո կամեցողությանն ու ողորմությանը, այսօր, վաղը և հավեր. ամեն:

**Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ
ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ
(14 դեկտեմբերի 2003 թ.)**

*«Յաղթող և սուրբ հայրապետ, նման մեծին Մովսեսի»:
(Շարակնոց)*

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամեն»:

Այս շարականի փողերը գրվել է Ներսես Շնորհալի (XII դար) Հայրապետի կողմից՝ ավիրված Հակոբ Մծբնա Հայրապետին, ում հիշատակը երեկ փռնախմբեց Հայաստանյայց Եկեղեցին: Շնորհալի Հայրապետի շարականի մեջ Մծբնա Հայրապետը նմանեցվում է Մովսեսին, որն Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսից ազատեց և բերեց Ավելոյաց երկիրը, ինչպես նաև նմանեցվում է Ս. Հովհաննեսին, այն առաքյալին, ում խնամքին հանձնվեց Տիրամայրը: Շնորհալին միաժամանակ Պետրոս առաքյալի հետ է համեմատում Մծբնացի Հակոբ Հայրապետին որպես առաջնորդ Եկեղեցվո:

Շարականի մնացյալ մասի մեջ նույն ձևով նկարագրվում են այն հրաշքները, որոնք նա գործել է. Նոյյան փառանքի մասունքի Մասայաց բարձունքին հրեշտակի կողմից նրան փայլ, ինչպես նաև պատմվում են նրա բազում հրաշքները՝ որպես հրաշագործ մի անձնա-վորության: ՌՎ է Ս. Հակոբ Մծբնացի Հայրապետը. Գրիգոր Լուսավորչի հորաբերող որդին: Երբ խոսքով հայոց արքան Անանի կողմից դավաճանաբար սպանվեց, Գրիգորը փախցվեց Կեսարիա, և պարմությունն ասում է նաև, որ Հակոբը ևս Գրիգորի հետ փախցվեց Կապադովկյան Կեսարիա: Այնպեղ միասին մեծացան և քրիստոնեական կրթություն ստացան: Սուրբ Հակոբը մի ճգնադ, ճգնավոր էր, որ ամռանը իր քարոզությունից հետո դաշտերի մեջ ննջում էր գիշերները և ձմռանը քարայրների մեջ էր բնակվում:

Ասվում է նաև, թե նա մեծ հրաշագործ էր: Երբ Մծբնի գնաց Մելիպոս իր ճգնավոր եղբորն այցելության, այնպեղ Մելիպոսը մարգարեացավ և ասաց. «Դու, Հակոբ, շուրտով Մրծբնին վրա պիտի դառնաս եպիսկոպոս»: Բայց մինչև եպիսկոպոս դառնալը նա հրաշքներ գործեց ժողովրդի համար: Ամենագլխավոր հրաշքներից մեկն այն է, որ երբ Մեծն Կոստանդինոս կայսրը վախճանվեց, պարսից արքան գործ հավաքեց քրիստոնյաների դեմ արշավելու համար: Նա հասավ մինչև Մծբն և քաղաքի ժողովուրդը խնդրեց Հակոբ Հայրապետին, որպեսզի նա աղոթե իրենց քաղաքի փրկության համար: Սուրբ Հակոբը մի բարձունքի վրա ելած՝ բարձր ձայնով, ձեռքերը պարզած աղոթեց: Եվ ո՛վ հրաշք: Հանկարծ վայրի թունավոր մեղուներ, պարսեղով լեցուն, կհարձակին արշավող բանակին վրա, և բանակը առանց զենքի դիմելու կնահանջե և կփախչի: Ահավասիկ Աստծո կարարած հրաշքներից մեկը մեր կյանքի մեջ:

Ասում են, թե ինքը ճգնավոր էր և հաճախ կարծում էին, որ մուրացիկ է կամ թափառական: Մի անգամ քաղաքից քաղաք ճգնալիս ճանապարհին պետք է անցներ գետը: Հարցրեց

այնքնը զգրնվող մարդկանց. «Ո՞ր է ծանծաղույրը, որպեսզի անցնեմ»: Ծաղրանքով նրան ասացին. «Վերադառնա՛ր փոռ, վրան նստի՛ր և անցի՛ր»: Իսկապես նա վերադառնա՛ր փոռը, վրան նստեց և, ո՛վ հրաշքը, հասավ մյուս ափը: Բոլոր ծաղրողները, վրան ծիծաղողները զարմացան. թե ի՞նչ հրաշքով լեցուն աստվածաբան անհար է նա, որ վերադառնա՛ր վրա նստա՛մ մյուս ափը հասավ. առանց այիքների մեջ ընկղմվելու:

Նիկիտ 325 թ. ժողովին ևս մասնակցել է Ս. Հակոբ Մծրնացին Հայոց Արիստակես Հայրապետի հետ: Եվ այնքնը մեծ գովասանքով են անդրադարձել իր խոսքերին, աստվածաբանական իր բարձր հասկացողությանը, որովհետև այդ ժողովի ընթացքին Արիտակեսության դեմ պայքար մղվեց: Կոստանդինոս Մեծի հրավիրած այդ ժողովի մեջ 318 եպիսկոպոսները նգովեցին Արիտի հերձվածը: Կոստանդինոս կայսրը ժողովից հետո ասում է, որ բրիտանական Եկեղեցին հիմնվում է երեք սյուների վրա, որոնցից առաջինը Եգիպտոսի Աղովկ ճգնավորն էր, երկրորդը՝ Նիկիտայոս Զմայռնացին, իսկ երրորդը՝ Հակոբ Մծրնացի Հայրապետը:

Անավասիկ, սիրելի հավատացյալներ, մի սուրբի կյանք, որ երեկ Հայաստանյայց Եկեղեցին փոխախմբեց՝ ցույց տալով Աստուծո գործությունը, Աստուծո հրաշագործ Աջը, Աստուծո՝ մարդկանց հանդեպ ունեցած անհուն սերը և Մուրբ Հոգու պարզեցած անսպառ շնորհքները մարդոց կյանքում և, հատկապես, այս պարագային Հակոբ Մծրնա Հայրապետին բաշխված:

Ովքե՛ր են սրբերը, որոնք պաշտամունքի առարկա դարձած են մեր կողմից, ովքե՛ր են սուրբ մարդիկը՝ ծանոթ կամ անծանոթ, Եկեղեցու կողմից ընդունված կամ անտեսված և չընդունված. որոնք մեր կյանքի մեջ գոյություն ունին: Այսօր ևս մեր կյանքի մեջ Մուրբ Հոգին հրաշագործ ձեռքը կղնե մեր վրա և շար-շարերուն տեսիլքներ կպարզեն: Եվ եթե մենք կարողանանք անդրադառնալ և գիտակցել այն գոռությունը, որ մեզի կտրվի ի վերուստ, այն ժամանակ է, որ կխոնարհինք, ծունկի կուզանք աստվածային գոռության առջև և կընդունենք Աստուծո շնորհքները՝ ըսելով, որ ծառաներ ենք անպիտան, ինչ որ հնարավոր էր այս կյանքի մեջ անել, ըրինք, ինչ որ չէինք կարող, ներե մեզի:

Իսկապես, սիրելի հավատացյալներ, սուրբերը մեկ-մեկ փարոսներ են մեր ալեկոծ, խավար կյանքի մեջ: Անունը լուսալու փարոսներ են՝ մեզ ցույց տալու իրենց կյանքով ճշմարտության, արդարության, խոնարհության ճանապարհով Աստուծո ծառայության միջոցները: Սուրբերն իրենց կյանքով մեզ համար օրինակներ են, որոնց կյանքը մենք պետք է հաճախ սերտենք և մեր կյանքը նմանեցնենք նրանց կյանքին:

Թող Ս. Հակոբի շնորհքները անպակաս լինեն մեր վրայից: Մենք այսօր ևս Ս. Հակոբը պաշտում ենք մեր Եկեղեցվո մեջ, և երեկ՝ Ս. Հակոբի փոռին, Ս. Հակոբ Մծրնա Հայրապետին Աջն էր, որ դուրս բերվեց թանգարանից և տարվեց Ս. Հակոբ Եկեղեցի՝ այնքնը իր օրհնությունը բաշխելու համար բոլորիս: Զմոռնանք, որ համաձայն ավանդության Ս. Հակոբ Մծրնա Հայրապետը մեր Ս. Գրիգոր Լուսավորչի հորաբրոջ որդին էր: Այդ պարճառով էլ Ս. Գրիգոր Լուսավորիչը և նա միասին դաստիարակվել էին նույն աստվածաբանների, նույն բրիտանյանների կողմից Կապադովկյան Կեսարիայում և դարձան լույս և ճրագ մեր կյանքում: Անունը լույսը թող Աստված չալսկսեցեն այսօր ևս, մանավանդ Ս. Հակոբի և Ս. Գրիգոր Լուսավորչի, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ

ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 դեկտեմբերի 2003 թ.)

Գոհություն և փառք եմ փայլա Ամենաբարձրյալն Աստուծո, որ այս փարի անգամ մը ևս ինձ բախարը վիճակվեց՝ պարարագելու աստվածակառույց այս եկեղեցւո կամարներին ներքո, հաղորդվելու Բրիսպոսի Մամնին ու Արյան և վերանորոգելու իմ ուխտը: Եվ իմ խորին շնորհակալություններս կհայտնեմ Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գալսեգին Երկրորդ Հայրապետին, որ առիթն ընծայեց այսօր անգամ մը ևս զգնվելու այսքեղ ուխտավորաբար հեռավոր Հնդկաստանէն, գալու՝ մենք ալ մեր հերթին մեր Ուխտի Պարարագը մաւրոցելու այսքեղ և վերանորոգելու մեր ուխտը Էջմիածնի հեփ:

*«Ո՛ր էր որդիք իմ սրբածին:
Եկայք առ մայրս ձեր հօսիկին
Որպէս օրէն Լ զաւակին
Տունը ինչամ Ձեր ծնողին»:*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Մտեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյանի այս խոսքերը իր «Ողբ առ Սուրբ Կաթողիկէին» պոեմն կարծես մեզ կհուշե, թե այսօր այդ իրավիճակը չկա և այսօր ամբողջությամբ արդեն փոխվել են ժամանակները, և փառք ենք փայլա Աստուծո, որովհետեւ չկա այդ դժբախտությունը, չկան այդ տխուր օրերը: Մտեփաննոս միտրոպոլիտ Օրբելյան իր այդ ընդարձակ պոեմի մեջ կնկարագրե Ս. Էջմիածնի լքալ վիճակը հատկապէս XIII դարուն, երբ ինք կտրուկորէր դեպի Կիլիկիա, կանցնի Էջմիածնէն և կտեսնե Էջմիածնի լքալ վիճակը և, ցավով, արյունոտ սրտով կգրե իր պոեմը, կողբա Էջմիածնի այդ լքալ վիճակին և կաղօթե, որպեսզի գավակները վերադառնան, խնամք փառեն իրենց ծնողին:

Պատմութենէն մեզ հայտնի է, հատկապէս Արշակունյաց թագավորութենէն ետք, թե ինչպիսի օրեր ապրեց Հայաստանը և հատկապէս Ս. Էջմիածինը: Ունեցավ իր վերիվայրումները, ունեցավ իր փխուր օրերը: Չեզանից շարքեր նույնիսկ կարող են վկայել հատկապէս 20-ական թվականներու կեսերէն մինչև 40-ական թթ., թե ինչպիսի վիճակի մեջ էր Հայաստանը և հատկապէս Մայր Աթոռը: Սակայն այդ բոլոր դժվարություններուն Ս. Էջմիածինը տոկաց, հաղթահարեց այդ բոլոր դժվարությունները:

Այսօր մենք մեր աչքերով կտեսնենք, թե ինչպիսին է Ս. Էջմիածինը, թե ինչպէս վերանորոգված է, կանգուն է և կդիմանա բոլոր դժվարություններուն:

Մենք ալ այսօր մեր հերթին որպէս ուխտավորներ, որպէս գավակներ կուգանք հեռավոր Հնդկաստանէն՝ աղօթելու և, ինչպէս Մտեփաննոս Օրբելյան կըսե, «որպէս օրէն Լ զաւակին»՝ գալու որպէս ուխտավոր: Մենք ալ այդ գավակներէն ենք: Հոգեկան մեծ ուրա-

խորթամբ եկած ենք հետավոր Հնդկաստանեն, պարսկական հնդկահայոց այն մեծ զաղութեն, որ նույնիսկ կարող ենք հպարտությամբ ըսել՝ Ս. Նազարեթ հայոց եկեղեցին առաջին բրիստոնենական կառույցն է ամբողջ Կալիֆոռնիայի մեջ:

Այսօր նույնպես ան կանգուն է, որովհետև իր հայացքը միշտ ուղղել է դեպի Էջմիածին, որովհետև միշտ սնվել է Էջմիածնով և իր կապը միշտ հաստատուն է պահել Էջմիածնի հետ, որովհետև հայորդիները վստահ էին, որովհետև Հայաստանյայց Եկեղեցին այն խաղաղ նավահանգիստն է, որտեղ կարող է հայ հավաքացյալը իր հոգու հանգիստը գտնել միայն ու միայն Հայ Եկեղեցու կամարներու ներքև: Եվ ահա այդ հավաքում է, որ մենք եկած ենք անգամ մը ևս մեր հավաքի ուխտը նորոգելու, եկած ենք անգամ մը ևս հաղորդվելու Քրիստոսի Մարմնի ու Արյան հետ, եկած ենք անգամ մը ևս Էջմիածնի Իջման խորանի առջև ծունկի գալու, աղոթելու:

Հակառակ մեր նոսրացած թվերո՝ Հնդկաստանի մեջ կպահենք մեր Լույսունք, որովհետև կնայինք Ս. Էջմիածնին և կստանանք մեր գործությունը, կստանանք մեր հավաքի ուժը, կստանանք Լուսավորչի կանթեղին լույսը, որ Արագածի բարձունքեն կանգնած կլուսավորեն Հայաստան աշխարհը, և մենք նույն ջախի լույսով կգորանանք և մեր հայացքները կուղղենք դեպի Էջմիածին: Թեպետև 1700 տարվան հնություն ունի Ս. Էջմիածինը, բայց իր երիտասարդ գահակալով՝ Ամենայն Հայոց Հայրապետով, երիտասարդ հոգևորականությամբ, ժրջանորեն գործող ճեմարաններով վերածնված է, պարտասպ է տալու հոգևոր սնունդ իր բոլոր թեմերուն, և շարականագրի բառերով կրնանք ըսել.

«Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի», որովհետև քո զավակները ամենուրեք կանգնած են և հպարտությամբ կնային Հայաստան աշխարհին, որովհետև այլևս չկան այն դժվարությունները, ինչ անցյալին կային: Կան այսօր նորանոր դժվարություններ, սակայն այդ բոլորը կարելի է հաղթահարել միայն ու միայն հավաքի գործությամբ: Այսօր մենք կարող ենք հպարտությամբ ըսել, որ մեր հայրենիքը այլևս ողբի, որբի, լացի հայրենիք չէ՝, որովհետև մեր հայրենիքն այսօր հույսի և լույսի հայրենիք է, մեր հայրենիքը հպարտության աշխարհ է, և այդ հայրենիքի մեջ, Արարաբի փեշերուն կանգնած է Ս. Էջմիածինը՝ իր լուսո խորանով լուսավորելու իր զավակներին, որպեսզի չջնդվեն, չխտորվեն, որովհետև գառան զգեստով գայլեր կմտնեն ան մեր զավակներուն՝ հեռացնելու համար մեր զավակները Մայր Եկեղեցին:

Պետք չէ թույլ տալ, պետք է վանել այդ բոլորը, որովհետև մեր Մայրը 1700 տարի մեզ խնամք տարավ, 1700 տարի նշավ մեր պաշտպանը: Եվ այսօր ժամանակն է, որ մենք ոչ թե գանք խնամք տալու, այլ ստանալու անոր օրհնությունը՝ պայքարելու բոլոր դժվարություններուն և փառք տալու Աստուծո՝ ըսելով. «Փառք քեզ Աստուած, որ պարգևեցեր զօրս այս բարևաւ եւ խաղաղութեամբ. ամեն»:

**Տ. ՄԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ՔԱՐՈԶՐ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱՄԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱՍԱՄԱՐԿԱՎԱԳԻ ՏՈՆԻՆ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(25 դեկտեմբերի 2003 թ.)

*«Զի ոչ կթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝
նա է ընդդէմս, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ»:
(Բ Կորնթ. Ժ 18)*

Միեկի հավաքացյալ ժողովուրդ,

Եկեղեցին Աստծո սրբոժամ կառույցը, հաստատությունն է ն նրա հիմքը հավաքին է. և այս հաստատությունը պահելու, վարելու և նաև նրա գործունեությունը համակարգելու համար անհրաժեշտ են պատրաստված և մանավանդ հավաքով առկայություն սպասավորներ: Այդ իսկ պատճառով Եկեղեցին ձեռնադրության կարգով պատրաստված և ուսյալ ու ամենակարևորը՝ հավաքով քրիստոնյաներին հրավիրում է սպասավորության և այդ ձեռնադրությամբ նաև կազմվում է պաշտոնությունը մեր Սուրբ Եկեղեցու: Նույնն է նաև աշխարհիկ հաստատություններում, սակայն, ի տարբերություն Եկեղեցու, ուր հիմքը կրոնականը և բարոյականն է, այն շատ անգամ պակասում է աշխարհիկ հաստատություններում:

Ինչքան բարգավաճեց, տարածվեց Եկեղեցին, ինչքան առավել ընդարձակեց իր առաքելության և գործունեության շրջանակները, այնքան փոխվեց Եկեղեցին և փոխվել է Քրիստոսից հեկո ժամանակների ընթացքում, որը արդյունք է դարձրել ընթացքում մարդկային կյանքի զարգացման, ազգային սովորությունների և ավանդույթների, այդ թվում և վարչական:

Առաջին դարերի Եկեղեցու և նաև այսօրվա Եկեղեցու առանցքը Ս. Ավետարանի քարոզությունն է, նրա կենսական ուժը, և դա կատարում էին առաքյալները՝ ստացած այդ իշխանությունը հավասարապես մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Սակայն երբ ավելի ընդարձակվեց նրանց գործունեության շրջանակները, երբ այնևս կարիք ունեցան օգնականների, որովհետև Եկեղեցու գործունեությունը չսահմանափակվեց միայն ժողովրդի հոգևոր դաստիարակությամբ, այլ նաև օգնելու տեղերին, աղքատին, հիվանդին և այդ օգնության համար առաքյալներն ընդունեցին արժանավոր սպասավորներ Ս. Ստեփաննոս նախավկայի գլխավորությամբ, որոնք կոչվեցին սարկավագներ՝ սպասարկելու Ս. Սեղանին և օգնելու առաքյալներին:

Այո, դա էր նրանց սկզբնական պաշտոնը: Սակայն այսօր ևս, ինչպես կարդացվեց այսօրվա ճաշու ընթերցվածքում, որ Ստեփաննոս նաև քարոզչությամբ էր զբաղվում, քարոզում էր Աստծո խոսքն անվրդով, քաջ և հավատով առեցուն՝ հետևելով Տիրոջ այն խոսքին, որ Իր խոսքի համար կարող է նրանք էլ խաչ հանվեն, նահապտակվեն, ինչպես որ եղավ և իր պարագային:

Եկեղեցու պաշտոնյա կոչվելը դուրին և խաղաղ գործ չէ, կան բազմաթիվ արգելքներ և խոչընդոտներ, որոնք պետք է հաղթահարի Եկեղեցու պաշտոնյան իր կյանքի և գործունեության ընթացքին: Եվ կարծես մի պահ թվում է մեզ, որ անհնարին է այս բոլոր խոչընդոտները հաղթահարել, այս բարձունքներին հասնել: Մակայն, ինչպես ասացինք, Եկեղեցու հիմքը հավաքեն է, այդ հավաքեն է, որ մենք պետք է ունենանք, մեր պաշտոնեության հիմքը պետք է լինի, ինչպես ասում է Պաղոս առաքյալ, «Ոչ թե այն անձն է, որ իրեն ընտրում է, այլ այն, որին Տերն է ընտրում»:

Մենք ունենք մարդկային արժանիքներ, զարգացում գիտության մեջ, ճոխություն կամ հարստություն ու այլևայլ բարիքներ, սակայն դրանք շարքից են, որ մեզ արժանի դարձնեն Աստծո ծառայի կոչմանը: Մեզ պետք է նաև, որպես Աստծո ծառաներ, ամենակարևորը ոչ թե մենք ինքներս ընտրենք մեզ դեպի ծառայություն Մուրք Եկեղեցու, այլ նաև զգանք, թե այդ կոչումը, կանչը գալիս է Աստծուց, որ մենք ընտրված ենք Աստծո կողմից՝ ծառայելու այս Մուրք Եկեղեցուն՝ հավաքով և նվիրվածությամբ, ինչպես ասվում է նոր հեչած աղոթքի մեջ:

Մենք այսօր մաղթում ենք մեր նորոգ ձեռնադրյալ սարկավագներին, որ նրանք հեղինակեն այս առաքիլությանը: Եվ եթե մենք մեր ծառայության մեջ փկարանում ենք կամ մի պահ հուսալքվում, չպետք է մեղքը փնտրենք ուրիշների մոտ՝ ոչ միջավայրի, ոչ շրջապատի մարդկանց մեջ, այլ ինքներս մեր մեջ պետք է փնտրենք այդ փկարության և թուլության զգացումը: Ուրեմն մեր մեջ պակասում է կոչումը, որ մենք պետք է կոչվենք ծառայելու Մուրք Եկեղեցուն:

Մենք շնորհավորում ենք ձեզ, սիրելի սարկավագներ, սարկավագաց Գրիգորի այս առիթով և մաղթում ենք, որպեսզի դուք էլ որպես ուղենիշ ձեզ համար ընտրեք Ս. Ստեփաննոս նախավկայի կյանքը, որ ամբողջովին մարմնացումն է ծառայության Ս. Մեղանին և Աստծուն: Շնորհավորում ենք նաև ձեր ծնողներին, որոնք ձեզ դաստիարակեցին և հանձնեցին Եկեղեցուն ծառայության կոչումը: Շնորհավորում ենք նաև մեր երկու ճեմարանների Կոնստանտինը, դասախոսական կազմին, որոնք պատրաստեցին ձեզ, ջամբեցին և դարձրեցին կապարյալ սպասավորներ մեր Ս. Եկեղեցու: Եվ նաև մեր որդիական խոնարհությամբ շնորհավորում ենք Վեհափառ Հայրապետին, Ով հանապազ մտածում է այս Եկեղեցու պայծառության և զորացման մասին և մտածում է, որ այդ զորացումը և հաստատումը կլինի մեր միջոցով, մեր անսակարկ ծառայությամբ, հնազանդությամբ ու խոնարհությամբ և, ամենակարևորը, հավաքով, որը հիմքը պետք է լինի մեր ծառայության: Շնորհավորում ենք նաև մեր մյուս սարկավագներին Ս. Ստեփաննոսի Գրիգորի ամիթով՝ մաղթելով, որ Տերը նրանց ուժ և կարողություն փառ ծառայելու և, ինչպես աղոթքի մեջ է ասվում, արժանանալու քանանալության բարձր աստիճանին:

Թող Աստված իսկապես արժանի անի մեր բոլոր սարկավագներին քահանայության այդ բարձր աստիճանին: Թող Աստված ձեզ միշտ ուղեկից լինի, զոր ու գիշեր ձեզ հսկի և ձեզ պահպանի, հեռու պահի ամեն փոսակի վտանգներից, բայց նաև այդ պետք է լինի ձեր հավաքքով և ձեր հաստատական քայլերով դեպի մեր ազգային-եկեղեցական կյանքի պայծառ ապագան: Թող Աստված օրհնի մեզ ամենքիս այժմ և միշտ և հավիտյանս, ամեն:

Տ. ԳԻՄՍԿ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՄՈՒՐԱՂ-ՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 դեկտեմբերի 2003 թ.)

«Ցանտն Նոր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամեն»:

Միրելի հավաքացյալներ,

Երևի նախ անդրադառնանք այսօրվա առաւելին, և վերհիշելու համար կուգեմ ամփոփ կերպով անգամ մը ևս պատմել քանքարներու առաւելը:

Տիտուս կայսրներ, թե մեծաւարուստ մարդ մը երբ ճամփորդության պիտի երթար, իր ծառաներուն կբաժնէ քանքարներ, որոնք այդ ժամանակվա դրամական միավորն էին, արժեքը ունեին, և կթելադրեն, որ յուրաքանչյուրը հոգ տանի և վերադառնալեն հետո հաշիվը ներկայացնեն: Երբ այս մարդը կերթա իր ճամփորդության և կվերադառնա, առաջինը կենրկայանա՝ ասելով. «Առավասիկ քու տվածիդ վրա ես տասը ավելի շահեցա»: Տերը կգովն այդ ծառային: Երկրորդը կենրկայանա՝ ասելով. «Տիեզ ավելի շահեցա»: Անոր ևս կգովն: Իսկ երրորդը, որ քիչ մը ավելի, ըստ երևույթին, քաշվող ու վախկոտ մեկը եղած էր, կենրկայանա՝ ըսելով. «Տեր, գիտնալով, որ դուն խիստ մարդ ես և վախնալով, որ քու տվածդ ալ կարող է կորսնցնեմ, առավասիկ ես պահեցի և քեզի կվերադարձնեմ քու տվածդ ինչպես որ է»:

Տերն իսկապես կբարկանա անոր և իրմէն առնելով այդ մեկն ալ՝ կուտա տասն ունեցողին: Եվ Տիտուս կամբողջացնէ խաբը՝ ըսելով. «Այն, որ ունի, ավելին պիտի տրվի, իսկ ան, որ չի կրնար ունեցածը գործածել կամ չունի արդեն, ունեցածն ալ պիտի առնվի»: Այստեղ պետք է անդրադառնանք վստահաբար յուրաքանչյուրս գմեզ, մարդ ըլլալուն՝ քննելու համար, թե մեզմէ յուրաքանչյուրը ինչ կարողություններ կամ ինչ ձիրքեր ստացած է, տրված է իրեն Աստծո կողմէ, և ինչ ձևով այսօր կրնա օգտագործել կամ գործածել այդ կարողությունները իր նմանի բարիքին համար: Վստահաբար այսօրվա առաւել մեզի այդ կթելադրեն:

Իսկ տակավին եթե մենք կուգենք անդրադառնալ պահ մը, թե ինչ տարի անցուցինք մենք իբրեւ հայեր, իբրեւ քրիստոնյաներ, պիտի անդրադառնանք և պետք է որ խորհրդածնեք նաև, թե այս տարվա ստացած մեր դասերեն, այս տարվա մեզի տրվածն ինչ կըրնանք հանել ապագային պահպանելու համար 1700 տարիներն ի վեր գործող, ապրող այս ժողովրդի կյանքի մեջ: Վստահաբար այս մտածումով մենք պիտի ողջունենք և դիմավորենք մեր հավատքի հոր՝ Լուսավորչի մատուցելը սքանալու համար նաև անոր օրհնությունը Վեհապատ Տայրապետի կողմէ տրված և այդ օրհնությամբ գորացած շարունակելու համար մեր կյանքը՝ ըլլա այսպեղ՝ Մայր Տայրենիքի մեջ կամ Միությունի գանազան գաղութներու մեջ, ուր մեզմէ յուրաքանչյուրին բաժին ընկած է ծառայելու և աշխատելու:

Աղոթենք ուրեմն, սիրելի հավաքագյալներ, այսօրվա այս խորհրդով և այն վստահությամբ, թե 1700-ամյակի այս փառին չփակված, մենք արդեն երրորդած ենք և պիտի շարունակենք երրորդված պահել մեր ուխտը մեր Մայր Եկեղեցվո հետ, մեր Մայր Հայրենիքի հետ, որպեսզի կարենանք երկար ապրել հպարտությամբ ապրիլ թե՛ մեր անցյալի պատմությունը և թե՛ նաև գալիքը:

Թող Տերն օրենն ձեզ, փա կարողություն, իմաստություն և ուժ, որպեսզի շարունակենք ապրիլ ու պահպանել այն, ինչ որ մեր իրավունքն է. ամեն:

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՆԱՐԵԿԻ ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ

ՔՆԱՐԻԿ ՏԵՐ-ՂԱՎԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԶՐՈՒՅԱՊԱՏՈՒՄ ՎԱՐՔԻ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻՑ

Գրիգոր^{*} Նարեկացու գրական ժառանգությունը, վարքը և նրա մասին հյուսված ավանդությունները վաղուց արդեն գտնվում են հայագետների ուշադրության կենտրոնում: Գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, այդ թվում՝ ուշագրավ հետազոտություններ՝ նվիրված նրա վարքին և գրույցներին: Հատկապես մեծ ավանդ ունի այդ գործում հմուտ նարեկացիագետ, երջանկահիշատակ Պողոս խաչատրյանը: Նարեկացու վարքի և ավանդությունների մանրակրկիտ, համակողմանի քննությունը նրան հանգեցրեց այն եզրակացության, որ Նարեկացու մասին ավանդությունները ժողովրդական և վաճառական բանահյուսության արտահայտություններ են¹: Ըստ նույն հեղինակի՝ արդեն 13-րդ դարում գրված է եղել «Վարք և պատմություն արքայն Գրիգորի Նարեկացուն» 18 միավոր պարունակող գրույցների շարքը²:

Պողոս խաչատրյանից առաջ՝ 1969 թ. լույս տեսած «Ավանդապատում» Արամ Ղա-նալանյանն առաջինն բաժնով ներկայացրեց եկամուտ գրույցները՝ նրանում ընդգրկելով Հին և Նոր Կտակարանների համապատասխան նյութը: Միաժամանակ նա նշեց, որ շատ գրույցների աղբյուրներն անհայտ են³:

Մենք նույնպես անդրադարձել ենք Նարեկացու վարքին և նրան նվիրված ավանդու-թյուններին⁴ ու մատնանշել ուսումնասիրողների ուշադրությունին վրիպած ավանդաշարի այլ աղբյուրները: Պարզվում է, որ Գրիգոր Նարեկացուն նվիրված գրույցների համար, բացի Աստվածաշնչի կանոնական գրքերից, աղբյուր են ծառայել նաև Հիսուսի Տղայու-

^{*} Որպես զեկուցում կարդացվել է դեկտեմբերի 27-ին Ս. Էջմիածնում Նարեկի 1000-ամյակին նվիրված գիտաժողովում:

¹ Տե՛ս խաչատրյան Պ., Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 204:

² Տե՛ս նշվ. աշխ., էջ 184:

³ Տե՛ս Ղաճաղանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, Առաջաբան, էջ ԸԶԳ-ԸԴ:

⁴ Տե՛ս «Զորիկ Տեր-Ղևալթյան, Թովմայի Ավետարանի հետքերը հայ միջնադարյան գրույցներում», «Էջ-միածին», 1998, Դ, էջ 109, նույնի՝ Հիսուսի Տղայության ավետարանների արտացոլող հայ միջնադարյան գրա-կանության մեջ՝ Հայաստանը և քրիստոնյա Արևելքը գրքում, Երևան, 2000, էջ 333 և հջ.:

թյան պատմությանը նվիրված պարականոն ավետարանները: Ներկա հոդվածում կցանկանայինք այդ մասին խոսել ավելի հանգամանալից, հատկապես հայերեն թարգմանությանը մեզ հասած Նախավետարանի մասին:

Հայտնի է, որ Եկեղեցից, դարեր շարունակ պայքար մղելով տարբեր աղանդավորական շարժումների դեմ, անխնա ոչնչացրել է նաև նրանց զաղափարախոսությունն արտահայտող գրականությունը, այդ թվում և՛ պարականոնների մեծ մասը: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ այդ գրականությունը, մասնավորապես պարականոն երկերը, հայ հասարակության որոշ շրջաններում գործածության մեջ են եղել և, անշուշտ, պետք է որ ազդեցություն թողած լինեին հայ միջնադարյան գրականության վրա: Դա հատկապես վերաբերում էր ժողովրդական ակունքներ ունեցող, լայն զանգվածների ճաշակին և պատկերացումներին հարազատ վիպական արձակին, գրուցատիպ գրականությանը:

Հայ պատմիչների (Սամվել Անեցի, Մխիթար Այրիվանցի) ցուցակներում հիշատակվում են երկու պարականոններ, որոնք 531 թվականից առաջ Հայաստան բերվեցին նետորականների կողմից և թարգմանվեցին հայերեն՝ դա «Նախավետարան» կամ «Գիրք Տղայության Քրիստոսի» անվամբ հայտնի և Հակոբոս տեսուցեղոսը վերագրվող ավետարանն է, որը պահպանվել է հայերեն թարգմանությամբ, և Թովմայի Ավետարանը, որի լրիվ անվանումն է. «Նսրայելացի փիլիսոփա Թովմայի Պատմությունը Քրիստոսի մանկության մասին»: Այս վերջինը հայերեն ձեռագրերում չի պահպանվել կամ մինչ այժմ չի հայտնաբերվել⁵:

Ուսումնասիրողները պարզել են, որ Նախավետարանի հայերեն թարգմանությունը շատ է տարբերվում Արևմուտքում տարածված նույն ավետարանից և, ըստ երևույթին, սերում է արևելյան խմբագրություններից՝ արաբականից կամ պարսկականից⁶: Նրա հիմքում ընկած է Մանկության Ավետարանի այն բնագիրը, որի խմբագիրը, ըստ Տիշենդորֆի և նրան համամիտ Գ. Զարբաճալյանի, հետևում է Հակոբի և Թովմայի անվամբ գտնված անհարազատ ու ավետարանի անունը կրող գրություններին, ապա և այն ավանդություններին, որ տարածված էին ասորիների, պարսիկների և եգիպտացիների մեջ: Տիշենդորֆը հիշյալ ավետարանի առաջացման ժամանակը դնում է «մախքան արաբացիների օրենսգրքի ի հայտ գալը»⁷:

Հայերենում, ինչպես նկատում ենք «Գիրք Տղայության Հիսուսի» պարականոնը, իրոք, առնչվում է Թովմայի Ավետարանի հետ: Նախավետարանի 28 գլուխներից (առաջին խմբագրությունը⁸) առաջին 15-ը նվիրված են Մարիամի ծննդյան և մանկության, ապա նաև Հիսուսի ծննդյան պատմություններին (սա այն մասն է, որը թվանդակությամբ համապա-

⁵ Տե՛ս Անադյան Հ., Հայկական մատենագիտություն, Բ. Ա., Երևան, 1959, էջ XXIX-XXXI, նաև՝ Բ. Բ. Երևան, 1976, էջ 948-949:

⁶ Տե՛ս Զարբաճալյան Գ., Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1883, էջ 192: Меллер Н., Из истории поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей /Отд. Оттиск из «Записок Вост. Отд. Импер.Рус. Археол. Общества», т. 5, с. 2.

⁷ Տե՛ս Զարբաճալյան Գ., նույն տեղում, էջ 194:

⁸ Տե՛ս Թանգարան հայկական հիմ և նոր դարոսեանց, գիրք Բ.- Անկանոց գիրք Նոր Կտակարանաց. Հրտ. Եսայի Տայեցի: Վենետիկ, 1898, էջ 1-126:

տասխանում է Արևմուտքում տարածված Նախապետարանի ընդարձակ հունարեն բնագրի(ն), իսկ 16-րդ գլխից սկսվող մասը նվիրված է Հիսուսի մամուկությանը մինչև 18 տարեկան հասակը: Եվ այս մասում հանդիպում են մի շարք գրույցներ, առնվազն 5-6, որոնց գուգահեռները կան ման թովմայի Ավետարանում:

զուգահեռները կան մասն թովմայի Ավետարանում:
Նախավետարանն այլ պարականոնների մեջ ուրույն տող է գրավում: Հակառակ
մտան, որ «Գիրք տղայությանը» չի ամօցել կանոնիկ ավետարանների շարքը, այն եկեղեցու
կողմից չի մերժվել և դարերի ընթացքում Մարիամ Աստվածածնի, Քրիստոսի ծննդյան
գրությունները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-
ղաքացիները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-
ղաքացիները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-
ղաքացիները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-
ղաքացիները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-
ղաքացիները մեծ տարածում են գտել ինչպես եկեղեցու շրջանակներում, այնպես էլ քա-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԴԱԾԱԲԼԱՆԸ

երկի 30-ից ավելի ձեռագրեր:

Մենք հավանականությամբ կարելի է պնդել, որ Նախապետարանի հետ ծանոթ է եղել մահ «վարք և պատմություն» գրվածքի կազմումը: Այստեղ պետք է կրկին սնդորադատմանը Պոգոս խաչատուրյանի արդարացի կարծիքին, որ «վարք և պատմությունը» մի ամբողջական գեղարվեստական ստեղծագործություն է⁹: Եվ ավելացնենք, որ այդ երկի հեղինակն ամբողջությամբ հետևել է Նախապետարանի կառուցվածքին: «վարք»-ում, ինչպես և Նախապետարանում, Գրիգոր Նարեկացու պատմությունը սկսվում է վաղ մանկության շրջանում կատարված հրաշագործություններով և ավարտվում նրա գերեզմանի երկու հրաշագործություններով: Ընթացիկ է, Հիսուսի պատմությունը հասցված է մինչև 18 տարեկան հասակը: Հիսուսի և Նարեկացու հրաշագործությունները հիմնականում ընդգրկում են 7-12 տարեկանի ժամանակահատվածը: Երկուսում էլ բոլոր հրաշագործությունները համարակալված են, ունեն ի ենք վերնագրերը («վարքում»՝ ոչ բոլորը), ժամանակագրորեն հաջորդում են միմյանց: Թե՛ մեկում, թե՛ մյուսում Հիսուսը և Նարեկացին հրաշքներ գործում են տեղից տեղ փոխադրվելով: Տղայության ավետարանի գլուխները փաստագրում են այդ թափառումների վայրերը՝ Նազարեթից՝ ասորիների երկիրը՝ Վասն փոխելու ահտի և զնալու լեռերից Ասորոց», Ասորիքից՝ Վեդիկից՝ Քանանու, Իսրայելի, ի քաղաք Տապարիա» և այլն: Ծառ ուշագրավ է, որ երկուսում էլ գրույցն ավարտվում է հրաշագործի անհետանալով և փախուստով, իսկ երբեմն՝ կերպարամափոխությամբ (հմտ). Տղայության ավետարան. «զայս ասացեալ Յիսուսի, ել վաղվաղակի արտաքս և թագեալ ի նոցանէ», «եղել ի նոցանէ աներեւոյթ», «վարք և պատմութիւն». «Պարտ էր ոչ գիտել զգործս իմասուն է Նարեկացին,- «Եւ եղեալ զաղտ զնաց», կամ՝ «Պարտ էր, զի ոչ ոք գիտել զգործս իմ, այլ ոչ կարեմ կալ ի տեղիս այս»: Այնհայտ մտնություն կա Հիսուսի և Նարեկացու վարքագծերի մեջ: Բոլոր գրույցներում Նարեկացին, ինչպես Հիսուսը, ներկայացված է որպես ժողովրդի մասին հոգ տանող մարդ: Նա հանդես է գալիս մեկ հոտաղի, մեկ այգեպանի, մեկ երկրագործի, հասարակ ծառայի, ճամփորդի կերպարացնելով, որը կենդանացնում է մեռածին, անասունին, տունը լիացնում է մթերքներով, ժայռից ջուր բխեցնում և այլն: Բացի կառուցվածքից և Նարեկացու ընդհանուր նկարագրությունից, որոշ ավանդությունների համար նույնպես աղբյուր են ծառայել Նախապետարանի գրույցները: Այստեղ

⁹ Տե՛ս Խաչատրյան Պ., նշվ. աշխ., էջ 180:

կցանկանայինք ամերիադառնալ «Հիսուսը ներկարարի աշակերտ» ավանդությամբ: Հայկական ավանդություններում, ինչպես ցույց է տվել Արամ Ղանալանյանը, այն հանդիպում է ավելի ուշ շրջանի գրառումներով՝ Ծիրակի, Ղափանի, Ջավախքի բարբառներով¹⁰: «Վարքում» և Պ. Խաչատրյանի կողմից բերված Գրիգոր Նարեկացու մասին այլ ավանդություններում այն բացակայում է: Սակայն կա մեկ ուրիշ գրույց՝ գիհի ծառի մասին, որի աղբյուրը, ըստ իս, Նախավետարանի «Հիսուսը ներկարարի աշակերտ» ավանդությունն է: Ավետարանում բարկացած ներկարարը, տեսնելով, որ Հիսուսը խառնել է բոլոր գույները, նրա հետևից գցում է կոպիչը, որն ընկնելով գետին՝ անմիջապես կանաչում է¹¹: Գիհի ծառի մասին գրույցում 7 տարեկան հոտաղ Գրիգորը տնկում է զայրացած պառավի՝ իր հետևից շարժած անթոքը, որը կանաչում է ու վիթխարի գիհի դառնում: Մեկ այլ ավանդությունում Ջևիկ գյուղի կենտրոնում բուսած կանաչ և փարթած գիհին համարվում է հոտաղ Նարեկացու ճիպտը: Նախավետարանի նույն գրույցի արձագանքն է Ստեփանոս Հուսկան որդու վարքի (13-րդ դար) մի հրաշագործության պատմությունը: Մասվաճառը խնդրում է, որ Ստեփանոսն իր աղոթքներում հիշի նրա հորը, և, փորձելու համար սուրբին, իր հոր անվան փոխարեն տալիս է կոճիկ անուր: Ստեփանոսի աղոթքով մահմեդական մասվաճառի մահ կոճիկն է կանաչում: Ասեմք, որ Ստեփանոսի վարքի դեպքերը տեղի են ունենում նույն այն վայրերում, ինչ և Նարեկացու հրաշագործությունները՝ Արգեյան վանքում, որը գտնվում էր Վանա լճի հյուսիսում:

Սարգիս Հարությունյանը մեծ աղերս է գտնում Գիհի ծառի ավանդության և Փոքր Մհերի անվան հետ կապված մի գրույցի միջև: Փոքր Մհերը գնում է Հալաբա քաղաք, դառնում տերտերի մշակ և նրա փոխարեն ինքն է գնում կոփվ՝ մի անթաքոց (կրակխառմիչ) գցած թևին¹²: Նույն հեղինակը մատնանում է այն հատկանիշները, որոնք ապացուցում են պատանի Գրիգորի ժառանգական կապը ժողովրդական հերոսների հետ: Այդպիսիք են, ըստ նրա, Նարեկացու հրաշքներ գործելու բնական ձիրքը, ասել է՝ բնատուր աստվածային շնորհքը, հրաշքների մպատակային միասնությունը, այսինքն՝ հասարակ ժողովրդին նեցուկ լինելու հանգամանքը, վիպական հերոսի թափառումները¹³:

Ինչպես տեսանք, այդ նույն հատկանիշներով է օժտված Տղայության ավետարանի Հիսուսը, իսկ առաջին կետի՝ աստվածային բնությամբ, ընդգծված ձևով՝ Թովմայի Ավետարանի Հիսուսը: Այդպիսի նմանության մեջ՝ մի կողմից պատանի Հիսուսի, մյուս կողմից՝ ժողովրդական հերոսների, ոչ մի արտառոց բան չկա, քանի որ վանական բանահյուսությունը և ժողովրդականը փոխկապակցված են զարգացել, միայն թե այս դեպքում առաջինի վիպական ակունքներն ավելի հին են և գնում են դարերի խորքերը:

Եթե Նախավետարանը բավական լայն ճանաչում է ունեցել հայ հողի վրա, ապա նույնը չի կարելի ասել Թովմայի Ավետարանի վերաբերյալ: Վերջինիս մի քանի բնագործ հրատարակեց Կոնստանտին Տիշենդորֆը: Դրանք են. 1. հունական ընդարձակ բնագիրը,

¹⁰ Տե՛ս Ավանդապատում, № 801-ի Գ, Դ, է գրույցները և համապատասխան ծանոթագրությունները:

¹¹ Տե՛ս Գիրք Տղայութեան Քրիստոսի, գլ. ԻԵ՝ Թանգարամ հիմ և Ոոր դպրութեանց, Բ գրքում:

¹² Տե՛ս Սարգիս Հարությունյան, Գրիգոր Նարեկացին հայ ժողովրդական ավանդության մեջ՝ «Բաժ ի խորոց արտի առ Նարեկացի» գրքում, Երևան, 2003, էջ 214:

¹³ Տե՛ս նույն հոդվածը:

[illegible][illegible]

Սակայն ծանոթությունը Թովմայի Ավետարանի այլ լեզուներով պահպանված բնագրերի հետ ցույց տվեց, որ հայկական գրույցներում թեև շատ սակավ հանդիպում են ման Թովմայի Ավետարանից հայ բանահյուսությունում անցած և տեղայնացած ավանդություններ:

Ուշագրավ է Գրիգոր Նարեկացու կողմից աղավճիների կենդանացման մասին գրույցը, որն անցել է նաև մրա վարքի ծերեմցյան խմբագրության մեջ: Նույն ավանդությանը հանդիպում ենք Թովմայի Ավետարանի 2-րդ գրույցում, որտեղ մանուկ Հիսուսը կենդանացնում է կավածեփ ճճճողկներին: Քանի որ Նարեկացու կողմից աղավճիների կենդանացման գրույցը շատ հայտնի է, ստորև բերում ենք միայն Թովմայի Ավետարանի 2-րդ գրույցը.

• Երբ Հիսուս մահուկը Ռիմզ տալիս էր, նա խաղում էր առվակի ծանծաղուտի մոտ և ջրափոսի մեջ ջուր էր հավաքում: Իր մի խոսքով նա դարձրեց այն գուլալ: Եվ փափկացրեց

¹⁴ *St'u Evangelii Apocrypha... editi Constantino Tischendorf. Lipsiae, 1853.*

Հումաքան ընդարձակ խմբագրությունը՝ զուգահեռ ասորերեն և լատիներեն տարրաճեցումներով, գերմաներեն թարգմանությամբ տե՛ս՝ E. Hennecke, *Neu testamentische Apokryphen...*, Tübingen und Leipzig, 1904: Ռուսերեն լեզվով՝ *Евангелие детства. «Апокрифы древних христиан»*, Москва, 1989, с. 142.

¹⁵ Sh'u Meher A., *Erzählung des Thomas' E. Hennecke, Neutestamentische Apokryphen...* qnqnud, ٤٦ 66;

¹⁶ См. Пылин А. И., История русской литературы, т. I, Санкт-Петербург, с. 421.

կալմ ու ծեփեց 12 ճճճողուկ: Ծաբաթ օր էր, երբ մա դա արեց: Այնտեղ կային շատ երեխաներ, որոնք խաղում էին մրա հետ:

Բայց երբ ինչ-որ երբայեցի տեսավ, թե ինչ է անում խաղալով Հիսուսը, մա ամմիջապես զնաց մրա հոր՝ Հովսեփի մոտ և ասաց.

-Նայի՛ր, քո որդին ծանծաղուտում է և պղծեց շաբաթ օրը:

Երբ Հովսեփը զնաց այնտեղ և տեսավ (Հիսուսին), մա բղավեց.

- Ինչո՞ւ ես անում շաբաթ օրն այն, ինչը չպետք է անես:

Իսկ Հիսուսն ափն ափին խփեց և դիմեց ճճճողուկներին.

-Թո՛ղ:

Եվ ճճճողուկները ճլվլալով թռան-զնացին:

Երբայեցիները զարմացան՝ տեսնելով այդ, զնացին ու պատմեցին ավագներին, որ տեսան, թե ինչպես Հիսուս կատարեց իր ասածը¹⁷:

Ե՛վ Հիսուս, և՛ Նարեկացին կենդանացնում են թռչուններին: Մեկը ծեփում է ճճճողուկներ հրեաների հանգստյան՝ շաբաթ օրը, մյուսը՝ աղավճիներ է տապալկում ուրբաթ՝ հայերի պասի օրը, և ցանկանում հյուրասիրել իրեն այցելության եկածներին: Երկուսն էլ անթույլատրելի գործ են անում արգելված ժամանակ: Երկուսն էլ պարսավանքից հետո ափն ափին են խփում ու կենդանացնում թռչուններին: Դրանով հաստատվում է մրանց սրբությունը և գերբնական զորությունը:

Այստեղ պարզորոշ կարելի է ասել, որ պարականոնի գրույցը գրեթե անփոփոխ տեղանցեղ է և կապվել Գրիգոր Նարեկացու անվան հետ:

Մեկ այլ գրույց, որը մույնպես անցել է Գրիգոր Նարեկացու վարքի խաթեցիական խմբագրություն, կապված է Նարեկացու գերեզմանի հրաշագործ ուժի հաստատման հետ, որի շնորհիվ կենդանացնում է թուխսն իր ճտերով:

Եթե մեր բերված այս գրույցները, հատկապես առաջինը, կարելի է համարել Թովմայի Ավետարանի փոխառության հետևանք, ապա սրանց հետ մեկտեղ պետք է մատնանշենք մի երկու գրույց՝ կապված հենց Քրիստոսի անվան հետ, որոնք իրենց բնույթով համահունչ են պարականոնի գրույցներին: Նրանցում Քրիստոսի կերպարն աչքի է ընկնում մույն դաժանությամբ և խստությամբ: Դրանք են՝ Ավանդապատմի հմր. 801-ի 8-րդ, ապա 13-րդ, 14-րդ գրույցները: Առաջինում ասված է. «Երբ Քրիստոսն անցնում էր ճանապարհով, թուրք զմում են մրան տեսնելու, բացի ջուլհակից, որն ասում է. «Այս էլ վերջացնե՛մ՝ հետո, այս էլ՝ հետո»: Այսպես շարունակվում է մինչև Քրիստոսի հեռանալը: Հիսուս, տեսնելով, որ ջուլհակը չի եկել, անհիծում է մրան՝ ասելով. «Ինչքան աշխատես, կուշտ չուտես»:

Երկրորդ գրույցում Քրիստոսը հանդես է գալիս հարկահանի դերում, մա երեխաներից տասանորդ հարկ է հավաքում: Մի կին, որ տասը երեխա ուներ, մի քանիսին թաքցնում է, որ տասանորդ չվճարի: Քրիստոսը գալիս է այս կնոջ մոտ: Վերջինս ցույց է տալիս իր երեխաներին: Հիսուսը հարցնում է.

-Էլ որդիք չունե՞ս:

¹⁷ Թարգմանությունը ռուսերենից. «Апокрифы...», էջ 142, գրույց 2: Համեմատել ենք մակ գերծաններին թարգմանության հետ, մշվ. աշխ., էջ 67:

-2է, - պատասխանում է կինը:

Քրիստոսը լուռ հեռանում է: Կինը գնում, բաց է անում պահարանը, որտեղ թաքցրել էր իր երեխաներին: սակայն ոչ մեկին չի գտնում, բոլորը դարձել էին չաչանք (քաջքներ - գերբնական հոգիներ):

Կա այս գրույցի մի այլ տարբերակ, ուր քահանան է ունենում 40 երեխա և 20-ին թաքցնում է:

Այս վերջին գրույցների զուգահեռները չեն հանդիպում Թովմայի Ավետարանում, և չի կարելի պնդել, որ նրանք գալիս են այդ ավետարանից, սակայն վստահորեն կարելի է ասել, որ նրանք նույն միջավայրի և նույն տիպի աղբյուրներից ձևած և տեղայնացած գրույցներ են:

Ամփոփելով մեր իտաքը, կարող ենք ասել, որ Քրիստոսի Տղայության Ավետարանը, այդ թվում և Թովմայի, որոշակի հետք են թողել հայկական գրույցների և Գրիգոր Նարեկացու մասին հյուսված ավանդությունների վրա: Նրանք ոչ միայն ներշնչման աղբյուր են հանդիսացել կանոնական Ավետարանների՝ Քրիստոսի տղայության պատմության պակասը լրացնելու, այլև ինքնուրույն հայկական գրույցներ ստեղծելու համար:

ՆԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆԱՅՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱՐԵԿՈՒՄ

Ամկասկած է¹, որ Ա. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանի, ինչպես նաև՝ մյուս երկերի մեջ դրսևորվում է Ռեդիմակի Բանճարի Բանճարեղ ինքնօրինակությունը: Սակայն այդ ինքնօրինակությունում այլամերժորեն բացարձակ չէ: Նարեկացին ինքնապարփակ ճգնալյաց չէ՝ աճհաղորդ Եկեղեցու դարավոր ավանդությանը և աստվածաբանական ժառանգությանը: Թերևս Բաղորդակցումն է, որ եկեղեցագործում է նրա խորհրդապաշտական Բախումն խոկումը՝ այն զերծ պահելով երբեմն ինքնանպատակ, վայրիվերո Ռուզավառությունից (էկզալտացիա): Բնութագրել Նարեկացու ռոգևոր սխրամքը՝ նշանակում է բնութագրել նրա Բանճարը եկեղեցական իրականության Բնո նրա ունեցած կենդանի Բարաբերության պայմաններում միայն: Այդ պայմանների հաշվառումը թույլ է տալիս առավել իրատեսորեն զննախոնել նրա Բանճարը, առավել մասնագիտորեն արժեվորել այն մեծագույն նպաստը, որ նրա ժառանգությունը բերել է քրիստոնեական մտքին առհասարակ և հայ ոգեկանությանը՝ մասնավորաբար:

Նարեկում նկատվում է Եկեղեցու աստվածաբանական վաստակին Բարաբերվող երկու կարգի վարդապետական իրողություն: Բրամանակարգային (դոգմատիկ) աստվածաբանություն և ավանդության աստվածաբանություն: Ինչպես հայտնի է, Բրամանակարգային աստվածաբանությունը կիրարկում է մտականուցման երկու եղանակ. ապոֆատիկ (բացասական, անճառելի) և կատաֆատիկ (դրական, ճառելի), որոնք ուղեցնում են աստվածամաշտդության երկու ճանապարհ: Կատաֆատիկ աստվածաբանությունը փորձում է դրական որակումներով հատկորոշել Աստծուն, բնորոշել Նրա ճառելի հատկությունները, որոնք «ընկալելի և բնութագրելի» են շնորհիվ մարդու կենդանի փորձառությունից ելող, նյութական իրականությանը տրված արժեքների: Այդ արժեքներից են Աստծուն վերապահված Նարեկում առկա «երկայնամիտ եւ քաղովմողորմ», «բարեբար», «ահաւոր», «գրած», «ողորմած», «ամենակալ», «նորոգող» (Բան Բ)², «սոսկալի», «հզոր», «սաստիկ», «երանութին», «ամենաբաշխ Աչ, արդարակշիռ ձեռն», «անուն կենդանի, մախախնամող մատն» (Գ), «նաւապետ», «նաւուղիդ» (ԻԳ) և այլն: Բնութագծում-ստորոգելիների այս շար-

¹ Որպես զեկուցում կարդացվել է դեկտեմբերի 27-ին Ա. Էջմիածնում Նարեկի 1000-ամյակին նվիրված գիտաժողովում:

² Օգտագործված է Նարեկի քննական բնագիրը՝ աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի, Ա. Ղազիմյանի, Եր., 1985:

ի տարբերություն կատաֆատիկ՝ դրական աստվածաբանության, Արևելաքրիստոնեական եկեղեցու հայրախոսական ավանդության մեջ (Ս. Գրիգոր Նյուսացի, Ս. Հովհան Ոսկեբերան) սկզբունքորեն գերադասելի համարված ապոֆատիկ աստվածաբանությունը բացառում է Աստծո ճանաչողության նվազագույն հնարավորությունն իսկ ոչ միայն այստեղ, այլև ամդեցականում: Եթե կատաֆատիկ աստվածաբանության նպատակն է մատնաճել Աստծո հայտնությունն, տնօրինական գործառույթը (թե ինչ է Աստված մարդու համար), ապա ապոֆատիկ աստվածաբանության նպատակը՝ Աստծո էության բնութագրումն է (թե «ինչ է Աստված ինքն իր համար և ինչ չէ մեզ համար»): Եվ քանի որ այդ սկզբունքորեն անկարելի է, ուստի հայրախոսական աստվածաբանության մեջ Աստծուն մերձեցնելու բարձրագույն կերպ է նկատվում նրա ամսատնջելիության գիտակցումը⁷:

Այդ գիտակցությամբ եմ շարադրված Նարեկի հետևյալ տողերը. «Աստուածութիւն անճառ... գերազանց գոյով սահմանի անպարագիր բացարձակութեամբ... ոչ անուամբ չափեալ եւ ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ նմանեալ եւ ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ արիմակաւ ձեւացեալ եւ ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ ի թերութեմէ տարածեալ եւ ոչ ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երեք ի գրաւեալ եւ ոչ ի տեղւոջ վայրի երեւեալ» (ԼԴ): Բերված տողերի սպառնիչ ամփոփումը պետք է նկատել «Քո՛ չափք անչափելիք» (ԺԶ) հակօրինական (ամտինոմիական) հաստատումը: Արդ, այս նպատակով կիրառված ժխտական բնութագրումները բացարձակաբանական կարելի թե անկարելի թափանցումներով «մատնանիշ են» անում Աստծո անճառելի «ինքնիսկությունը»: Այդպիսիք եմ Նարեկում բազմիցս հանդիպող «անիմանալի», «անըմբռնելի» (Գ, Ղ, ՂԵ), «անախտակիր» (Բ), «անքնին» (Բ), «անքննելի էություն» (ԻԸ), «անփոփոխ» (Բ), «անվախճան» (Բ), «տահման կամ շափղ անհետազօտելի» (ԼԱ), «անքանակ» (ՀԵ, ԼԴ) և այլն: Աստվածության վերջի՛մ՝ «անքանակ» բնորոշումը, որ հանդիպում է Նարեկացու եկեղեցու զանձում («անքանակ պատկեր, զթութեանց խնամոց»)՝ և ժամագրքում («Աստուած անեղ, անժամանակ/Հայր անսկիզբ եւ անքանակ»)՝⁸ նմանապես, առկա է Աղոթամատյանի ԼԴ և ՀԵ բաներում:

Աստծո բացարձակ պարզությունը ցույց տվող տվյալ բնութագիրը արձագանքվեապարունկն է Դիդիմոս Կոչրի (313-398 թթ.) և Կյուրեղ Ալեքսանդրացու (+444 թ.) առավել հաճախությամբ կիրառած «անքանակություն» եզրի, որ Աստվածության ապոֆատիկ բնորոշումներից է¹⁰: Այդ իմաստով այն կիրառված է Կղեմես Ալեքսանդրացու «Ստրոմատիս» երկում (Ե 12, 82) «անբաղադիր» ձևով¹¹, որ Հայր Աստծո հատկորոշումն է: «Անքանակ»-ն այս բովանդակությամբ կիրառված է եզմիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում («անքանակ եւ առանց մասանց է»)՝¹² և Ս. Բարսեղ Կեսարացու՝ Սուրբ Հոգուն նվիրված ճառում

⁷ Այդ մասին հանգամանալից տե՛ս В. Лосский, Анофазы и триическое богословие – «Богословские труды», сб. 14, М., 1975, с. 95-104, Карл Христиан Фельме, Введение в современное Православное Богословие, М., 1999, с. 33-45.

⁸ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, աշխատ. Ա. Բյուշեկյանի, Եր., 1981, էջ 163, տող 6:

⁹ Տե՛ս ժամագիրք, Նիւ-Յորք, 1986, էջ 109:

¹⁰ Прот. Г. Флоренский, Восточные отцы церкви, М., 2003, с. 264:

¹¹ Եզմիկ Է. վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 126:

¹² Եզմկյա Կողբացու Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 226:

(«անգղիւն և անտարր») ¹³: Ի դեպ, Դիդիմոսի և Կյուրեղի հիշյալ ապոֆատիկ արտահայտության իմաստալիւն հակոտնցան է նարեկյան «քանակեցար անքնին» (ԼԴ) արտահայտությունը, որ իր կատաֆատիկ բովանդակությամբ, ի տարբերություն նախորդի, դրսևորում է տնօրինության սկիզբը՝ Բանի մարմնավորումը:

Ծարժի մյուս՝ «անհետազտելի» բնութագրությունը, որ առկա է ճան հեղինակի՝ Ա.
խաչին նվիրած գամծում¹⁴, արձագանքն է Ա. Բարսեղի «Հայենաց ի քեզ» բնարանով ճա-
նի։ Ահմեստազոտելի իմաստությւն Արարչին¹⁵, Գրիգոր Նյունացո՛ր՝ Ա. Գրիգոր Աջաօցե-
լի պատգոծին նվիրած ներբողի -Ահմեստազոտելի է մարդկայնոց խորհրդոց»¹⁶, Նանա Աստ-
ուշահորէն Հովնաթան Ավետարանի մեկնության մախարդության «Առ խուզմունս իմաստից
խորս, որ անհետազոտելիք ասացան ի վսեմամիտ գերահրաշիցն»¹⁷ արտահայտությու-
նեղի:

... և այլն ...

Այսօր Կոմիտեի անսովաճաբանության հետ առավել ուղղակի հարաբերության մեջ է «ամ-
ճառելի» բնութագիրը. «ամուսնի ամճառելեալ» (ԻԵ), «ո՞վ ոք զամճառելիսն (յիշեաց) եւ
ոչ խոռվեցաւ» (ԻԹ), «ամճառութիւն խորհրդոյս» (ԾԳ), «զամճառութիւն շնորհիւն» (ԻԷ)՝ և
այլն: Իրողությունս աղոթական վավերացումն է Ա. Դիոնիսիոս Արիսպագացու «Յադագս
երկնային քահանայապետութեան» երկի «Ամճառութիւն ի վերայ աստուածայնոցն ճշմա-
րիտ են» կամ «զաստուածայինսն պատուել ճշմարիտ ամճառութեամբ» օրինակարգումնե-
րի¹⁸:

Աստվածաբանական ապոֆատիզմի նույնքան ուշագրավ դրսևորումներից են Նարեկուն հանդիպող «ամանց» և «ամհաս» քնութագրումները: «Որ ինձ ամանցն է, Քեզ հպատու է» (ԾԷ) արտահայտությունն իմաստային համարժեքն է Ս. Հովհան Ոսկեբերամի՝ Արարածոց մեկնության «Ամանց ամենեցուն եւ անտեսանելի, քայց ի Քահանայապետէն միայնոյ», Եսայա մեկնության «զամանց եւ զանկոյս անապատ հորդեաց, արար արքունի պողոտայ» քառերի¹⁹: Նարեկուն առավել հաճախակի հանդիպող «ամհաս», «ամհասանելի» քնութագիրն առկա է հետևյալ կապակցություններում. «Ամհաս իմաստից թեոց» (ԼԴ), «Փառաց անհասից» (ՁԱ), «Ընդ Հար անհասի» (ՁԱ), «Երազայթ անհաս» (ՂԵ), «Անպատում, անհաս» (Ղ), «Խորհորդ անհասանելի» (ՂԵ), «Անուն անհասութեան» (ԻԳ), «Ամհասութեամբն վերանկանաւ եւ զանունն ունի անքմին» (ՂԵ) և այլն: Սրանք աստվածաբանորեն աղերսված են Ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Ցառաք քան զլաիտեանս մշտնջենադրութեամբ եւ անհասութեամբ ի Հարե ծնեալ»²⁰, Ս. Գրիգոր Աստվածաբանի «անհասու-

¹³ Գաղմախար, Դ, էջ 204:

¹⁴ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, էջ 213, տ. 13:

¹⁵ S b'u U'U d b n. 436, p. 145p-48p.

¹⁶ See LPA, U. 59 185.

¹⁷ Տե՛ս «Նամայի Ասորոց վարդապետի Մեկնութիւն Յովհաննոս Անտարաքինի», աշխատ. Հ. Բ. Զրաքյանի, Վեներիկ, 1920, էջ 3:

¹⁸ Տե՛ս նաև, Ա, էջ 198:

¹⁹ LAZ, U, 107;

²⁰ Տե՛ս «Երանելոյն Կիրոզի Երուսաղէմայ Բայրապետի Կոչումն ընծայութեամ», Վիեննա, 1832, էջ 51:

թեմանք սքանչելի երեւի»²¹, «Արդ, անբաւ է Աստուածութիւնն եւ դժուարաւ տեսանելի... կամ բոլորովին անհասանելի»²² արտահայտությունների հետ:

Աստծո անմատչելիությունը մատնանշող մյուս բնութագրությունն «անմատոյց» է, որ Նարեկում կիրարկվում է էապես կապված Պողոս առաքյալի «քնակեալ ի լոյս անմատոյց» (Ա Տիմ. Զ 15) արտահայտությամբ հատկորոշվող միջնադարի լուսային խորհրդաբանությանը. «անմատոյց լուսովդ պարածածկեալ (ԺԸ), «փառաւորեալ ի լոյս անմատոյց» (ԻԵ), «Աստուած... ի լոյս անմատոյց ասի» (ՂԵ) և այլն: Ազաթանգեղոսի պատմության, ինչպես նաև Ս. Գրիգորի վարդապետության մեջ այս հատկորոշումն օգտագործվում է աստվածաբանության «բնությունը» ցույց տալու նպատակով. «Անմատոյց եւ անհիմաց է յամենայն արարածոց»²³, «անկզբնական յիութիւն, անմատոյց բնութիւն... իմանացի»²⁴:

Աստվածության մյուս բնութագիրն «անկշռելի» (ԻԹ) միավորն է, որ համերաշխվում է Ս. Գրիգորի վարդապետության «անկշռելիութիւն» եզրին²⁵: Նույնքան բնութագրական են Աստծո «անվայրափակ» հատկությունը պարզող հետևյալ տողերը. «Անպարագիր, անվայրափակ տեղի ամենեցուն Բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին» (ԻԳ). սրանք վարդապետական արձագանքն են Ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Ոչ ընդ վայրաք փակեալ, այլ վայրացն իքնն է Արարիչ», Աներիանոս Գաբաղացու «Անկիզբն է Աստուած, անճառ եւ անհասական, որ ոչ տեղեաք սահմանի եւ ոչ վայրաք բովանդակի» և Ս. Հովհանն Ոսկեբերանի «Ժամենացի է, եւ անտեղի է» արտահայտությունների²⁶:

Անուրանալի է այն նպաստը, որ կապապողովկյան հայրերը բերել են Ս. Երրորդության վերաբերյալ վարդապետությանը: Եթե Ս. Երրորդության միության (մեկության) խնդիրն իր լուծումը ստացավ Ս. Աթանասի ջանքերով, ապա Ս. Երրորդության երրորդականության և անձերի հարաբերակցության հարցը՝ կապապողովկյան հայրերի միջոցով: Թվում է, Նարեկացին քաջատեղյակ է սրան: Կապապողովկյան հայրերի ապոֆատիզմի հետ է կապված նրա երրորդաբանական հետևյալ խորհրդածությունը. «Քանզի ոչ նախաթուելովն յԵրրորդութեանն ոք մեծ ինչ քան զմիւսն, եւ կամ զկնի անուանիլն նուաստագոյն առ նմանն, եւ կամ ի միմն ասելով՝ խառնակութիւն զոլ դիմացն, եւ կամ յերիցն տրոհումն՝ ուրոյնութիւն ել կամացն» (ԼԴ):

Այս միտքը որոշակիորեն հարաբերվում է Բարսեղ Կեսաբացու՝ Ս. Հոգուն նվիրված ճառի հետևյալ հատվածների հետ. «...Ըշմարտութիւնս մեր ոչ թէ թուով համարոյ է, այլ ստոյգ Աստուածութեամբն վկայեալ է: ...Արդ, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ մեզ այսպէս տուան, զի մի Հայր միոյ Որդոյն եւ միոյ Հոգւոյն ի մի Աստուածութիւն անդր, եւ չիք ի մեծութեան աստ յայսմ թիւ միոյ եւ երկուց եւ երից, քանզի ոչ եթէ յաւելն մի բնութիւն հնազան-

²¹ Ի Սուրբ Ենունդն, ՄՄ, ձեռ. 1500, ք. 724բ-27ա:

²² Տե՛ս «Կոմիք հաւատոյ ընդհանուր Ս. Եկեղեցու...», աշխատ. Կարապետ եպս. Տեղ-Մկրտչյանի. Ս. Էջմիածին, 1914, էջ 32:

²³ Տե՛ս Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց, էջ 131:

²⁴ Աճղ, էջ 167:

²⁵ Աճղ, էջ 383:

²⁶ Տե՛ս Հրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցոյ Հայաստանեայց, աշխատութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիռնացոյ, Մոսկուա, 1850, էջ 132-134:

դեսպի առաջնում երկրորդն և երրորդն՝ երկրորդում, այլ մեք զժառանգակցութիւն ան-
ուանցս այսոցիկ ի մի Աստուածութիւն անդր կարգենք և ոչ առնենք մեք զթիւ մոցա...»²⁷։
Ուստի պատշաճ չէ աշխարհի օրենքներով դաստիարակված մարդկային բանականու-
թյան չափումներով որոշարկել Ս. Երրորդության անձերի հարաբերակցությունը. «Բայց
զի՞նչ մերձ են երկրատր իրաց մեծութիւն կամ փոքրկութիւն և կամ թիւ համարոյ մոցա
անճառն Աստուածութեան»²⁸։

Գրիգոր Աստվածաբանի ճառերից մեկում կարդում ենք. «Ջայս տամ ամենայն կենաց հաղորդ եւ վերապաշտ՝ զվի Աստուածութիւնն եւ զաւրութիւնն երեսին գոյ միութեամբ եւ զերիսն ի միասին առեալ՝ առանց բաժանելոյ ոչ առաւել բնութեամբք կամ էութեամբք եւ ոչ աճեցեալ կամ նուազեալ գերազանցութեամբ եւ կամ նուաստանալով... զի ոչ ինչ ի նոյն բնութեան մեծ կամ փոքր...»²⁹։ Միամբին Վերծանողը, համաձայնելով հայրերի դիտումներին, գրում է. «Եւ արդ, ոչ մեծ եւ ոչ փոքր ի Սուրբ Երրորդութեանն երկի, զի զմեծ եւ զփոքր, զծանր եւ զթեթեւ, զշատ եւ զսակաւ ժամք եւ ժամանակք բովանդակեն, իսկ ուր ոչ ժամք եւ ոչ ժամանակք, ոչ չափ եւ ոչ կշիռ մերձենայ յանբաւելի բնութիւնն, անդ ոչ նկատի ոչ փոքր եւ ոչ մեծ»³⁰։

Ա. Երրորդության միությունում (մեկ լիցեզի) ու առանձնավորակաճ երրորդականությունը
ցույց տալու համար Նարեկացից գրում է. «Մի՛ յերից անշիտո կերպից, եւ երիս՝ ի միոյ ան-
հատաձեղի իսկութեանց...» (ՀԵ): Վերջին բառերով հեղինակը բացատրում է «իսկու-
թեանց», այն է՝ անձանց անբաժանելի լիւնը: «իսկութիւն» և «անձ» հասկացությունների
այսօրինակ մոյցնացումը, որ առկա է Հաճախապատումի և Ա. Հովհան Օձնեցու «Ընդդէմ
երևութականաց» ճառի մեջ «իսկութիւն=գոյացութիւն=անձ» համարժեքով³¹, իր վրա կրում
է Դ. դարի առաջին կեսի երրորդաբանական ըմբռնումների դրոշմը: Այս տեսակետից բնո-
րոշ է, որ Ա. Աթանասի, ինչպես նաև՝ հիկիական հայրերի համար սποσασտց (անձ)-ը իմաս-
տով համապատասխանում է ծոսս (էություն) եզրին³²: Նարեկի խնդրո առարկա արտա-
հայտությունը եզրաբանական այդ անորոշության արձագանքն է:

Հայր Աստծուց Որդի Աստծո ծննդյանց կերպը ներկայացնելու նպատակով Նաբեկացի գրում է՝ «Պատճառ Որդույ հայրությանմ, այլ ոչ նախադրությանմ» (ԻԸ): Սա ճշման է, թե Որդին Հորից ծնվում է ոչ թե նրա կամքով կամ ցանկությամբ (ինչպես պնդում

²⁷ «Գաղթապատ», 1993, Ռ, էջ 212-213:

²⁸ U.O.H. էջ 212:

²⁹ Տե՛ս ԿՈՒՐ ԱԽԱԿԱՌՈՂ, էջ 35, 36:

³⁰ Տե՛ս «Կողմիցի վառդապետի, Մամբրեի վերձամողի, Դառի Ամյաղթի մատեմագրութիւմը», Վեցնտիկ:

1933, Ep 70:

³¹ Յաճախ պատմում, էջ 33 («պատմառ մոլորաց իսկությունացմ ի մոլմ բնութեան»), տնի Անտիքեան, մշվ. աշխ., էջ 495, «Ընդդէմ քրեականաց», աշխատ. Հ. Մկրտիչ վրդ. Ավգերյանի, Վնեմիկ, 1807, էջ 39 («գրիս դէմն խոստովանել եւ կամ գրիս գոյացութիւն եւ զիրացանձիւր Ռամդեմ լատկութեանք»), մակ' Հ. Քրտեան. Հովհան Օմեցու «Ընդդէմ քրեականաց» ճառի Քայրախոսական աղբյուրները՝ «Ա. Հովհան Օմեցի Քայրապետը եւ իր ժամանակը», Ա. Եմիաձիմ, 2004, էջ 94:

³² Սրբ. Գ. Փարոսեան, Բուստիան տնայ լերան, Է. 80. Եղարամական այս շիրոնք անկա է Օան Ա. Գրիգոր Կազիանգադո մատնագրողոյան իայերն թարգմանոյում մնն. այսպես. «Աւո իրս՝ ճառաշարի Բ ճառում իմն. տոտտոսց (ամն)՝ թարգմանկան է գոյութիւն. տնն Ընդդէն երեսութեանմաց, էջ 39, ձմր. 2:

էր Արիոսը), այլ շնորհիվ իր հայրությանմբ պայմանավորված օրինաչափ անհրաժեշտության: Այս ըմբռնումն է ընկած ինչպես Ս. Աթանասի, այնպես էլ կապապոդոկյան հայրերի հակաարիոսյան երրորդաբանության հիմքում³³:

Հաստատագրելով «Քրիստոսի լիակատար մարմնավորման, մարդացման և այդու ճրայ բնական աճի իրականությունը»՝ Նարեկացին գրում է. «Անճուռագ զուով ընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրեցի Աստուածածին կուսին մաքրութեան, յորում աճեցոյց զբոյսն արհմութեան ի լուսասահման անդաստանին անարատութեան...» (ՀԵ): Միտքն աստվածաբանորեն աղերսված է երևութականների (դոկետների) դեմ գրված Ս. Եփրեմ Ասորու ներշնչելույն տողերին. «Եթե Բանը դարձավ լոկ պատկեր»՝ էլ ի՞նչ հարկ կար բնության: Եթե ծնունդը կատարվեց առերևույթ՝ էլ ի՞նչ հարկ կար կնոջ: Եթե անցավ իբրև խոդովակի միջով՝ էլ ի՞նչ հարկ կար ժամանակի և հղության...: Նրա մարմնավորման վերաբերյալ ունեն ման այլ ապացույց. աճում մինչ կատարյալ հասակ»³⁴: Այս զաղափարն է ընկած ման Ս. Հովհան Օձմեցու «Ընդդէմ երևութականաց» ճառի հետևյալ հատվածի հիմքում. «Եւ եթէ ոչ գոյութիւն ինչ անձնաւոր զմերս ի Կուսէ ընդ ինքեան միաւորեաց Բանն, զիա՞րդ ինքն զինքն Մարդ և Որդի մարդոյ անուանեաց: Զիա՞րդ եւ տղայ երեւեալ խանձարապատեցաւ եւ կաթմաբոյժ եղանհիւր և առ կատարելութիւն ի վեր ընթանայր անմամբ հասակի...»³⁵:

Եթե խնդրո առարկա բացարձակաբանությամբ «դրսևորվում է» Ս. Երրորդության վերտնօրինական, անդրանցական ինքնիսկույթը, ապա քրիստոսաբանական մտածումներով՝ Ս. Երրորդության մախախմամական, տնօրինական բովանդակությունը: Նարեկը հարուստ է այս բնույթի մտածումներով մեծանպաստ: Մասնավորաբար շահեկան են քրիստոսաբանական մտածումները, որոնցում բնութագրվում է Քրիստոս Փրկչի տնօրինական սխրանքը: Այսպես, Ս. Երրորդության անձերից մեկի՝ Աստծո Որդու մարմնացման և մարդացման խորհուրդը լավագույնս ներկայացնելու նպատակով Նարեկացին գրում է. «Մինն յերջանկափառ, համազաւր ահաւորութենէ երիցն անձնաւորութեանց, խոնարհեալ ի վերուստ՝ աստուստ ի ստորինս, որ էրն իսկ ի բնէ անբաժ ի ճեղքնոցս՝ անկապուտ մնալով փառացն Աթոռոյ եւ անկարաւտ՝ դիմացն ծնողին սիրոյ, մտեալ ի սենեակ Կուսին արգանդի պարզաբար եւ ելեալ անտի յաւաւորաբար մարմին էապես անորոշելի, անթերի մարդկութեամբն եւ անպակաս Աստուածութեամբն...: Եւ աւարտեալ զտնարինականացն զփրկանաւորն զտնտեսութիւն՝ աստուածապէս վերակենցաղեաց... մտաւ ճոխութեամբ յԱթոռն իւրական սկզբնածառանց Հաւրն հաւասարութեան, յորմէ եւ բնաւ իսկ ոչ մեկուսացաւ՝ անկորուստ առեցելովն եւ աննուագ սեպհականաւքն» (ԼԴ), «խոնարհեալ իջեալ ի յերկնից. աննուագ զուով ընտանի փառացն», կամ «Աստուածութեան անընդմիջելի ի մերսէրն մարմնոյ» (ՀԵ):

Բեղված հատվածները, հատկապես դրանց ընդգծյալ մասերը, վերաբարձում են Ս. Հովհան Ոսկեբերանի այն մտածումի, թե Աստծո Բանը մարմնանալով՝ եղավ Այն, ինչ չէր՝

³³ Տե՛ս Фаворский, Զվ. աշխ., էջ 76-82:

³⁴ Տե՛ս Фаворет арх. Гумилевский, Историческое учение объ лицах церкви, М., 1996, с. 91.

³⁵ Ընդդէմ երևութականաց, էջ 20:

ուածախառն մարմնոյն»⁴⁵, «Թաճախապատումի»՝ «Տէրն յետ մկրտութեան պահովք պընդեալ աստուածախառն մարմնովն»⁴⁶: Ա. Եպիփան Կիպրացոյ՝ Հարութեանը նվիրված ճառի «Բայց միցն էր անասնոց զեմումն, իսկ միւսն՝ աստուածախառն մարմնով պատարագ»⁴⁷ արտահայտություններում:

Քրիստոսի տնօրինական գործի փառապատկեր կազմող խաչով և նրա վրա թափած արյամբ մի կողմից անցարկելով դրա նախօրինակը հանդիսացող Քրոնք լեռան վրա Մովսեսի գավազանով ժայռից (վեմից) բխած աղբյուրը (եյք ԺԷ 5-7), մյուս կողմից, մատնանիշ անելով դրա եկեղեցական վերարժեքվորումը դարձած Ա. Հաղորդության խորհուրդը⁴⁸, Նարեկացին գրում է. «Նոյն իսկ էութիւն Աստուծոյ մարմին եղելոյ անուամբ այս վիմին նշանակեցաւ՝ պատառամբ կողին զքմաւս արքուցեալ (ՀԵ): «Վեմ—Քրիստոս» խորհրդաբանությունը, որ ունի իր սուրբգրային ակունքը («...եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն... զի լըմպէին ի հոգեւոր վիմէն, որ երթայր զհետ նոցա, եւ վեմն էր ինքն Քրիստոս» (Ա Կորնթ. Ժ 3-5), հայրախոսական ավանդության մեջ իր թերեւս վաղագույն ամդրադարձը գտել է Ա. Իրինեոսի (+202) «Ճոյցք առաքելական քարոզութեանն» երկում («Վեմը ինքն իսկ Քրիստոս էր»)՝⁴⁹ և աստվածաբանական մեկնաբանության եմթարկվել Ա. Գրիգոր Նազիանզացոյ ժառանգության մեջ:

«Աստվածաբանության մասին» ճառաշարի Բ ճառում նա գրում է. «Ես քայլում էի Աստծուն հասնելու նպատակով. այս մտածումով՝ հրաժարվելով նյութից և նյութականությունից, ըստ կարի կենտրոնացնալով ինքս իմ մեջ, բարձրացա լեռը: Բայց երբ հայացքս բարձրացրի, հագիվ նկատեցի Աստծո թիկունքը (նմտ եյք ԼԳ 22-23)՝ այն էլ ծածկված Վեմով, այսինքն՝ հանուն մեզ մարմնացած խոսքով»⁵⁰:

Նույնքան ուշագրավ են Նարեկացոյ եկեղեցաբանական դիտումները, որոնք շարունակում են այդ մարզում առկա անցյալի վարդապետական ձեռքբերումների: Այսպես, ցույց տալու համար Եկեղեցոյ նախագոյությունն ու նույնիսկ հրեշտակներից առաջ լինելը՝ Նարեկացին գրում է. «...Ակզբնաւոր յառաջակառոյց, քան զքմակիչս հոգեղինացն ի մմա զարութեանցն» (ՀԵ): Միտքը ներկա է ման ճգնակյաց հոր Եկեղեցոյ զանձում. «Որ յսկզբնաձեռն յառաջակառոյց զայս կերպարսն հրաշագարդ իրի հաճեցար լինել...»⁵¹:

Եկեղեցոյ խորհրդի և նշանակության գոյաբանական այսօրինակ արժեքվորումը գալիս է Առաքելական հայրերի ժամանակներից (Հերմասի «Հովիվ»)՝⁵² և վարդապետորեն հաստատագրվում հետմիկիական հայրերի (Ակակիոս, Գեննադիոս) ժառանգության մեջ: Նարեկացոյ նպատակն է խորհրդաբանորեն վավերացնել Եկեղեցոյ վերժամանակային կարևորությունը, այն ներկայացնել իրեն վերին արժեքների զետեղարան: Քանի որ Եկեղե-

⁴⁵ Ամդ. էջ 187:

⁴⁶ Թաճախապատում, էջ 82:

⁴⁷ Տե՛ս ՄՄ ձեռ. 993, թ. 203ր:

⁴⁸ Մատնամ Ողբերգութեան, էջ 1093, ձմթ. 26:

⁴⁹ Das heiligen Irenäus Schrift zum Erwise der apostolischen Werkkündigung, աշխատ. կարպատ 8. վրդ. Տեր-Մկրտչյանի, Երվանդ Վրդ. Տեր-Սիմոնյանի. Leipzig, 1907, 46:

⁵⁰ И. Межелдорф. Введение в светлотеческое Богословие, с. 172:

⁵¹ ՆԱՀ, Բ, էջ 720:

⁵² Եզեմիկ վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, էջ 55:

բանում. «Ո՛չ ահա Մեղքիսեղեկ յարինակ ճշմարտիդ ահաւորութեան ի Ձիթաստանեաց լեռինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյ Աստուծոյ զետեղեալ կացին ի վերմոց անտի հրեշտակաց ի պտղոց տեղոյն իռեցաւ: Այս պատմութիւնը, որ տարածված էր Ռուս իրականութեան մէջ, թարգմանվել ու զետեղվել է Հայսմավորքում (մարտ 25), ուր պատմվում է, թե Մեղքիսեղեկը ճգնությամբ բնակվում էր Ձիթեցւոյաց լեռան վրա (ըստ Ռուս.՝ Թաբոր): Նրան այցելում է Աբրահամը և օծվում Մեղքիսեղեկի կողմից ու լսում երկնքից եկող մի ձայն, թե՛ Մեղքիսեղեկը լինելու է հավիտեանական քահանա: Ու չնայած սուրբգրային պատմության մէջ չի նշված, թե հրեշտակների կողմից է Մեղքիսեղեկը օծվել քահանա, բայց Նարեկացու այդ մասին հաստատումը թույլ է տալիս ենթադրել, որ նա օգտվել է այդ պատմության այժմ ամֆայտ մի տարբերակից, որ, ինչպես երևում է, աչքի առջև է ունեցել Ս. Հովհան Ոսկեբերանը: Իր Արարածոց մեկնության մէջ նա գրում է. «Նա թերևս ինքն իրեն ձեռնադրած քահանա էր, որովհետև այնպես էին այն ժամանակվա քահանաները, կամ էլ որովհետև ձեր էր, ուստի այդ պատիվը նրան մատուցեցին իր մերձավորները (հրեշտակները - Հ. Ք.)»⁵⁹:

Նարեկում այս ավանդությունը շարունակվում է հետևյալ բառերով. «ուստի շիրմի սկզբնահարցն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ ի քէն հանդերձեալ նստաւ»: Այստեղ ակնարկվում է հին հրեից մէջ տարածված այն ավանդազրույցը, համաձայն որի Նոյը, Ադամի ոսկորներն իր հետ տապան վերցնելով, հետագայում ամփոփում է Գողգոթա լեռան վրա, որի «զազաթ» անվանումը զալիս է այստեղից: Ադամի զերեզմանի վրա պահապան է կարգվում Մեղքիսեղեկը որպես քահանա և թագավոր: Սակայն նա չկարողացավ քաղել Ադամի մեղքը, մինչև որ հայտնվեց Քրիստոս Ինքը և որպես ճշմարիտ Քահանա ու թագավոր, լինելով երկրորդ Ադամ, քաղեց առաջին Ադամի մեղքը: Այս ավանդությունը, որի մասին տեղյակ է նաև Ամանիա Սանահնեցի⁶⁰, ինչպես երևում է, Նարեկացին վերցրել է Ս. Եպիփան Կիպրացու Արարածոց մեկնությունից, ուր այն պատմվում է ամենայն մանրամասնությամբ: Ըստ որում քահանայական և թագավորական պաշտոնները Մեղքիսեղեկը նորածին Հիսուս մանկանն է հանձնում Բեթլեհեմի մտուրում⁶¹:

⁵⁹ Migra. PG. t. 53. col. 328. Ավետիքյան, Ծղվ. աշխ. էջ 656:

⁶⁰ Տե՛ս «Գանձասար», 1994, Ե, էջ 250:

⁶¹ Տե՛ս Հ. Քյոսեյան, Դրվագներ..., էջ 286-287:

ՎԱՐԱԳ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՄԱՏԵԱՆԻ» ՔՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԸ

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը քնարական ստեղծագործություն է: Ինքնին հասկանալի է, որ մարդկային հույզերի, ներաշխարհի, զգացմունքային զանազան երևույթների գեղարվեստական արտացոլումը ենթադրում է քնարական որոշակի քննադատության առկայություն:

Մատյանի մեջ պատկերված ապրումները՝ հոգևորական տենչանքները, տաճարացիներն ու տառապանքները, գրեթե ամենուր դրսևորվում են զգացող անհատականության «ես»-ի միջոցով: «Մենք»-ը Նարեկացու երկում հանդիպում է շատ հազվադեպ, այն էլ համարյա միշտ «ես»-ին զուգադիր: Ահա «մենք»-ի գործածության օրինակներից մեկը, որ անմիջապես հաջորդում է «ես»-ին.

*Եւ ես վկայեմ իմովս բանի,
Քանզի իբր զանզգայ պաճարս անասնոց՝
Մեռանիմք, եւ ո՛չ զարհուրիմք...
Տարագրիմք, եւ ո՛չ տազնապիմք,
Եղծանիմք, եւ ո՛չ զղջանամք,
Մաշիմք, եւ ո՛չ մտառեմք...*

(ՄԵ, 50-52, 55-57: ՏԵՍ ԳԱՆ ԻԸ, 59, 110, 112; ԻԹ, 108)¹

Արդ, հարց է ծագում ո՞վ է Մատյանում հանդես եկող «ես»-ը: Արդյոք ցավագին ու հոգեմաշ տառապանքներ ապրող այդ «ես»-ը սոսկ միջոց ու նպատակ է ժամանակի ընդհանրացված մարդուն կերպավորելու համար, ինչպես հաստատում են որոշ գրականագետներ, իսկ ավելի որոշակիորեն և հստակ՝ Գրիգոր Նարեկացուն նվիրված մեծարժեք հետազոտության հեղինակ բարեհիշատակ Արշալույս Ղազիմյանը, գրելով, թե «Նարեկացու քնարական հերոսը դեռևս անձնատրոսիքին չէ, այլ ընդհանրացրած անհատ, հալածական կերպար, վերացարկուած մարդկային էություն»²:

Բայց ակնհայտ փաստ է, որ Մատյանի քաղմաթիվ էջերում երևան եկող «ես»-ը շատ դեպքերում հենց որոշակիորեն վերաբերում է միայն տվյալ ստեղծագործության հեղինակ-

¹ Քաղվածքները քերում ենք ըստ Մատյանի գիտաքննական հրատարակության. տե՛ս «Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգություն: Աշխատասիրությամբ Պ. Մ. Նաչատրյանի և Ա. Ա. Ղազիմյանի. Երևան, 1985»: Փակագծերի մեջ ձևվում է ստեղծագործության համապատասխան գլուխը, իսկ թվաձանձերով՝ տողերը:

² Արշալույս Ղազիմյան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Բնյուր, Ամթիլիա, 1995, էջ 132-133:

կի աճձից և բնավ չի համատեղվում «ընդհանրացուած աճհատ, հաաաքակաճ կերպար, վերաքարկաաա մարդկայիճ էաթիաճ» ըբբոնաաաերի հետ:

Բաաաատեղձի աճձի և աճհատակաաաաաաա առկայաաաաաա հասաաաաաա է աաճ իրողաաաա, որ գրերթ բաաա գաաաաերաա, հատկապես գաաաաերի սկգբաաաաաա և աաարաաիճ, ճա աադարաաաաաա է իր սաեղձաաորձակաա աաաաաաաաերի հետ աոնչվող գաաաաաա խնդիրաերի՝ Մաաաաաի գրաաաաա, բնաաթի, սաեղձաաա ճպաաաակի, գաաահատաաա, աաա աաաա գաաաա կաա հատվաձաաա արաաաաաաաաա տրաաաադրաաաա, Ասաաաա աձաադակաաաաա գիրքը հաադողաաաաա աաարաեղաա և իր գրքաա աաաաա մաաաաա բաղձաաաաերի և աաա հաաաաաաաաաերի հիաաաաակաաա: Աաաաա, ՁԷ բաաի սկսվաձքաա Նարեկաաիճ աաճ միաաա է հաաաաաա, թե քաաի որ աղբերգաաաաա իր մաաաաաի աարադրաաաաա արղեճ հաաաաա է աաարաիճ, աաեաա «իճքաաաաաաա» կաաաաաաաաաերի հետ թող Տիրոա բարեգաաթ կաաաղաա իապաա չքաաաա ճաա իր չար սաաիրաաաաաաաա:

Մի աաիա գաաաա, դաաաաաարաեղաա սեաիակաա մեղքերը, բաաաատեղձը դիմաա է Ասաաաաա՝ աաեղաա:

Դիրիճք եա քեգ գաաաիճ եղձաաեղ,

Քաա իճձ տաձաաաաաաա Աաղաա ճկարեղ,

Վաաա աաաաիրիկ գրեգի աաաաա խճաաեղա,

Ձի Դաա աաաաաաաաա ղնղեքեքա, Օրհնեա՜:

(ԻԸ, 55-58)

Ի դեաա քաարակաա հերոսի՝ մեաք հաաաաա տեաաաա եաք աչ թե սաակ ընդհաաարակաա, վերաքարկվաձ մարդաա, աաա մաաաաարակաա վաաաակաաիճ, որա իր գրքաա արաակաաք հաաաաաակաաաաաաաա Հիճ աա Նոր կաաակաաաաաերի թերեա բաաիր գրքերից վկայակոչաաաաա է աաաաա կաա աակաարկաաա աադ գրքերի մեք աեղ գաաա իճչ-իճչ մաքեր, աաաաաեր և աաա: ԻՁ գաաաա Նարեկաաիճ ճաաաաաա հաաաաաաաաա է սաաաա հատվաձը ժողաադակաա աղբասաաաերի ճաաաողաաաաա հաաաաաաիր հորիճեղա, ԻԷ գաաաա՝ որոա տողերի սկգբիճ աաաարաիճ միաաաա «աեղաա» բաաը կաաաաաաաաաաա գորձաձեղա մաաիճ: Բաաաատեղձը բաաաիցա շեաաաա է ճաա իր Մաաաաաի աաաահաաաաա գաղաաիարը (ՄԴ, 73-81; կԶ, 1-34 և աաա): Մի աաիա տեղ ճա աաճ միաաա է հաաաաաա, թե իր գիրքը մի հաաիաաաակաա արձաա է, որը պիաի խաի Ասաաա հրեաաակաաերի բերաաաա և պիաի իր փոաաաեճ իր իսկ ձաաաաա աաաաաա աղաղակի (ՁԸ, 9-12, 17, 44): Իճքեճի հաակաաաաի է, որ աաա օրհաակաերը աչ մի աաաաաաաաա չաաեճ «վերաքարկաաա մարդկայիճ էաթիաճ» հաակաաաաաաա հետ և միմիաաճ Նարեկաաաա աաձաաաաաաաաա վերաբերող փասաեր եա:

Ավեղիճ՝ Մաաաաաի ՀԲ գաաաա Նարեկաաիճ արձաաաաաաա է գաաա աաձաակաա, գաաա իճքաակեաաաաաաաաա բնաաթի իրողաաաաաաա, որ դարձաա չեա հաաաաաեղաա «ընդհաաարակաա աճհատ» ըբբոնաաա հետ. աաաաիչ լիճեղ (Պետ վարձից կոչեաա – ՀԲ, 62), վարդապետակաա աաաիճաա (Ռաբբի, աաբբի աաաաաաաա – 63), սրբակաա վարքի տեր վաաակաաի հաաբաաա աաաաաա (Սաաթ վկաաեաա ի մարդկաա – 66), իր հաաակերա Գրիգոր աաաաա արթաա և հակող ճաաակաաաաաաա:

*Յաւազանէ կոչեցայ Արթուր
 Եւ ի քուն մահու մնջեցի,
 Ի փրկութեանն ատուր Հսկող յորջորջեցայ,
 Բայց զգաստութեանն՝ այս կափուցի:*
 (71-74)

Վերհիշեցք, որ հեղինակային Հսկող անունն առկա է նաև ստեղծագործության 95 գլուխներից 92-ի նույն ձևակերպմամբ այնքի ընկնող վերնագրերի մեջ. «Վերստին լաւելում... նորից Հսկողի», որի կապակցությամբ Մ. Արեղյանը նկատում է, որ Նարեկացին «ինքն իրեն հսկող է կոչում նաև Ողբերգության ամեն մի բանի վերնագրի մեջ»³:

Կարելի էր Մատյանից բերել Նարեկացու կյանքին վերաբերող այլ տվյալներ ևս, օրինակ՝ ՁԷ գլխի 47-րդ՝ «Եւ եթէ հասից յամս ծերութեան» տողը, որ հիմք է ծառայել Մատյանի գիտական բնագրի կազմողներին եզրակացնելու, թե «Նարեկացին իր երկը և հատկապես այս գլուխը գրելիս դեռ ծեր չէր»: Ի դեպ՝ այստեղ վկայակոչվում է նաև նույն տողի մասին միջնադարյան մեկնիչի կարծիքը. «Ձի ծեր չէր, յորժամ ասէր զայս և աղօթէր վասն հասանել ծերութեան»⁴:

Այսուհանդերձ, ելնելով այն փաստերից, որ տեղ են գտել Մատյանի տարբեր գլուխներում (Գ, 47-82; ԻԸ, 52-53; Ծ, 54-59; ՀԲ, 19-25 և այլն), պետք է ընդունել, որ Նարեկացին իր գրքով միաժամանակ հանդես է գալիս որպես ամեն դասի, սեռի ու հասակի մարդկանց մեղքերը, չար գործերը, մոլորություններն ու հոգեկործան արարքները մարմնավորողի դերում, իրեն համարում է մարդկային բազմատեսակ մեղքերի կրող, հետևաբար նաև՝ ողջ քրիստոնյա մարդկության ներկայացուցիչ:

Ունիմ զամենայն երկրի

Եւ եմ պատգամաւոր աղօթանուէր ամենայն աշխարհի:

(ԻԸ, 52-53)

Արդ, ես՝ ճշմարիտ պատկեր ամենայն երկրի,

Ջիմս խառնեալ ընդ մոցիմ պարտիս

Եւ ի մոցայոցմ զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ,

Նոքրք հեծեծեցից....:

(Ծ, 54-57)

Ես եմ ամենայնն եւ յիս ամենեցունն:

(ՀԲ, 57)

Անդրադառնալով Մատյանի մեջ առկա անհատականի և ընդհանրականի այս միասնության իրողությանը՝ «Գրիգոր Նարեկացի» դիմանկարային հոգվածում Ա. Չոպանյանը գրել է. «Ծայրէ ծայր, այդ գիրքը երգն է միակ հոգիի մը, անոր ցաւերուն, զմայլաճքներուն, դողերուն, բոլոր հուզումներուն: Եւ ինչ որ երգը կը լայնցնէ, մեծ արուեստի այն էական

³ Մամուկ Արեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 578:

⁴ Գրիգոր Նարեկացի, Մատենադարան, 1106:

յատկանիշն է որով գործը ընդհանուր և մասնատու է միանգամայն, մարդկային և միանգամայն անհատական. կը զգանք որ իր վրայ խօսած ատեն, քանաստեղծը ամբողջ մարդկությունն հոգին իր մէջ խտացած կը տեսնէ. ինքզինքը իմկած զգացող այդ էակը որ բարձունքներում աչքը չառած գոյություն կ'աղաչէ, այդ էակը ամբողջ մարդկային ազգն է⁵:

Ընդհանրացման այս հատկությունն, իհարկե, բացարձակապես պայմանավորված է քնարական սեռի բնույթով, որովհետև անձնական, անհատական մեծ տեղանքների, վեհ ու վսեմ ձգտումների, ազնիվ տառապանքների երգը սովորաբար ստեղծվում է մարդկանց համար, երանց սրտերում համապատասխան արձագանք առաջ բերելու զգացողությամբ:

Հարց է ծագում՝ գաղափարական ի՞նչ հիմունքով է Նարեկացու ստեղծագործության մեջ իրականացվել անձնականի և ընդհանրականի, անհատականի և հանրաճանաչի այս համատեղումը: Արդյոք դա զեղարվեստական ընդհանրացման հասնելու ուղղությամբ հեղինակի դավանած տեսական հայացքի արտահայտությունն է, որ նա փորձել է ներկայացնել նաև բաց հայտարարությամբ: Հարցադրումը մինչև օրս դուրս է եղել Նարեկացու մեկնաբանների տեսադաշտից:

Ասեմք, որ Նարեկացու գրչի տակ անհատականի և ընդհանրականի համատեղումը կապ չունի նրա գրական հայացքների հետ և բացառապես նրա քրիստոնեական աշխարհայեցողության արտահայտություն է: Խնդիրն այն է, որ Նարեկացու ընկալմամբ՝ քրիստոնյան եթե մարդկության մախառոր սխալն իր անձին չի վերագրում և բոլոր մարդկանց հանցանքները իրենը չի համարում, կորցնում է իր արդարությունը:

*Որ ըզսխալն Աղամայ անձին իւրում ոչ գրեսցէ
Եւ ըզմեղս ամենից ինքեան ոչ համարեսցի,
... Կորոյս գիւրն արդարութիւն:*

(Ծ, 21-22, 24)

Նույն միտքը, փոքր-ինչ այլ ձևակերպումով, արտահայտվել է նաև մի ուրիշ գլխում.

*...Սիրողն Աստուծոյ ի բոլոր սրտէ՝
Զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի,
Թէ՛ Մեղաք մեք ընդ հարս մեր, անօրինեցաք և յանցեաք:*
(ԱԱ, 31-33, տե՛ս նաև ՀԲ, 19-25)

Այսինքն՝ Աստվածասերն ամբողջ սրտով նախնիների հանցանքներն իրենն է համարում, թե՛ «Մեք մեղանչեցինք մեր հայրերի հետ, անօրինեցանք և հանցանք գործեցինք»:

Իսկ Նարեկացին ճշմարիտ աստվածասեր է և հենց այդ պատճառով էլ բոլորի՝ և՛ մեռածների, և՛ ողջերի հանցանքներն իրենն է համարում և իրեն կոչում ամենքի «աղոթանվեր պատգամավորը»՝ ընդհանուրի մեջ տեսնելով նաև իր անձը: Նշանակում է՝ բանաստեղծը մարդկության մեղքերի կրող է դառնում ոչ թե՛ վերուստ իրեն շնորհված բանաս-

⁵ Արշակ Չոպանեան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 10-11:

տեղծական կոչումով, այլ քրիստոնյայի իր վարքով ու հավատով: Այս մոտեցման թելադրանքով է, որ Մատթյանի մեջ միավորվում են անձնական և ընդհանրական մտահոգությունները: Ելակետ ունենալով սեփական հոգու փրկության համար իր ապրած խոռվքն ու բաղձանքները՝ բանաստեղծը, սերունդներին օգտակար լինելու նպատակով, դրանք հանձնում է թղթին, որպեսզի նրանք նույնպես կարդան իր տողերը, առանց լռելու, իր իսկ բառերով պաշտեն Աստծուն, խոստովանեն մեղքերը և այդ կերպ առնեն իր մատյանի մաղթանքների պաշտանին: Նարեկացին այդտեղ է տեսնում մաս իր հավերժությունը:

*Արդ, որ ոք եւ առցէ զայս դեղ մաղթանաց
Այսր մատենի պարկեշտականի՝ պաղատիլ սովաւ...
Եղէց եւ ես իմովս բանի կցորդեալ նմա...
Իսկ իմձ եղիցի պատգամս այս բանի
Արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի,
Որ փոխանակ իմոյ եղկելոյս անձին մահացոյի՝
Անդադար հնշմամբ հեծութեան լալոյ
Առանց լռելոյ միշտ աղաղակէ:*

(ԿԶ, 1-2, 4, 25-29)

Մատյանում ամենուր տեսնում ենք բանաստեղծին: Նա մի վիթխարի, ընդգծված մեծություն է, ուստի ստեղծագործելիս ոչ թե ստանձնում է այլոց ծայնափողը հնչեցնողի պարտականություն, այլ ընթերցողին ներկայացնում է իր անհատականության, իր հոգու խոռվքը՝ առանձնացնելով և պատկերելով այն հույզերը, մտորումներն ու տենչանքները, որոնք իր ըմբռնմամբ, իր ընկալմամբ ընդհանրական են մասն այլ քրիստոնյաների համար: Ուրեմն Նարեկացու և նրա քնարական հերոսի միջև չկա նկարագրի շեղում: Մատյանի քնարական հերոսն ինքը բանաստեղծն է: Եվ իրավացի է Ա. Ղազիմյանն այն դեպքերում, երբ հնարավոր է համարում որոշ նույնականություն տեսնել բանաստեղծի անձնավորության և Մատյանի քնարական հերոսի միջև, միաժամանակ անընդունելի են նրանց՝ միմյանցից տարանջատելու փորձերը:

Նարեկի քնարական հերոսը համակված է հանցապարտության զգացողությամբ: Նա ճշմարիտ քրիստոնյայի խոնարհությամբ համոզված է, որ իրենից ավելի մեղավոր, ավելի չարագործ մարդ չկա աշխարհում:

*Ո՛չ ոք մեղատու իբրեւ զիս,
Ո՛չ ոք անօրէն, ո՛չ ոք ամբարիշտ,
Ո՛չ ոք անիրաւ, ո՛չ ոք չարագործ,
... Ես միայն, եւ այլ ո՛չ ոք:*

(ՀԲ, 50-52, 56)

Նարեկացու հերոսն Աստծու առաջ բաց է անում իր սիրտը, խոստովանում իր բազմաթիվ, անհամար մեղքերը, թողություն հայցում:

*Իսկ մեղանք իմոց յանցանացս՝ անթիւք,
Զորս անհնար է առնուլ ի միտ:*

(Զ, 39-40)

Բայց Մատյանի մեջ թվարկված մեղքերը (Ե, 46-90; Զ, 25-40, 104-124; Է, 22-85 և այլն) ավելի երևակայական հայտարարություններ են, քան իրական հանցանքներ: Օտտ դեպքերում այդ թվարկումները ոչ միայն գուրկ են առարկայականությունից, այլև ակներևաբար ողբերկ յուրահատուկ հարասությունների աղերսվում են աստվածաշնչական այլևայլ գրքերից հայտնի արտահայտությունների հետ (Հեզամատյան, Թագավորաց գրքեր, Մարգարեությունք, Ավետարաններ և այլն): Այնպես որ՝ Մատյանի մեջ մեղավորության գիտակցությունը կամ մեղքի գաղափարը մշտապես առկա է, իսկ բուն հանցակազմը՝ բացակա:

Նարեկացու հերոսի համոզմամբ՝ առհասարակ մարդն ի ծնե մեղավոր է, թաթախված է բարոյական պես-պես ախտերի մեջ, տարված է ստոր կրքերով ու մամիր գործերով: Ոչ մի մարդ չի կարող Աստծու առաջ պարծենալ, թե իմքն արդար է ու երբեք չի ճաշակել աշխարհի մահացու հաճույքները:

Մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ,

եւ Ո՛չ ոք է արդարն և ո՛չ մի...

Թե՛ Ո՛չ երբեք շնացալ, ո՛չ պոռնկեցալ

եւ ո՛չ զաշխարհիս իմշ համբուրեցի ճաշակս մահու:

(ՀԲ, 11-12, 29-30)

Ստեղծագործության տարբեր գլուխներում շոշափվում է մարդու մաքրագործման, արատավոր ախտերից, մեղքի ապականությունից թողություն ստանալու խնդիրը, որ հնարավոր է իրականացնել միայն անկեղծ խոստովանությամբ, ապաշխարանքով ու մարդասեր Աստծու քարեզուր ժամդակությամբ:

Թուսա՛յ Աստուած, խոստովան լեն՛ր, եւ մա հոգայ վասն քո:

(ԽԴ, 42)

Աստված ամենակարող, անհիշաչար և ողորմած այն էությունն է, որ խորհրդանշում է բարության ու կատարելության մասին մարդկային բարձրագույն իդեալը: Աստված փրկություն է պարգևում մարդուն, մեղքի մորիկը դարձնում քավության զեփյուռ, բարկության հուրը փոխում անձրևի (ԿԳ, 6-8):

Մատյանի բովանդակությունն սկսվում և զարգանում է քնարական հերոսի տարաբնույթ ապրումների՝ մեղքի զգացողության, անկեղծ զղջումի, կորստյան սարսափի, տառապագին հեծեծանքների, փրկության հույսի և դառն հիասթափության փոխմիջոցով: Մատյանի մեջ արծարծվող տարբեր խնդիրներն ու զգացմունքները սերտորեն կապակցված են միմյանց: Նկարագրված յուրաքանչյուր հոգեվիճակ յուրովի աղռնչ-

վում է մախորդին և միաժամանակ մախապատրաստում հաջորդի բնույթը: Օրինակ՝ ԺԲ քանի սկզբի հատվածում բանաստեղծն արտահայտում է այն միտքը, թե քանի որ մախորդ գլուխներում ինքն արդեն հուսահատության խոսքերով մերժել է իր անձը և տարակուսանքների հեծանով մահու չափ ձաղկել իրեն, ուստի այժմ, վերադառնալով փրկության հույսին, համարձակվում է Սուրբ Երրորդությանը կանչել օգնության (ԺԲ, 1-5):

Մատյանում՝ մարդու փրկության գաղափարը ի վերջո հանգում է Աստծու հետ միավորվելու միստիկական գաղափարին: Քնարական հերոսը վստահ է, որ մաքրագործման ճանապարհով և մարդասեր Արարչի գթությամբ ինքը կկարողանա ազատվել երկրային հանցանքներից, մահվանից հեռո՜հ հարության օրը, մերձենալով Աստծուն, կմիախառնվի օրա էությանը և այդ կերպ կհասնի անմահության:

*Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր,
Թիշատակ եղեալ մեծիդ երախտեաց,
Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին
Եւ ընդ հաստողիդ միանալ...:*

(ԾԲ, 53-56)

Նաև՝

*Ջի ամենայնի մահացեալ հոգիս մարմնովս մեղաց
Ընորհօք Քո, գթա՛ծ, ի Քեզ գօրացեալ՝ Քեւ նորոգեցայց,
Ջատել ի մեղաց անմահ կենդանութեամբ
Ի յարութեանն արդարոց, Հօր քում օրհնեցեալ:*

(ՂԵ, 44-47)

Բայց այն գիտակցությունը, թե աստվածանալու ձգտումը հակադիր կամ անհամատեղելի է մշտապես մեղքեր գործող մարդկային բնությանը, քնարական հերոսի հոգում առաջ է բերում վհատություն և պատճառ դառնում խոր ողբերգության:

*Ի բարեպաշտելս իմում՝ զայթակղիս,
Մինչդեռ աղօթեմս՝ եւ վրիպիմ...
Թարդարանալս իմ՝ եւ մեղանչեմ...
Ծաղկիմ, եւ ո՛չ պտղաբերիմ,
Ասեմ, եւ ո՛չ առնեմ,
Խոստանամ, եւ ո՛չ կատարեմ...
Մտնեմ ի բոյճն աղանձի, եւ անդուստ ագռաւ ելանեմ,
Մաքրիմ, եւ ալլ մրճոտիմ,
Լուանիմ, եւ մովին զագրանամ:*

(ՀԱ, 34-37, 45-47, 73-78)

Նարեկի քնարական հերոսի ողբերգությունը պայմանավորված է մարդու երկփեղկված էությունը. մարդն իր բնությամբ ու գործով լույսի և ստվերի շաղախ է: Նա մի կողմից համակված է հոգու փրկությանը հասնելու, մեղքերից մաքրագործվելու բուռն և անկեղծ ձգտմամբ, մյուս կողմից՝ ունի սեփական էության շարունակական մեղսագործության գիտակցությունը: Այս երկու կողմերը մեր հոգեկան աշխարհում մերկայացնում են անլուծելի մերհակություն: Տվյալ մերհակությունն իր ողջ ողբերգականությամբ ժամանակին դիպուկ նկատել է մեծամունց գրող Լևոն Օսմոնյանը և տվել հետևյալ պատկերավոր ձևակերպումը. «Նարեկը» մարդկային հոգիի մը խորունկ ալեկոծումն է, փոթորիկի բերանն ինչպես քրիստոնեայ հոգիի մը, որ ծովերու ջրերուն պէս շարունակ դէպի վեր, դէպի երկինք կը ձգտի և ծովերու ջրերուն պէս շարունակ վար կը թափի իր խեղճ գոգը»⁶:

Փորձենք ընդհանրացնել ասվածը.

ա. Նարեկացու Մատյանում առաջին դեմքով հանդես եկող անձնավորությունն ինքը բանաստեղծն է.

բ. Որպես ստեղծագործության քնարական հերոս՝ Նարեկացին սեփական մտորումների, հոգեկան տազնապների ու տեղեկանքների, մեղքերի խոստովանության զեղարվեստական վերարտադրման միջոցով արձագանքում է հանուր մարդկությանը հուզող խնդիրների՝ ունենալով քրիստոնեական այն հայացքը, թե ամեն մի ճշմարիտ աստվածասեր պետք է բոլոր մարդկանց գործած մեղքերը իրենը համարի.

գ. Հանցապարտության զգացողությամբ տառապող քնարական հերոսը վստահ է, որ անկեղծ խոստովանությամբ, հոգեբույժ զղջանքով և մարդասեր Աստծու գթությամբ հնարավոր է մաքրվել երկրային մեղքերից և հարության օրը, միախառնվելով աստվածային էությանը, հասնել անմահության: Բայց այս հույսն ամեն անգամ վերածվում է ցավագին ողբերգության այն գիտակցությունից, թե շարունակաբար մեղքեր գործող մարդկային բնության պատճառով վերջնական մաքրագործումը դառնում է անիրականանալի:

⁶ «Լևոն Օսմոնյանի երկերը», 9-րդ հատոր, Պեյրուք, 1946, էջ 113:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԵՂԱ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱՐԵԿԸ XXI ԴԱՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Այս՝ զեկուցման մեջ Նարեկի գրության 1000-ամյա պատմությունից մի քիչ հեռանալով՝ ավելի պետք է փորձեմ անդրադառնալ ներկայումս Նարեկի կիրառման աճիրածեղ-տությանը գործնական աստվածաբանության մեջ, որն իրականացնելու համար պետք է փորձեմ.

ա. մախ շատ հակիրճ կերպով բնութագրել ներկա մեր ժամանակի Ռոզնոր կացությունը.

բ. տահմանել, թե ի՞նչ վիճակի մեջ է գտնվում գործնական աստվածաբանությունը, ինչպիսի՞ դժվարությունների և հնարավորությունների առջև է այն այսօր կանգնած.

գ. և վերջապես՝ թե ինչպե՞ս կարող է Նարեկը օգնել ժամանակակից մարդկությանը ընդհանրապես և նպաստել գործնական աստվածաբանությանը մասնավորապես:

ա. Ներկա ժամանակի Ռոզնոր կացության բնութագրումը

Խոսելով արդի մեր ժամանակի մասին, պետք է ասել, որ ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլև առհասարակ ողջ աշխարհում ցանկացած աճհատի համար առավել քան երբևէ աճիրածեղ է գտնել, հասկանալ և ըմբռնել մարդու բուն կոչումն իր կյանքում: Մարդկության պատմության մեջ երբեք չի եղել մնաց դարաշրջան, որ այսքան մեծ թվով տարատեսակ ուղղություններ և այսչափ իրարից տարբերվող և մուլտիսկ իրար հակասող գաղափարախոսություններ մինևույն ժամանակ մինևույն երկրում տարածված լինեին: Եթե մեկ հպանցիկ հայացք նետենք այսօրվա հասարակությանը, ապա կտեսնենք, որ մարդկությունը չուճի այլևս կյանքի մեկ համընդհանուր հասկացողություն: Կան մարդիկ, որոնք մեր ավանդական հայ մշակույթին են կապված, կան ուրիշներ, որոնք արևմտյան ազատամտության երկրպագուներ են, հմանք հետևում են տարբեր կուսակցությունների, մյուսները աղանդավորական խմբակների ազդեցության տակ են և այլն և այլն և այլն...

Հստակ է մեկ բան, որ մարդկությունն այսօր իր առջև չունի մեկ օբյեկտիվ, համընդհանուր ուղղություն, ո՛չ հասարակական-քաղաքական և ո՛չ էլ Ռոզնոր-կրոնական կյանքում: Ինչպես տեսնում ենք, երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից շատերը դրական են համարում մեծ «անսահմանափակ» իրավիճակը, քանի որ ազատորեն կարողանում են դրսևորել իրենց անհատականությունը և իրենց ցանկությունների համար բավարարում

* Որպես զեկուցում կարդացվել է դեկտեմբերի 27-ին Ա. Էջմիածնում Նարեկի գրության 1000-ամյակի օրվա զինաժողովում:

գտնել: Իսկ ի տարբերություն երիտասարդության՝ ավագ սերնդի ներկայացուցիչներից շատերը կասկածամտությամբ են մոտենում միևնույն այս խնդրին և հարց են բարձրացնում, թե արդյոք այս տեսակ բացարձակ ազատությունը և անհատականության պաշտամունքը կարո՞ղ է մարդուն յիարժեք երջանկության հասցնել: Եվ բնականաբար իրենց առջև ունենալով Արևմուտքում ազատամտության պատճառով առկա դառը փորձառությունները՝ անվստահորեն են նայում ներկայիս բազմամշակութային իրավիճակին և պահանջում են ավանդական համընդհանուր գաղափարախոսության վերականգնում:

Եվ այսօր յուրաքանչյուր անձ՝ թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական, պետք է նախևառաջ իր համար հստակ կերպով սահմանած լինի, թե ո՞վ է առհասարակ մարդ արարածը, որո՞նք են նրա ներքին, էական հատկանիշները, ո՞րն է նրա կյանքի խորհուրդը և իմաստը: Ահա այս հիմնական գիտելիքը մարդկային անձի և նրա կյանքի կոչման մասին անհրաժեշտ է մեզ բոլորիս, որպեսզի, ինչպես ասացինք, այդ հիմքի վրա կարողանանք կառուցել մեր այսօրվա ներքին անհատական և արտաքին հասարակական կյանքը:

Այս առումով ընդհանրական կյանքի որևէ գործնական մոդելային նորույթ կամ հասարակական նոր գաղափարախոսություն առաջ քաշելիս չպետք է անտեսվեն անցյալի ձեռքբերումները: Եվ այդ առումով Եկեղեցում շուրջ նրկու հազարամյակների պատմության ընթացքին մեր Սուրբ Հայրերը, ի դեմս Գրիգոր Նարեկացու և մյուս բոլորի, գերազանց կերպով կարողացել են սահմանել այդ գոյութենական նշանակություն ունեցող գիտելիքները և փոխանցել հետագա սերունդներին իրենց աստվածաբանական գրվածքների միջոցով:

բ. Գործնական աստվածաբանության արդի նշանակությունը

Այժմ, երբ մենք խոսում ենք առհասարակ աստվածաբանության մասին, շատ-շատերի համար դա մի վերացական և անըմբռնելի ոլորտ է: Այսօր Դուք կարող եք հազարավոր մարդկանց հանդիպել, որոնք բավականին լուրջ կրթություն ունեն, սակայն բնավ չեն կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարող է Երևանի Պետական Համալսարանում Աստվածաբանության ֆակուլտետ գոյություն ունենալ: Անձամբ ինձ բազմիցս տարբեր մարդիկ միևնույն հարցն են ուղղել. «Հայր Սուրբ, ասացե՛ք՝ խնդրեմ, ինչո՞վ պետք է զբաղվեն այդ ֆակուլտետն ավարտող ուսանողները...»

Այս հարցը տվող մարդկանց աչքերում իսկապես շփարվածություն է երևում, որովհետև նրանք չեն կարողանում իրենց մտքում համատեղել հոգևոր այդ գիտությունը գործնական կյանքի հետ: Սակայն թե՛ մեր ներքին անհատականությունը հավասարակշռելու և թե՛ հասարակական կյանքում դրական գորգացում ապահովելու համար մենք կարիքն ունենք օգտվելու աստվածաբանական այն հարուստ ժառանգությունից, որը դարերի ընթացքում սերնդն սերունդ՝ Հիսուս Քրիստոսից և իր առաքյալներից սկսած փոխանցվել ու հասել է մեզ:

Մեր Եկեղեցու պատմության ընթացքին, շնորհիվ Սուրբ Հայրերի եռանդուն ջանքերի, քրիստոնեական հավատքի վարդապետությունը մշակվել և ուրույն կերպով ձևավորվել է Սուրբ Գրքի հիման վրա, ապա Տիեզերական ու այլ տեղական ժողովների ընթացքին

հատակ կերպով սահմանվել են անհրաժեշտ աստվածաբանական նորմերը, այնպես որ Եկեղեցու ցանկացած անդամ կարողանա իր գործնական կյանքում առաջնորդվել այդ հավատքով և առողջ ու խաղաղ մերաշխարհ ունենալ:

Ողջ աշխարհում չկա այնպիսի մի վայր, ուր մարդկությունն առանց մերքին կանոնադրության, առանց իր ուրույն *հավատամքի* ապրի: Եթե որևէ մի տեղ չլինեն այդ օրինակաճառ չափանիշները, ապա տվյալ վայրում կստեղծվի կա՛մ միապետական դիկտատուրա և կա՛մ էլ՝ հստակ հանուր անարխիա: Մեր ժողովուրդն, իբրև առաջին քրիստոնյա պետություն, արդեն իսկ Դ դարում գիտակցել է այս ամենը և հասարակական կյանքին առնչվող բոլոր կանոնները ճիշմանվորել՝ ըստ Հիսուս Քրիստոսի պատվիրանների: Անգամ մեկ հալածողի հայացք մետեղով մեր պատմական կանոնագրքերի՝ կարող ենք համոզվել, թե ժամանակին որքան սերտ է եղել այդ կապվածությունը կրոնական գիտակցության և ժամանակին որքան սերտ է եղել այդ կապվածությունը կրոնական գիտակցության և գործնական կյանքի միջև: Կարելի է միանշանակ կերպով եզրակացնել, որ քրիստոնեությունն հավիտենական ճշմարտությունները մեր Սուրբ Հայրերի աստվածաբանական աշխատությունների միջոցով մի տեսակ *թարգմանվել* են պարզ ժողովրդի մտախոյ և, նրանց կողմից ընդունվելով, հասարակական կյանքի մնայուն գործնական չափանիշներն են դարձել:

Ուստի աստվածաբանությունն այն անհրաժեշտ միջնորդն է, որը դարերի ընթացքում մարդկությանը մեկնել և հասկանալի է դարձրել հավիտենական ճշմարտությունները, որոնք ոչ թե պարզապես մարդկային մտքի համար լոկ տեսական զբաղմունք են մնացել, այլ ուղղակիորեն մեր անհատական և հասարակական կյանքի ուղենիշներն են եղել:

4. Նարեկի գործածության անհրաժեշտությունը

Գալով ներկայիս Նարեկի կիրառման խնդրին, պետք է ասենք, որ այն այսօր, ցավոք, սահմանափակ վիճակում է: Եկեղեցու պարագային այն կիրառվում է Հանգստյան ժամերգության աղոթքներում (ինչպիսիք են՝ «Որդի Աստուծոյ»-ն և «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»-ն), Սուրբ Պատարագի ժամանակ՝ պատարագիչ քահանայի ծածուկ աղոթքներում և Մաշտոց ծիսարանի բժշկության աղոթքներում: Կարելի է նաև հիշել, որ, ժողովրդական սովորության համաձայն, մեր ազգակիցների կողմից Նարեկը երբեմն դրվում է հիվանդների բարձի տակ, որպես բուժարար գորություն:

Այստեղ մի կարևոր հարց է առաջանում. եթե մենք սահմանափակվենք միայն ու միայն այսքանով, ապա սա կարելի է բավարար համարել: Այսինքն՝ արդյո՞ք Ս. Գրիգոր Նարեկացին իր համճարեղ գրվածքը միայն նրա համար է մեզ ավանդել, որպեսզի հոգևորականները մասնակիորեն ընթերցեն դա որոշ արարողությունների ընթացքում, իսկ ժողովուրդը պարզապես այն իր բարձի տակ պահի... Պատասխանը միանշանակ է՝ «Ոչ»: Նարեկացու մեծագույն ստեղծագործությունը շատ ավելին է իր մեջ պարունակում, և կյանքում զոհն մեկ անգամ այս գիրքն ընթերցողը մեզ հետ պետք է համաձայնվի, որ «Մատյան ողբերգությանը» չափազանց խորը աստվածաճաշողություն, վարդապետական ուսմունք և երկնային սուրբ լույս է իր մեջ պարունակում:

Եթե մենք փորձենք Նարեկի մեջ առկա աստվածաբանական եզրերի առանձին բովանդակություն կազմել, ապա այնտեղ չափազանց տարբեր, խորը թեմատիկաներ մեր առջև կհայտնվեն, քանզի Ս. Գրիգոր Նարեկացին միմիայն Աղոթամատյան, այսինքն՝ պարզապես աղոթքների ժողովածու չի ստեղծել, այլ այդ աղոթքների շղթայի մեջ բազմազան կարևորագույն հոգևոր գիտելիքներ է համախուսել: Օրինակ՝ նրա ցանկացած դրույթ ունի իր աստվածաշնչային հիմնավորումը, ցանկացած հաստատում միայն իր մտքի երևակայությամբ չի պատկանում, այլ ուղղակիորեն բխեցվում է Հին կամ Նորկտակարանյան համապատասխան հատվածից կամ խոսքից: Այսինքն՝ շատ հստակ կերպով ներկայացվում են աստվածաշնչյան տարբեր հատվածներ և ուղղակիորեն մեկնաբանվում կամ զարգացվում Սուրբ Գրիգորի կողմից:

Նարեկում հրաշալիորեն ներկայացվում է նաև քրիստոնեական մարդաբանությունը: Խոսելով իր զգացած մեղանչական թերությունների և նաև արդարների հոգևոր մաքրության մասին, Նարեկացին մանրակրկիտ կերպով մատնանշում է մարդկային էության ընդհանուր ծալքերը:

Նույնպես մատնանշելով հոգու դարմամման միջոցները, նա հիանալի կերպով բացատրում է Քրիստոսի ջերած փրկության եզակիությունը:

Նարեկում զտնում ենք նաև՝ բազմաթիվ այլ աստվածաբանական նյութեր և հասկացություններ, ինչպես, օրինակ, արարչագործություն, մեղք, Աստծո հայտնություն, վախճանաբանություն և այլն: Այսպիսով, ըստ իս, կարելի է միանշանակ կերպով ընդունել, որ նա իր ողբերգության մեկ ամփոփ հատորակով կարողացել է ի մի բերել բոլոր կարևորագույն հոգևոր հարցերը և աստվածաբանական հիմնախնդիրները:

Սակայն այդ ամենը նա զուտ ցուցադրելու համար չէ համատեղել, այլ այն հույսով, որ պեսգի հետազայում ընթերցողներն օգտվեն այս բոլոր ճշմարտություններից և կիրառեն դրանք:

Եզրակացություն

Հետևաբար, Նարեկը մեզ համար պետք է լինի ոչ թե միայն ու միայն անհաղորդ և փակված մեացած ինչ-որ մեկ թանգարանային մատյան կամ հնատիպ գիրք, այլ ուղղակիորեն պետք է կենդանի ներկայություն ունենա քրիստոնյա հավատացյալների հոգիներում: Եթե մենք այսօր փնտրում ենք անհատական և հասարակական կյանքի չափանիշներ, ապա պետք չէ այս ու այն կողմ ընկնենք և իզուր տեղը մեր ումերն անիմաստ փնտրտուքի մեջ վատնենք: Ոչ մեկ քաղաքական կամ շինծու-աղանդավորական գաղափարախոսություն չի կարող այսօր համընդհանուր չափանիշ դառնալ մեր հայ իրականության համար: Պատճառն այն է, որ բոլոր այդ նորամուտ գաղափարախոսությունները մեզ նման սխալական մարդկանց կողմից են ստեղծված, ուստի չեն կարող ինքնին կատարյալ և անսխալ լինել: Գոյություն ունի միայն մեկ ճշմարտություն՝ Աստուծո խոսքը, որն աշխարհ է եկել Աստծո Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի հայտնությամբ, այն ժամանակին ընդունվել է առաքյալների կողմից, որոնց էլ իրենց հերթին այդ աստվածային լույսը փո-

խանցել են մեր Սուրբ Հայրերին: Քրիստոնեական այս վարդապետությունը, որն արտա-
ցողված է մեր Եկեղեցու սրբազան ավանդության մեջ, պետք է լինի մեր միակ չափանիշը:

Այլապես եթե մենք այս անցումային պահին միայն վարչական և օրենսդրական հար-
ցերի մեջ խորասուզվենք, ապա կհայտնվենք միջնադարյան կաթոլիկ Եկեղեցու նույն
նզգնածությունից իրավիճակում, որն այն աստիճանի ընկավ կանոնակարգության և համա-
կարգային սուբորդինացիայի հարցերի ետևից, որ անգամ բանադրանքի ենթարկեց Մայս-
թեր Հքթարտի նման մի հզոր միասնիկ անձնավորության, որը Սուրբ Գրիգոր Նարեկացու
պես հոգևոր կյանքի մեջ չափազանց խորը ներթափանցող հեղինակ էր:

Եվ նաև՝ եթե մենք ներկայիս հարացույցի փոփոխության այս իրավիճակում պարզա-
պես սահմանափակվենք մակերեսային գիտելիքներով և Սուրբ Գրքի մեկնության, դավա-
նաբանական ու գործնական աստվածաբանության հարցերում ամեն ինչ թողնենք յուրա-
քանչյուր անհատի սուբյեկտիվ մոտեցմանը և իմպրովիզացիային, ապա վտանգված ենք՝
շուտով հայտնվելու ճիշտ բողոքական ազատամիտ քրիստոնեության ժամանակակից
այն կոնտեքստում, ուր յուրաքանչյուր անձ կամ փոքրիկ խմբակ յուրովի և իրենց քմահա-
նույթից համապատասխան են մեկնում ավետարանական պատգամները և ի վերջո, բա-
ցարձակապես զրկվելով միաբանությունից ու համախմբվածությունից, հայտնվում են
տարանջատված շիլաշփոթային մի իրավիճակում:

Մեր սրտագին հույսն է և անկեղծ մաղթանքը, որ Աստուծո օգնությամբ մեր Եկեղեցին
ու մեր ժողովուրդը հեռու մնան նման փորձություններից: Մենք փոքրաթիվ ազգ ենք և
չենք կարող դիմանալ «բարդուղիմետյան գիշերների»: Ուստի որքան ավելի շատ մենք
զաղափարական և կրոնական հողի վրա անկայուն լինենք, այնքան ավելի ու ավելի է
տկարանալու մեր Հայրենիքի իրավիճակը և խափանվելու է մեր ընդհանրական կյանքը:

Ուրեմն տա Աստված, Սուրբ Գրիգոր Նարեկացու սրտագին աղոթքների բարեխոսու-
թյամբ, որ մեր Եկեղեցին, վերստին Սուրբ Հայրերի ժառանգությամբ մերժնչվելով, լիար-
ժեք կերպով իրագործի իր աստվածային կոչումն ու առաքելությունը և առաջնորդի մեր
քոլոր հայորդիներին դեպի լույս աստվածգիտություն:

ՎԱՐՂԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻՆ ՈՒ ՆՐԱ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ

Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը (1780-1799 թթ.) մամականագրական աշխույժ կապերի մեջ էր 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման հնդկահայ կենտրոնի (Մադրասի քաղաքական հայրենասիրական խմբակ) ամենաեռանդուն գործիչներից մեկի՝ Շահամիր Շահամիրյանի հետ: Իր մամականերում Կաթողիկոսը Շ. Շահամիրյանին մշտապես տեղեկություններ էր հայտնում Անդրկովկասում և, մասնավորապես, Հայաստանում տեղի ունեցած քաղաքական ամցողարժի, եկեղեցական խնդիրների, էջմիածնում ծավալված շինարարության և Գրիգոր Լուսավորչի անվան տպարանի աշխատանքների մասին: Նրանց մամականագրության մեջ քննարկման առարկա էին դարձել երկիրն օտար թռնակալ տիրապետությունից ազատագրելու, ժողովրդի լուսավորության գործն առաջ բռնելու խնդիրները:

Արդեն առիթ ունեցել ենք գրելու մրանց մամականագրության մասին¹: «Դիվան հայոց պատմության» հոր շարքի առաջին և երկրորդ հատորներում լույս ենք ընծայել Շ. Շահամիրյանին ու մրա հարազատներին հասցեագրված Ղուկաս Կարնեցու մի քանի անտիպ մամականեր²: Ստորև հրապարակում ենք Շ. Շահամիրյանին ուղղված Ղուկաս Կարնեցու 13 հունիսի 1798 թվակիր մամակը՝ մրա դստեր՝ Թամարի մահվան կապակցությամբ, ինչպես նաև Շ. Շահամիրյանի մահվան առթիվ մրա որդի Հովհաննեսին ու թոռանը՝ Նազար Հակոբյանին 1799 թ. ապրիլին վեհափառի գրած ցավակցական մամակը:

Հարկ է մշել, որ ապահովության համար Կաթողիկոսը երբեմն Շ. Շահամիրյանին, ինչպես և մի քանի այլ անձանց մամակները պատրաստում էր երկու օրինակից՝ «համօրինակ», և ուղարկում տարբեր ճամապարհներով: Այս ձևով է գրվել հրապարակվող մամակներից առաջինը և ուղարկվել Կ. Պոլսի վրայով, մյուսի ուղարկման վայրը չի մշված: Մեծ մասամբ ուղարկում էին նաև հաղդադի, իսկ ոչ հաճախ նաև Պետերբուրգի վրայով: Երբեմն այդ «համօրինակ» մամակները գրվում էին տարբեր ժամանակներում և շարադրված լինելով մույն հարցերի շուրջ՝ առանձին դեպքերում որոշ չափով տարբերվում էին միմյանցից: Գյուտ քահանա Աղանյանցը, որը մեծ վաստակ ունի Կաթողիկոսական փաստաթղթերի հրատարակության ասպարեզում, «Դիվան հայոց պատմության» Ա-Բ հատորում

¹ Վարդան Գրիգորյան, Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի մամականագրությունը Շահամիր Շահամիրյանի հետ, «Էջմիածին», 1998, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 103-113:

² Դիվան հայոց պատմության, Նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, 1780-1799, Աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, մույնը, հատոր Բ, Երևան, 2003:

[illegible]

Մեր հրատարակած մամուլում (№ 1) Ղուկաս Կարմեցիմ տեղյակ է պահում Ծ. Շահա-
միրյանցին 1796 թ. ռուսական արշավանքի մասին, որի ժամանակ ռուսական զորավարտա-
կանները հասել էին մինչև Գանձակ: Նա մշտն է, որ ռուսների մեջ է եղել մահ ռուսահայոց թե-
մի առաջնորդ Հովսեփ արքեպս. Արղունյանը: Թավոք այդ արշավանքը Եկատերինա Բ-
կայսրուհու մահվան պատճառով (1796 թ.) ընդհատվեց: Նրա զորքերը հետ գնացին և Ի-
րանի մոլորման շահ Աղա Մուհամադը ակտիվացրեց իր գործունեությունը Հայաստանում
ու հարևան երկրներում: Նամակից կարելի է պատկերացում ստանալ այդ ժամանակ
Անդրկովկասում ստեղծված խառը վիճակի մասին:

Երկրորդ մասակը ցավակցական բնույթ ունի: 1797 թ. Մադրասում մահացել էր Օսմանի Օսմանիյանը: Այդ ցավալի լուրը Վեհափառը ստացել էր Էջմիածնի նվիրակ Հակոբ արքեպիսկոպոսի մամակից, ուղարկված 1797 թ. (ամսաթիվը բացակայում է) Կալկաթայից: Ծավակցական մամակը հասցեագրված է Օ. Օսմանիյանի որդի աղա Հովհաննեսին և թոռանը՝ աղա Նազար Հակոբյանին: Այս մամակում Վեհափառը հանգուցյալին բնութագրում է որպես աստվածասեր, բարեպաշտոն, «կատարեալն ծերութեամբ և զարդարեալն խոհեմութեամբ, գեղական մեծաւ համբատով» մի հայրենասեր մարդու, որը խոհեմությամբ զարդարված բարոության օրինակ էր, փայլում էր համբերատարությամբ, օգտակար էր շատերին, հավետ հավատարիմ էր Ս. Էջմիածնին:

Ծ. Շահամիրյանի մահվամբ հայ ազատագրական շարժումը կորցրեց իր ոգեշնչողին, ղեկավարին, որը ջանք և միջոցներ չէր խնայում հայրենի երկրի ազատագրության գործը հեռու հեռվից կազմակերպելու համար: Նրա ջանքերին ենք պարտական ապագա Հայաստանի սահմանադրության՝ «Որոգայթ փառաց»-ի, «Նոր տետրակ որ կոչի հորդորակ»-ի, «Նշավակ»-ի և այլ արժեքավոր գրքերի հրատարակության համար: Գտնվելով ժամանակի առաջադիմական գաղափարների ազդեցության մեքեն» Ծ. Շահամիրյանը հանգել էր այն եզրակացության, որ ազատագրվելիք Հայաստանում ստեղծվելու էին համարապետական կարգեր:

³ Դիվանը հայոց պատմության, գիրք Ա-Բ (1780-1884), Թիֆլիս, 1893, էջ 30-31:

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ՆԱՄԱԿԸ ԾԱՀԱՄԻՐ ԾԱՀԱՄԻՐԹԱՆԻՆ

[1798 թ. 13 հունիսի] Թուղթ ի Հնդկիս ի քաղաք Մատրաս առ աղայ Օահամիրն, ի պատասխանի թղթոյն գրեցելոյ յամի Տեառն 1796 դեկտեմբերի ի 1, հանդերձ ծանուցմամբ որպիսութեան կողմանցս, և մխթարութիւն վասն մահաւան մեծ հարսիցն իւրոյ՝ Թամար խաթունից⁴:

Յորմէ ճշմարիտ սիրով և հոգևոր օրհնութեամբ և խաղաղական ողջունի, և Սրբոյ Իջման տեղոյս Քրիստոսի առատածաւալ շնորհիւ, ծանուցումն լիցի ազնուամեծար սիրելւոյդ մերոյ, հարազատ որդւոյ և քաջընտիր բարեկամի Սրբոյ Աթոռոյս՝ աստուածասէր և բարեպաշտ, վսեմախոհ և ճոխապատիւ աղայ Օահամիրիդ Սուլթանումեան:

Քանզի թուղթն ազնուոյդ, գրեցեալն յամի Տեառն 1796 և ի դեկտեմբերի 1, առ մեզ ժամանեաց յայսմ ամի, որ է ըստ թուաբերութեան Փրկչին 1798 և ի փետրվարի 15 ի վերայ կոստանդնուպօլսոյ: Որով նախ ծանուցեալ զքաջառողջ գոլոյն անձինդ պատուականի և դիր սրտի գտեալ՝ փառս մատուցաք Աստուծոյ:

Եւ ապա զամենայն օգտաւոր առաջադրութիւնս, թէ ի թուղթն յայն և թէ ի նախագուշակն տետեր տպագրեցելում, մի ըստ միոջէ ըմբերցեալ, հաւանեցաք բարիոք դիտաւորութեանցդ առ ստացումն արեւլաբնակ ազիցն մերոյ զահաւէտութիւն բարօրութեան: Բայց ի նոյն յիշեալ թուոյն և յօգոստոսի 12 գրեալ թուղթն քո մինչև ցալսօր ևս ոչ ժամանեաց մեզ, թուի թէ ի խոռոհ վրդովմանց նախանցեալ ամացն ուրեք ուրեք արգելեցան կամ թէ վատնեցան: Այլ առ մեզ ժամանեալ թղթովդ իմացեալ մեր գիտսանիւն առ քեզ թղթոյն մերոյ յամի Տեառն 1796 և ի մայիսի ելն գրեցելոյ, ստացաք զմիանտութիւն: Յայնմհետև և այսր ոչ ևս յաջողեցաւ մեզ գրել ինչ առ քոյդ ազնուութիւն, զի ոչ երբեք բացաք զաչս ի մրրկեալ ալեաց թշնամեաց մերոց հեթանոսաց:

Վասն զի թէպէտ ընդարձակ բացաւ դուռն այցելութեան ի հիւսիսոյ, բարեցօծար կամեցողութեամբ երջանիկ և մեծանուն կայսերութիւն⁵, և քաջազէն զումարտակ զօրաց մորաւնուհեալ ընդ ձեռամբ գդուռն երկաթի և անցեալ մինչև ցդարան դաշտ բանակեցան, յորոց և մասն մի եկեալ մտին ի Գանձակ Աղուանից, յամի Տեառն 1796, յամենանն դեկտեմբերի: Ընդ որս էր և արիաքան Յովսէփ արքեպիսկոպոսն:

Ուստի և յոյս եղև մեզ, թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ, սակայն առ տարաբախտութեան մերոյ, օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերութիւն, խափանեցաւ

⁴ Թամար խաթունը ոչ թե Շ. Օահամիրյանի մեծ հարսն էր, այլ դուստրը: Դա եղևում է տպագրվող մամակի մեջ եղած վկայությունից՝ «... ծանուցեալ էր զվախճանմամբ՝ զգաստամիտ և համեստ դստերն քոյ՝ ազնունի Թամար խաթունից»: Նույն ժամանակ (1799 թ. ապրիլին) Ղուկաս Կաթողիկոսը գրել է մեկ այլ ցավակցական մամակ տիկ. Թամարի մահվան կապակցությամբ, որի վերնագիրը բերում ենք ստորև. «Թուղթ ի Մատրաս առ պարոն Յարութիւն Թաղեանց և առ որդին իւր և զործակալն մեր՝ պարոն Յակոբն. մխիթարութիւն Թամարայ, որ էր կինն Յորա և մայր սորա, և դուստր աղայ Օահամիրին: Եւ դարձեալ մխիթարութիւն յաղագս մորին Օահամիրին մահաւան ևս, և յիշումն յառաջագոյն գրեալ թղթոցն մերոց» (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 450). էջ 2350-2351):

⁵ Խոսքը վերաբերում է Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդին (1729-1796 թթ.):

Մնացորդ բնակիչը՝ Տփիսխու, որը լուեալ զգալուստ ներքինույն ի Շուշի, զարհուրեալք կամէին ցրուիլ, և յորդորմամբ Յովսէփ արքեպիսկոպոսին փոքր մի դադարեցան, նոցա ևս զերծան ի կատաղութենէ անօրինին ի քառնի կենաց նորա: Եւ չքանալի սարտարն, որ զմաց ի Թէհրան առ ի թագաւորն, զրկեցաւ յաչացն, զի Բաբախանն յաջորդեալ գտնդի հօրեղբօրն, կուրացուցեալ է զնա: Փառք Աստուծոյ, որ գիտէ զչարսն չարեաւ կորուսանել: Եւ թէ այլ ևս ի՞նչ անցք անցին յերկիրս և ի կողմանս, աւելորդ է գրելն, զի ըստ զազանացն ամենեաց և վարք իրեանց:

Այլ յետ ներքինույն կործանմանց, մէլիք Ջումշուտն կասկածեալ յիբրաքիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփիսիս և ընդ Յովսէփ արքեպիսկոպոսին զնացին ի դուռն նորոյ կայսեր: Եւ մէլիք Ապովն ևս քանի հարիւր տուն ժողովըրդովք իւրովք չու արար ի տունն Վրաց և կայ այժմ ի Պալմիրաձոր կոչեցեալ գաւառին: Եւ Ռաբբանդու հայքն ևս տունք Եմ (500) ի դարձի զօրացն կամաւ իրեանց չուեցին ընդ նոսա յեկիրն Ռուստաց, որոց զորպիսութիւնն ի Յովսէփ արքեպիսկոպոսէն ունիս իմանալ:

Եւ մեք գրեցաք զթուղթ շնորհաւորութեան առ նորապետն կայսրն, և առ վազիրն և առ ոմանս եպիսկոպոսս, ծանուցանելով զոր ինչ հարկն էր, աղերս արկանելով վասն մեր ազանց: Լսեմք, թէ սիրով ընկալեալ է և սպասեմք պատասխանեացն մերոց¹⁵: Այլ զկնի անցինց յիշեցելոց, Երևանու նախնին իշխօցն, որ կալանաւորեցեալ կայր ի ներքինույն, ի յաջորդ շահէն արծակեցեալ ֆէրմանօք եկն նստիլ յԵրևան, արտաքոյ բերդին, յառաջ քան զսա ևս պահակք եկեալ մտին ի բերդն, դժնդակագոյնք քան զառաջին: Եւ մեք առ հարկին պահանջելոյ, յամսեանցն փետրվարի և մին ամի ընծայ լոյեցաք առ նոր շահն¹⁶, վարդապետաւ միով: Ընդ որում և զեպիսկոպոս մի եղեալ առաքեցաք ի նուիրակութիւն Ջուդայու, որ ի շահէն նոմոս¹⁷ առեալ, այնպէս երթիցէ, համարձակ շրջագայիլ, և զամենայն հոգևոր պէտս եկեղեցեացն լնուլ: Որք հասեալ են առ շահն, նա հաճութեամբ ընկալեալ է և ֆէրմանօք և խիւայիւք արծակեալ:

Բայց ի վերայ ամենայնի, տխրութիւն մեծ է մեզ տանն Վրաց տակաւին չգտանելն զամողորրութիւն: Զի Հերակլէս քաջընտիր արքայն Վրաց թէպէտ և ետես զկորուստ թըշմամույն իւրոյ, և զուրախակցութեան թուղթս գրեցաք առ իրեարս, սակայն ի Թէլուս բնիկ տեղին իւր հիւանդացեալ և անդէն կայ առեալ վասն զառամութեան, ի մին տարւոյ փետրվարին առ Տէր փոխեցաւ: Որոյ զնոգին Տէր լուսաւորեցէ և սիրելոյդ զերկար կեանս շնորհեցէ¹⁸:

Իսկ ի կենդանութեանն կտակաւ աւանդեալ էր իւրոցն և ամենայն իշխանացն՝ զառաջ որդին իւր զԳեօրկի խանն իմանալ իրեանց արքայ: Եւ զկնի վախճանմանն նա երևի յա-

¹⁵ Ռուսաց Պապել Առաքիմ կայսրին Ղուկաս Կարմեցու շնորհավորական նամակը թվագրվել է 1797 թ. հուլիսի 22-ին: Կայսրի պատասխան հրովարտակը ուղարկվել է 1798 թ. փետրվարի 26-ին, որով նա հայտարարում է, թե «ողջ ազնիվ հայ ժողովրդին» վերցնում է իր կայսերական ողորմածության և պաշտպանության մերքո (Մատենադարան, Արխիվային Բաժին, Ռուսական ցարերի և Նապոլեոն Ա-ի հրովարտականքը, № 21):

¹⁶ Նոր շահը Աղա Մուհամադ շահի եղբորորդի Բաբա խանն էր, որը ստացավ Ֆաթալի շահ անունը (Մատենադարան, Ձեռ. № 4501, էջ 559-560ա):

¹⁷ Նոմոս (Ռուս.՝ - օրենք, կարգ, կանոն, կանոնակալ թուղթ, նամակ):

¹⁸ Քարթլ-Կախեթի թագավոր Հերակլ Երկրորդը մահացել էր 1798 թ. հունվարի 11-ին, 78 տարեկան հասակում:

չորդ, որում և մեք շնորհատրութեան թուղթ և ընծայս առաքեցաք¹⁹։ Եւ Երևանո խանն մտեալ ի մէջ, գթութի Ռպատարկութեան գրեցոյց մտա առ Մոր շահն։ Այլ քաղաքացիքն յանգեալ տարոյ ճոյններին թէ յերկիւղէ յարուցման լեզկեաց, և թէ մանաւանդ ի ժանտայտեւն ցրուեալք կան ի լեռնակողմն տեղիս, և դեռ չկարեն դառնալ ի քաղաքն։ Եւ ճորոգ արքայն ևս ի կախէթ կայ։ Աստուած այցելութիւն արասցէ խղճալի քաղաքին ճորոգութեան։

Արդ, խոհական սիրելիդ իմ, ահա անցք կողմանցս և երկրիս այսպէւ, և վաճառութիւն մտրայնոցն ևս յայսցանէ վշտաւոր և լի ամենայն արհաւորք, իսկ եղանակքն զգուշութեան և խոհեմաբար վարեցմանց, զորս գրեալ էիր, յայնժամ յաջողէին ի կիրառնուլ, յորժամ վե-
րոյիշեալ դտուն այցելութեան ի բաց մնայցէր, այլ եթէ փութամակի դարձեալ փակեցաւ,
անգոցնականք ի զօր հացին առնել զիմն: Ապաքէն վերստին մնամք ողորմութեանն Աս-
տուծոյ, որ զհարդ և կամիցի, այնպէս տնօրինեսցէ վասն ազին մերոյ: Գոհանամք զՏեառ-
նէ ամենակարողէ, որ յայսքան բազմապատիկ այլեկոծութիւնս պահպանեաց զյարկս փա-
ռաց սրբութեան իւրոյ անդդողելի յարբանեկացն Բելիարայ, հանդերձ պաշտօնէիք և բա-
րեգարդութեամբք իւրովք, թէև վնասքն անցեալ ըստ չափ:

Թաղազս նուիրակին մերոյ՝ Թակոբ եպիսկոպոսին, զոր գրեալ ժամանել զոյ ի Բումբա-
յի, յիրաւի և ինքն զերկուս թուղթս էր գրեալ մեզ անտի, ուր խաղաղութեամբ հասեալ էր:
Բայց զի զթուղթն մեր առ ազնուութիւն ձեր, որ շուտով չէր յուղարկեալ, ոչ հաւանեցաք
ընդ այն, այլ Աստուծով միճչև ցհասանիլ այսմ գրոյ, ինքն ևս եկեալ լինի յաստուածապա-
րադարէ, և զամենայն ինչ խօսեցեալ ընդ սիրելիսդ:

Իսկ ընդ զանազան ծանուցմանց, մաև մեծաւ տխրութեամբ ծանուցեալ էր զվախճանմանէ զգաստամիտ և համեստ դատերն քո՝ ազնուի թրամաշ խաթունի: Ընդ որ և մեք տրտմեցաք, գիտելով թէ և սիրելոյդ ոչ սակաւ կսկիծ իցէ եղեալ: Բայց զի Աստուծոյ Արարչին է վճիռ ի վերայ Ռոդէլիմացս ամենեցուն, զից ունիմք առնել, եթէ ոչ, զփառս վերառաքեալ բարեդար կամաց նորին, որ Տէր է կենդանեաց և մեռելոց:

Այդդ, կամք Նորա եղիցի օրհնեալ, և որ փոխեցամ զմա յանցաւոր կենցաղոյս, արժա-
նացուցն մտից երկնային անազաստիմ ընդ երջանիկ սուրբ կանանցն իշաբերից, որոց և
բարեպաշտական գործովքն հաղորդ էր, որպէս գիտեմք ի պատմութեանն մուրաւկաց մե-
րոց: Եւ զքեզ, յարգի սիրելիդ, հանդերձ ամենայն քոյայնովքդ մխիթարեսցն և ողջ պահես-
ցն պարագայաց ամօք, փոխանակ տրտմական կրիցն յոգնապատիկ ուրախութիւնս շնոր-
հելով ձեզ ամենեցուն:

Իմացաք և զլուրճ ամենավնաս արարողութեանցն ֆրանսզաց, և զծովային ուղեգնացութեանցն վտանգս, և զպակասութիւնն վաճառաց, և զվնասակրութիւնն բազմաց, որոց ստուգութեանն թուղթք մուրիակին և այլոց ևս վկայեմ: Տարակուսանք մեծ ըմծայեցաւ մեզ սակս ձախորդութեանց խղճալի մերայնոց: Խնդրեմք յԱստուծոյ իւր ամհում ողորմութեամբն խաղաղութիւն շնորհել ամենայն աշխարհի և սրբոյ եկեղեցւոյ, ի բաց քառնալով գհանրածոսի ալէկծութիւնսն՝ տարածեալ ըմդ տիեզերս:

¹⁹ Քանի որ Երևանի խանը Իրանից վերադառնալուց ձեռո թշնամաբար էր տրամադրված Վրաստանի մկալտմամբ, Ղուկաս Կաթողիկոսը չի կարողանում ցավակցական մամակ ուղարկել Հերակլի մահվան կապան-ցութայնք և շնորհավորել Գիորգի XII-ի թագադրումը: Նա դա կարողանում է մանկ սիայո արմ ժամանակ, երբ Երևանի խանը մարդ է ուղարկում Վրաստան (Մատենադարան, ձեռ. № 2922, էջ 40ա-40բ):

Զփակէթն³⁰ թղթոց քոց, գոր նդեալ էիդ ընդ թղթոց մերում, հասուցանել ի Տփխիս, հաւատարիմ մարդկան ձեռոց ուղևորեալ ենք ի ձեռս պարոն Մանուչար Գուրջասպրին ի մարտի 17: Եւ յորոց ամձանց և թուղթք գայցեն ի ձեռս մեր յանուն քո, ամբողջապէս առաքելոց ենք առ պատուականութիւն ձեր:

Ձոր ինչ ի վերոյ ծանուցաք, ամցեալ եղելութիւնք էին, ի ներկայումս կացութիւն Պարսից խառնակ լսի և տեսանի, և կատարած իրաց ինչ ոչ նկատի, ի տեսանել մեր զարծանիս իմանալոյ, գրելոց ենք սիրելւոյդ:

Ողջ լեր ի Տէր, ի հրճուանս մեր:

Գրեցաւ յամի Տեառն 1798 և ի յունիսի 13 ի Սուրբ Էջմիածին:

Աստուածապարզ և մխիթարութեամբ հանդերձ ողջուն և օրհնութիւն առաքենք ազնուածին որդւոյն քո և թոռինդ՝ Քրիստոսիւ զօրացելոց և շքեղազարդից աղայ Յովաննէսին և աղայ Նազարին, և հարազատ զաւակաց և ընտանեաց նոցին: Նաև մտերիմ փեսային ձերոյ՝ խոհեմառատ պարոն աղայ Յարութիւնին Թաղեանց, և բարեշառաւիղ որդւոյ նորին և զործակալին մերում պարոն աղայ Յակոբին, և ամենեցուն իսկ ձերայնոց և նոցայնոց, որք եղիցին մխիթարեալք ի Տէր և յանձնեցեալք ի խնամս նորին հանապազ: Ամէն:

Երկու համօրինակ գրեցաւ թուղթս, որոց առաջինն է այս, որ ի վերայ կոստանդնուպօլսոյ յուղարկեցաւ:

(Ձեռ. № 4501, էջ 2311-2314)

ՂՈՒԿԱՍ Ա ԿԱՐՆԵՑՈՒ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ԾԱՀԱՄԻՐ ԾԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

[1799 թ. ապրիլ] Թուղթ մխիթարութեան ի Մատրաս առ հանգուցեալ աղայ Շահամիրի որդի աղայ Յովաննէսն և թոռն՝ աղայ Նազարն Յակոբեան վասն մահուան աղայ Շահամիրին:

Յորմէ ժամանեցէ թուղթ քրիստոսաւանդ ողջունի և ճշմարիտ սիրոյ և երկնածիր մխիթարութեան, հանդերձ Սրբոյ Իջման տեղւոյս նորին տրտմափարար շնորհիւն և մերով հայրական օրհնութեամբ և կարօտիւ ի վերայ հոգևոր որդւոցդ մերոց սիրեցելոց ի Քրիստոս, և յուսածնունդ զաւակացդ Սրբոյ Աթոռոյս՝ քարեպաշտից և ազնուականաց, շքեղազարդից և պերճապատուից, աղայ Յովաննէսիդ Շահամիրեան և աղայ Նազարիդ Յակոբեան, և բարեկարգ տան ձերում և ամենեցուն, որք ձեր են՝ ընտանիք, ազգականք և բարեկամք, ի Տէր խնդալ և մխիթարիլ:

(Շնորհք)

³⁰ Փակէթ (ռուս.) - փաթեթ, կապոց, ծրար:

Եւ ընդ օրհնութեամս աստուածայնոյ՝ զիտապշիք ազնուագոյն սիրելիք մեր և հարա-
գատ որդիք տրոյ գահին Էջմիածնի։ Ջի յանցելում ամին, որ էր ըստ թուական Փրկչին
1798 և ի լուծիսի ամսեանն թողոթ գրեցաք առ ընտրելագոյն հաւատարիմ բարեկամն մեր՝
աղայ Շահամիր գորովագոյթ հայրն միտոյ և պապն միաւոյ, ի պատասխանի լետին թըղ-
թոյն նորա առ մեզ յամի Տեառն 1796 դէկտեմբերի 1 գրեցելոյ և ի մխիթարութիւն յաղապս-
վախճանման ազնուիի քեռն ձերոյ Թամարայ։ Եւ մինչ լուսայաք այլևս ընդունիլ ի նմանե-
լթողթս սիրոյ ի մխիթարութիւն բազմապատիկ նեղութեանց մերոց, զորս ունիմք ի բար-
բարոսաց, յեղակարծ իմն զգոյծ տրտմական լուսք։

Եւ յոչ ակտործելն մեր ի լուր այնպիսոյ դառն համբաւոյ, զփոքրիկ թողթ մի ընկալաք ի հոգնոր որդայոյն մերմէ և ի նոյրակէն ձերմէ՝ Յակոբայ ահրիեայիսկոպոսին ի Կալկաթա- յոյ գրեալ յամի Տեառն 1797...: Յորում կարի իմն թախծութեամբ ծանուցեալ էր զվճարումն կենաց վերոյիշեալ բազմագով բարեյիշատակ հօրն և պապուն ձերոյ՝ աղայ Ծահաւորին: Որ յիրաւի և մեզ եղեւ տրտմութիւն մեծ, և էարկ զմեզ ի սուգ դառնագոյն: Եւ զհարդ ոչ յաց- ցուք զտարաբախտութիւն մեր. որ զբազում ոչ ունելով, ի սակաւում ևս զրկիմք օր ըստ օրէ, այժմ յայնպիսի սիրելոյ պակասելոյ, որ առաւել էր, քան զբազումս: Զաստուածասէրն ա- սեմ և զբարեպաշտն, զկատարեալն ձերութեամբ և զարդարեալն խոհեմութեամբ, զհոչակ- եալն մեծաւ համբաւով: Նա, որ օրինակ բարեաց էր յոգումն, փայլեցեալ համեստութեամբ, և կարգաւորեցեալ խոհեմական վարուք, օգտակար բազմաց և խնամատար իւրազանց: Եւ առ սուրբ Աթոռս և առ մեզ յաւէտ հաւատարիմ, և առաքեցելոցն ի մեզ ասպնջական և հանգուցիչ:

Արդ, վասն զի այսպիսի բարեշուք և երևելի անձն պակասեցաւ ի մեզ և դուք հարազատքդ նորին ի սուգ մատնեցաք, կրկին յառելան մեզ ցաւք: Բայց սակայն զի նա ըստ բարեգործութեանց իւրոց ունի արժանատրիլ վարձուց ըստ երգողին, թէ բարի առնէ Տէր բարեաց, և հանգիստ այն էր նմա, ըստ բանին Յօբայ ի կատարում հասակին յաստեացս ցաւակրութեանց փոխիլ ի վայրս մշտնջենական հանգստեանն, որպէս զհասուն ցորեան ժողովելով ի շտեմարանս արքայութեանն. վասն որոյ ոչ է պարտ ընդ երկար սուգ առնուլ ի վերայ առնն բարեպաշտի, այլ փառս տալ անմահ Արարչին, որ Տէրն է կենդանեաց և մեռելոց և յարուցիչ ննջեցելոց: Յորմէ և հայեւ արժան է զողորմութիւն առ հանգուցեալն և առ յետամնացսդ:

Ուրեմն, յիշելով զանուն հանգուցելոյն ի փրկարար սուրբ պատարագս, ասեմք՝ լուսաւորեսցէ Տէր զԻր ճշմարտութեամբ, և ընդ սրբոց դասոց պսակազարդեալ, զմայլեցուցէ լաճանցական փառս արքայութեանն երկնից: Եւ զհաբազատ ժառանգ նորա, հանդերձ համայն ընտանեօք ձերովք մխիթարեսցէ և սփոփեսցէ, և երկարակեաց և փառազուարճս պահեսցէ:

Եւ արդ, բաւական համարելով զոր մինչև ցարդ կրեալ էք զտխրութիւն, այսուհետև ի բաց փարատեսցիք, և երկմատորան յուսով պատսպարեալ, մխիթարեսցիք զձեզ և զամե-
նայն ձերայիսն: Մ'անաւանդ նախանձատրք զտանելով բարեշնորհութեանց, զմեմանութիւն
յուսաճողի թորն և պապուն ձերոյ ի ձեզ բերեալ, զնորին բարեպաշտութիւնն և զազնու-
կան վարսն լանձինս երևեցուցիք, և իմաստաբար կառավարելով զհոգակեալ տունդ

ձեր, զհամբաւ բարի տարածեսցիք առ ամենեւեա՜ն՝ ի փառս Տեառն և ի խնդութիւն բարեկամաց:

Եւ զնոյն ջերմեռանդ սէր և զօգտակար հաւատարմութիւն, զոր ունէր նա առ սուրբ զառն և առ զահակալս սորին, այսուհետև դուք, օրհնեալքդ, ցուցիք մխթարելով զվըտակցութիւնս մեր: Ըստ որում փոխանակ հօրն բարեպաշտի այժմ հարազատ ժառանգքդ նորին էք, զորս Տէր օրհնեացէ և զօրացուցէ, և ի խնամս իւր պահելով, յամենայն փորձանաց փրկեացէ. և առաջնորդեացէ ձեզ ի բարութիւնս, ըստ հաճոյից կամացն իւրոց: Զի միշտ զբարի համբաւս ձեր լսելով, ուրախանայցեմք ուրախութեամբ ի Տէր:

Գիտասցիք և զայս, սիրեցեալք մեր, զի զոր յիշեցաք ի վերոյ, թէ ի նուիրակ Յակոբ վարդապետէն ի Կալկաթու գիր ընկալաք, նա յայնմ թղթի նշանակեալ էր, թէ ի Մատրասու զամենայն որպիսութիւնս իմ և զործոյս գրեալ եմ երկարապէս: Բայց այն թուղթն նորա ոչ հասի՞ն մեզ, զի լուաք ստուգապէս, որ ի Բաղդատու մեծ պահարանաւ թուղթն եմ հանձնեալք երևանցի այլազգւոյ ունեմն. զի առ մեզ հասուցէ, իսկ ամենի զօրք շահ կոչեցելոյն կամ սարտարին ընդ մէջ Թարվիզու և Խօյու կողոպտեալ եմ զայն թղթաբեր այրն, և զթուղթսն ևս կորուսեալ: Վասն որոյ յերկար ժամանակի չգիտեմք զորպիսութեանց նորա և կողմանցդ:

Արդ, գրեմք ազնուացդ, զի մինչև ցհասանիլ թղթոյս, եթէ Յակոբ շնորհապետն վարդապետն դարձեալ ի Կալկաթու ի յօրհնեալ քաղաքդ Մատրաս, դեռ յայդր գտանիցի, և զգործն աւարտեալ իցէ, սիրով և խաղաղութեամբ ուղևորիցէք յայս կողմն: Եւ որպէս հոգեւոյս աղայ Օհրամիրն զթուղթն աճապակաս առնէր ի մէնջ, նոյնպէս և բարի շառաւիղքդ նորին, զսիրանիշ գիր ձեր մի պակասեցուցիք ի մէնջ, ծանուցանելով զողջունէ ձերմէ, և զմեզապատշաճ գիտելիս կողմանցդ: Որով շնորհակալ լինելոց եմք զսիրելեացդ օրհնութեամբ:

Ողջ լերուք ի Տէր:

Գրեցաւ յամի Կեմարարին 1797 և յապրիլի..., ի լուսանկար Աթոռս սուրբ Էջմիածին:

Հայրական սիրով և երկնաձիւր մխթարութեամբ ողջոյն և օրհնութիւն տամք բարեպաշտութի ընտանեաց և աստուածապարզն զաւակաց ձերոց, զգաստամիտ Հոփսիսիմէ խաթունին և նորաբողբոջ Անայի խաթունին, ազնուի Մէրջան տիկնոջն և ծաղկափթիթ Յակոբջան աղազատէին և այլ ամենայն ձերայնոցն: Որք լիցին մխթարեցեալք Հոգւովն Սրբով և յանձնեցեալք միշտ ի պահ[պ]անութիւն արարչական խնամոց նորին, և շնորհք Սրբոյ Աթոռոյս եղիցի ընդ ինքեանս յարածամ. Ամէն:

ՄԱՆԴՐՈՒ ԲԵՆԲՈՒԴՅԱՆ

ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՑԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

1932 թ. ճոյնքերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ դժվարությամբ և բարդ պայմաններում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց 59-ամյա խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին:

Նորընտիր Հայրապետի գործունեությունը զուգահեռյալեց դաժան մի ժամանակաշրջանի, երբ Հայոց Եկեղեցու բնականոն գործունեությանը խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներ ու դժվարություններ կային, առկա էին բացահայտ ամհանդուրժողականություն, կամայականություն, հալածանք ու բռնություն:

Ահա թե ինչու մորընտիր Հայրապետը չկարողացավ ժամանակին գրել ու հրապարակել իր Անդդաճիկ կոնդակը, որը Հայոց Հայրապետների գործունեության ծրագրային փաստաթուղթն է հանդիսանում: Սակայն ինչպես միշտ, այդ օրերին մույնպես իրավագրված ու կողոպտված Սուրբ Էջմիածինը մնում էր աշխարհասփյուռ հայության անփոխարինելի Սրբություն Սրբոցը, Երուսաղեմի հայոց երանաշնորհ Պատրիարքներից Թորգոմ Գուշակյանի բնորոշմամբ՝ այդ տարիներին Էջմիածինը խոսում էր իր իսկ լուրջությամբ:

Մենք մեր «վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի երկրորդ հատորում, որն ամբողջապես նվիրված է հաճախակի խորեն Ա Կաթողիկոսի կյանքին ու հոգևոր գործունեությանը, ըստ հնարավորին հայտնաբերել և հրապարակել ենք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի դժվարություններով է հնարավոր դարձել Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելը, և ինչ համառությամբ է իշխանությունների կողմից պահանջվել, որպեսզի խորեն արքեպս. Մուրադբեկյանը կաթողիկոսական թեկնածու չդառնա: Բերանք մի հատված Անդդաճիկադարչության պետի տեղալակ Լ. Բերիայի և գաղտնի բաժնի վարիչ Մուղդուսու՝ 1930 թ. ճոյնքերի 7-ին Հայաստանի կառավարությանն ուղղված զեկուցագրից.

«... 4/ Արքեպիսկոպոս խորեն Մուրադբեկյան - Կաթողիկոսի փոխանորդ, անցյալում սերտ կապված էր դաշնակների հետ... տեղեկություններ կան դաշնակների գաղտնի կազմակերպության հետ նրա կապի մասին: Այդ տեղեկությունները ճշտվում են և ստուգվում»¹:

¹ Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Ա, «Խորեն Ա Մուրադբեկյան, հոգևոր գործունեությունը. 1901-1938», Երևան, 1996, էջ 277:

Երջանկահիշատակ Հայրապետը, սակայն, տնտեսական և հոգևոր-քարոչական առումով այս ծանր ժամանակաշրջանում անգամ հետևողականորեն և խոհական հեռատեսությամբ զբաղվում էր Հայ Եկեղեցու առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմամբ:

Այս կոնդակը թեև ուղարկվել է Երուսաղեմի «Սիոն» և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Հասկ» ամսագրերին, բայց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, առաջին անգամը լիցելով, 70 տարի հետո՝ այսօր է հրատարակվում այն՝ Գվիրվելով Գահատակ Կաթողիկոսի ծննդյան 130-ամյակին:

«Թիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Երջանկահիշատակ Հայրապետը հավատում էր Հայ Եկեղեցու մարտիրոս ոգուն և մեր ժողովրդի սրտին: Հայ Եկեղեցին ոգի է, ուժ է և լույս, և այդ երկնային լույսի ջախակիրներից մեկն էլ եղել է հոգեւոյս խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոսը, որի գործունեությունը թեև կասեցվեց, բայց մեր Եկեղեցու պատմության մուսի օրերին անգամ ցա կարողացավ ժամանակակիցներից փոխանցել մեր մախրոդ Հայրապետներից իրեն ավանդված «Եկայք շինեսցուք սուրբ գլխորանն լուսոյ» խոսքերը: Նահատակ Կաթողիկոսն ապրեց հպարտ ու ըմթացավ անսայթաք և գործեց անձնագործ:

ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՄԱՆԵՐԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՈՍԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԿԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՈՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԴԻԿԵ ԷԶՄԻԱԾՆԻ

Շնորհազարդ Տ. Սահակ Բ. և Աթոռակից Տ. Բաբգեն Ա. Կաթողիկոսաց Տանն Կիլիկիոյ, Ամենապարի Պատրիարքի Առաքելական Աթոռոյն Ս. Յակոբեանց Երուսաղէմի Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսի, Ամենապարի Պատրիարքի Հայոց Կ. Պօլսոյ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսի, Գերապարի Առաջնորդաց համօրէն թեմօրէից Մերոց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից եւ ամենայն պաշտօնէից Ս. Եկեղեցւոյ, Ընդհանուր Բարեգործական Միութեան եւ ամենայն ազգային աստուածահաճոյ հաստատութեանց եւ վարչութեանց նոցին եւ համօրէն հաւաքացեալ հօսին Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ ի Հայաստան աշխարհի, ի Հանրապետութիւնս Խորհրդային Միութեան եւ յամենայն պետութիւնս ի սփիւռս աշխարհի, ողջոյն Հայրապետական եւ օրհնութիւն ի Միաձևաւէջ Տաճարս Ս. Էջմիածնի:

Այաքէն յայտ է ամենեցուն եղբարց Մերոց սիրելեաց եւ հոգեւոր որդւոց ընտրութիւն Մեր յԱթոռ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց ի ձեռն Համազգային-Եկեղեցական ժողովոյ, գումարելոյ ի փասէն ցրասնեւերեքն նոյնմբերի 1932 ամի: Յուշ ածեալ զպատմութիւն ժողովոց եւ զընտրութիւնս կաթողիկոսաց մերոց, կոչեմք զսա եզական՝ ոչ միայն ազատ գործառնութեամբ իւրով, առանց արտաքին ներգործութեանց եւ թելադրութեանց ի վճիռս, այլ եւ նորոգութեամբ հնաւանդ սովորութեանն՝ ըստ ոգւոյ Մերս Եկեղեցւոյ, որ հայի ընտրութիւն միոյ եւեթ թեկնածուի կաթողիկոսի եւ յօծումն նորա անմիջական, առանց միջամտութեան կամ հաստատութեան մարմնաւոր իշխանութեանն: Ընտրութիւն Մեր կատարեցաւ յերկրաւսաներսորդ աւուր նոյնմբերի, իսկ գիւրապետական ժողովն ընկալաք զկնի աւուր միոյ, ըստ միահամուտ ցանկութեան ամենայն ժողովականաց:

Ջայս ամենայն եւ զյաջողութիւն ելից ժողովոյն պարտիմք բարեհաճութեան Խորհրդային Կառավարութեան Հայաստանի:

Ցայտ առնելով գայսպիսի բարեբափրակ նշանաց սկզբնադրության Մերոյս Հայրապետության, սակայն ոչ մտաբանման գնալ ածել գոծուարին հանգամանս ժամանակի եւ բերմանց, յորում վիճակնցաւ Մեզ բազմի յԱթոռ առաքելաշնորհ Լուսաւորչին Տանս Թորոգման եւ սրբազան յաջորդաց նորին, կենդանի նահապետութեամբ եւ բազմեախար գործովք եւ արդեւմբ որոց՝ յրեթացս բազմախոյով դարուց, եհաս Մեզ նաւ Եկեղեցոյ Մերոյ Սրբոյ անվարանց յամենայն խորից եւ անփորձ ի փոթորկալից այնաց: Յաջողեսցի՝ եւ Մեզ կապարել գնոյն սրտաբիս, գեղեալն ի վերայ Մեր թելադրութեամբն Աստուծոյ եւ ընտրութեամբ ժողովականաց համայն հաւաքացեալ հօփին Հայաստանեայցս Եկեղեցոյ:

Ջի քնսանեմք գիտաբացեալ ժողովուրդն Մեր ցրտեալ ի սփիւտս աշխարհի, գրկեալ ի հայրենի փանէ եւ յընչից, թափառական յոյորս օտար եւ եռաւոր աշխարհաց, ծիրեալ եւ պասքեալ յերեսաց աղբարութեան եւ պանդխտութեան, ենթակալ ալլասերման, տարանեալ ի հաւաքս եւ բեկեալ ի յօսոյ: Յաջողեսցի՝ եւ Մեզ միսխարել զսգառոս, բժշկել գեղովք հիւանդացեալս, կանգնել զգլորեալս եւ հասարակել ի հաւաքս եւ ի յոյս, ժողովել ի մի գրդուեալսն ի հոգնոր հայրենիս, ի փարախ Լուսաւորին Մերոյ Հայաստանեայց: Յաջողեսցի՝ Մեզ ի կապար ածել գորշումն Համագային-Եկեղեցական ժողովոյն, կազմել գնոր սահմանադրութիւն, բոխեալ ի նուիրական եւ ի պարմական աւանդութեանց Եկեղեցոյ Մերոյ, ի նկար առեալ եւ զբազմապետակ իրաւակարգ ժողովորոց, յորոց միջի բնակեալ կան հապտածք հաւաքացեալ Մերոց, բարեկարգել եւ նորոգել զենացեալ սովորութիւնս եւ կարգս, որք կարօտին սրբազրութեան ըստ պահանջից եւ կարեաց նորոյ ժամանակի ի սահմանս իմաստուն խոհականութեան եւ զգոշաւորութեան, բարութել զնիւթական ծանր վիճակ Աթոռոյս ի պահպանութիւն եւ ի յարաբնութիւն միաբանական ուխտիս եւ դաստիարակել զմանկունս Եկեղեցոյ ի սպասաւորութիւն եւ ի կենդանի քարոզութիւն Բանին կենաց: Յոստալ յոստամ միայն յողորմութիւն եւ յօգնականութիւն Աստուծոյ, եթէ հասանիցէ Մեզ ի թիկունս՝ առ ի գորացուցանել զպկարութիւնս ի պահպանութիւն եւ ի կարգաւորութիւն յորութեան Եկեղեցոյ Մերոյ Սրբոյ:

Յուշ ածելով գոծուարութիւնս ժամանակիս եւ հանգամանաց, սակայն ոչ դանդաղիմ գոհանալ զԱստուծոյ, զի չեմ միայնակ ի կրել զծանր լուծ պարտաւորութեանցս ի կառավարութեան Սրբոյ Եկեղեցոյ եւ համօրէն հաւաքացեալ հօփին, զի ունիմք ընդ Մեզ գՏԷր ՄԱՎԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, զիմաստութեամբ ճերացեալ եղբայրն Մեր ընդ Աթոռակցաւ իւրով Տեառն ԲԱԲԳԷՆԻ, գՏԷր ԹՈՐԳՈՍ Արքեպիսկոպոսն յԱթոռ Պատրիարքութեան Ս. Յակոբեանց Երուսաղեմի, գՏԷր ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան Կ. Պօլսոյ, այլ եւ առ Մեզ ունիմք զանդամս Գերագոյն Հոգեւոր Լսորհրդոյ եւ զմիաբանական ուխտ Ս. Աթոռոյս, զամենայն Առաջնորդս թեմօրէից Մերոց, զազգային-եկեղեցական վարչութիւնս եւ զխորհուրդս, որք միացեալ ի սիրտ եւ ի հոգի սիրովն Քրիստոսի եւ Եկեղեցոյ Մերոյ, օգնական լիցին ի կապարման պարտեացս ի պահպանութիւն եւ ի պայծառութիւն Մօրս ընդհանրականի եւ հոգեւորի:

Արդ, առ Ձեզ են բանք իմ, Շնորհազարդ Տ. ՄԱՎԱԿ Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ եւ Աթոռակից Տ. ԲԱԲԳԷՆ, ողջունեմ զՁեզ սիրով եղբայրութեան, որպէս գեղեւոր եւ զսիրելի հարազատս Մեր, չեն ինչ թեթեւ եւ վիճակեալ Ձեզ պարտիք առ ի հովուել եւ ի մի ժողովել գիտաբացեալ Ձեզ հօփ, որ ի հեքեւսանս ղժբաղդ ընթանց, գրկեալ ի հայրենի երկրն,

Ընդ հայրական ռեջունիս յորդորեմ եւ զՁեզ, զամենայն Առաջնորդս թեմօրէից (Մերոց, զդասս եպիսկոպոսաց եւ վարդապետաց, որք ի Հայաստան աշխարհի, ի հորերդային Մի-
ութեան եւ յարտասահմանի, լինել զգաստ եւ աշալտրք ի պաշտամանդ, ժիւ ի քարոզու-
թեան Բանին կենաց, օղակ կենդանի ընդ մէջ հաւաքացեալ ժողովրդոց եւ Հայրապետա-
կան Աթոռոյ, զի ամենեքեան Դուք հոգեւոր որդիք էք Մեծի Տանն եւ անդամք միաբանական
ութիւիս, որ ի Ա. Էջմիածին: Զգուշացուցանեմք մանաւանդ զԱռաջնորդս արտասահման-
եան թեմօրէից, հեռի կալ եւ պահել գիւաւարացեալ Ձեր ժողովուրդ ի կոտակցական պայ-
քարաց եւ յանախորժութեանց, հայելով միայն ի բարոյական եւ ի կրօնական շինութիւն
հօգիդ: Հայրենի երկիրս եւ համայն ազգ ի սփիւսս կարօտին խաղաղութեան առ ի բոլմել
զրկայեալ վէրս իւրեանց, ուստի եւ պարտիք դուն գործել վարարել ի միջոյ հաւաքացելոց

գամենայն ինչ, որ հակառակ կայ խաղաղությանն և մի թողուլ զբշնամական արարս ընդդեմ Մայր Հայրենեաց Մերոց՝ Խորհրդային Հայաստանի և Կառավարության նորին: Յորդորեմք և զքահանայս և զամենայն պաշտօնեայս ընդ իշխանութեամբ Ձերով, կենցաղավարութեամբ և հաւաքարմութեամբ առ մայրս մեր Ս. Եկեղեցի, օրինակ հանդիսանալ ամենայն հաւաքացելոց վառել զքահ հաւաքոյ և բարեպաշտութեան ի հոգիս հաւաքացելոց: Ողջունեմք և օրհնեմք զամենայն Ազգային-Եկեղեցական վարչութիւն և խորհուրդս թնձօրէից և եկեղեցեաց, որք աստ ի Միութեանս և յարքաւսահմանեան գաղութս:

Ողջունեմք և օրհնեմք յանուն Տեսառ զամենայն հասարակութիւնս, որք հային ի պահպանութիւն եկեղեցեաց, դպրոցաց, յօգնութիւն աղքատաց և յայլ աստուածահաճոյ նպատակս, և ի գլուխ ամենեցուն զԲարեգործական Ընդհանուր Միութիւն ամենայն մասամբք, որ ոգրակար և ընդարձակ գործունէութեամբ իւրով գրաւեալ է զսլք և զհամակրութիւն համայն Հայոց - սրբելով զարքաւստս լուզմաց նեղելոց և վշտացելոց յերեսաց անոց չքաւորութեան, բանալով դպրոցս և արհեստանոցս ի դաստիարակութիւն որոց և աղքատաց: Յորդորեմք զՁեզ ամենեան, զվարիչս ամենայն բարենպաստակ ընկերութեանց և հասարակութեանց, իրագել պահել զԼեզ յամենայն ձեռնարկութիւնս և ի գործառնութիւնս, զի և սս ուրախ եղէք ընդ յառաջադիմութիւն և ընդ բարեգործութիւն որդոցս, օրհնելով զսնուն Տօրողին շնորհաց, որ հասարակեալ է ի հոգիս մարդկան զգութ և զսէր եղբայրական:

Հուսկ յետոյ ողջունեմք և օրհնեմք զՁեզ, ժողովուրդք Հայոց, որք բնակեալ կայք ի բնիկ հայրենի երկրիք մերում և ի դրացի պետութիւնս Խորհրդային Միութեան: Ողջունեմք և օրհնեմք նաև զվարարանդի զաւակունս Լեւոյ, նժողեհեալս յայլ և այլ սահմանս և ի քաղաքս արքաւսահմանեան ազգաց: Կենդանութիւն և պահպանութիւն հոգեւոր և թանգագին ժառանգութեանս, որ է Հայաստանեայց Եկեղեցի, կախեալ կայ ի հաւաքոյ, ի սիրոյ և ի բարեպաշտական զգացմանց հաւաքացելոցդ, զի չիք Եկեղեցի առանց ժողովրդեան, զի նա կեայ և մնայ յաիւրեան ի վերայ Վիմին կենդանոյ, որ է հաւաք քրիստոնէական ի սիրտ հաւաքացելոց: Արդ սիրեցէք զմայրս Ձեր հաւաքոյ, զՍուրբ Եկեղեցի և եղերուք հաւաքադիմ որդիք նորայ՝ ուր և գրանիցիք: Կատարեցէք զպարսիս Ձեր ծնողական՝ դաստիարակելով զզաւակունս ի հոգի քրիստոնէական, ի սէր մայրենի Եկեղեցւոյ, լնգուի, հայրենեաց և սրբազան աւանդութեանց: Ջանացարուք պահել զբարձր անուն և զպարսի ազգի յաչս օտարաց, յորոց միջի բնակեալ կայք, աշխարհութեամբ, մաքուր և ազնիւ կենցաղավարութեամբ, բարեպաշտութեամբ և կատարմամբ քաղաքացիական պարտաւորութեանց: Մի անջարեցեան զՁեզ քարաձորիւք հեռաւորք, ծովք և ովկիանոսք ի սիրտ բնիկ ժողովրդեան, բնակելոյ ի պատմական հայրենիս և ի Մայր Աթոռոյ, որ սիրտ կենդանութեան եղեալ է հոգևոր կենաց համայն ազգի, վկայ և կոթող յաիւրենական պատմական անցից, ուրախութեան և վշտի, յաջողութեան և քառապանաց ժողովրդեան մերոյ դարոց ի դարս:

Որդեակք իմ հոգեւորք, հաւատածեալք յօրստ սահմանս հեռաւոր ազգաց և պետութեանց զկնի յորդորական բանից և օրհնութեան ունիմք ասել Ձեզ և բան ինչ մխիթարական և աւելաւոր, զի թէպէտ ըստ բերման դժբաղդ հանգամանաց աւերեցաւ երկիր մեր և քաղաքեցաւ կենդանի մնացեալ ժողովուրդն ի սփիւտս աշխարհի, որոց մասն են և բազումք ի Ձէնջ, սակայն ողորմութեամբն Աստուծոյ շնորհեցաւ մեզ Արարարեան աշխարհն սահմանակից զաւատաւն, որ օր ըստ օրէ ծաղկեալ քարգաւաճի ի շինարարութեան և ի

քաղաքակրթական - գիտական և ի տրոսական ամենապետակ ձեռնարկությունն է ձեռն բարեջան հառավարության հորհրդային հայաստանի: Ժողովուրդ մեր ջան է գործ եղեալ գաւառական իւր աշխատասիրություն և զեռանդ. նորոգէ գաւերեալ հայրենիս իւր. բարե- փոխելով զնա յերկիր պարտաբեր և բարեկեցիկ: Մինչ ի հաստատություն հորհրդային հա- տավարութեանն ի հայաստան աշխարհի, քրեսաց աղքատութեան նրկին հագարք հա- գարաց յագգէ մերմէ խնդրելն զգրւր պարտա մի հացի յօրար քաղաքս հովկասաւ. Ռու- տաստանի և արտասահմանի, այժմ երկիր մեր ոչ միայն բաւարարէ զկարիս սննդեան և կենաց բնիկ ժողովրդեանն, այլ և հեղգեպտ ընդունի ի ծոց իւր զգրուեալ օրդիս յօրար տահմանաց: Զայս յայտ ամենմբ Ձեզ, որդեակք Մեր սիրելիք, յուրախություն և ի միսիթա- րություն, յորդորելով զՁեզ տարարել բարոյապէս և նիսթապէս վերաշինութեան երկիրս, զկրթական և զբարեկապական ամենապետակ հաստատութեանց ասեմ, զվերաշինութենէ քաղաքաց և գիտօրէից, զգործարանաց և զծաղկմանէ երկրագործութեակ, զի Դուք ոսկո ի միոյ ծառայն, արմապք և բուն կենդանութեան որոյ հաստատեալ կան ի պապմական հայրենիս մեր ի հորհրդային հայաստանի:

Շնորհք, սէր և խաղաղություն եղիցի ընդ Ձեզ, ամեն:

ԽԱՐԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ հռոդակս յամի շնորհաց Փրկչին 1933 ի 1 յունիսի
ըստ Տումարիս ՌՅԶԲ, ի հայրապետութեան Մերում յԱ. ամի
յԱրարարեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ի Վաղարշապատ

*ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՑԱՆ**Բանասիրական գիտությունների թեկնածու***ԿՈՄԻՏԵԱՍԸ ԵՎ «ՄԻՓԱՆԱ ՔԱԶԵՐԸ»**

Ինչպես հայտնի է. Գերմանիայից վերադարձող Կոմիտաս վարդապետը 1899 թվականի սեպտեմբերին խրիմյան Հայրիկի հաճճարարությամբ ստանձնում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երաժշտության ուսուցչի և Մայր Աթոռի երգչախմբի ղեկավարի պաշտոնները, որը բարեխղճորեն վարում է մինչև 1910 թվականի սկիզբը:

Իր ունեցած կենսափորձը հարստացնելով Գերմանիայում ձեռք բերած գիտելիքներով, Կոմիտասը Էջմիածնում, կարճ ժամանակամիջոցում, ստեղծում է քառաձայն երգչախումբ և զարկ տալիս հոգևոր ու ժողովրդական երաժշտության մշակմանն ու մերկայացման աշխատանքներին: Օր-օրի ավելանում է Կոմիտասի մասին գրված հոդվածների թիվը և տարածվում նրա գործունեության համբավը:

1904 թվականի դեկտեմբերին, Թիֆլիսի «Տարազ» շաբաթաթերթում, «Գեղարվեստական քրոնիկոն» խորագրի ներքո, հրատարակվում է ընդարձակ հաղորդագրություն, որով հոդվածագիրը, հենվելով Թիֆլիսում առկա տրամադրությունների վրա, առաջարկում է Մենդլյան տոների ընթացքում Կոմիտասին հրավիրել Թիֆլիս, որպեսզի նա Պատարագ մատուցի և ելույթ ունենա Արտիստական ընկերության սրահում:

Հաջորդ՝ 1905 թվականի սկզբին, այդ առիթով Կոմիտասը նաև հրավեր է ստանում Թիֆլիսի Հայ տիկնաց միության անունապետուհի Ն. Ղամբարյանից:

Ստանալով Կոմիտասի համաձայնության գիրը, մարտի 2-ին Ն. Ղամբարյանը նամակ է գրում Կոմիտասին և խնդրում՝ իրեն ուղարկել Թիֆլիսում կատարվելիք համերգի երգերի տեքստերը, որպեսզի թարգմանի ու ստանա տեղական գրաքննիչի թույլտվությունը:

Կարճ ժամանակ անց Թիֆլիսում առանձին գրքույկով լույս է տեսնում Կոմիտասի տրվելիք համերգի ծրագիրը և հայ հոգևոր երաժշտության ու ժողովրդական երգերի տեքստերը:

Նույն օրերին «Տարազ» շաբաթաթերթը նորից է անդրադառնում ճեմարանական սաների երգչախմբի համերգին: «Համերգի ծրագիրը» ասված է հաղորդագրության մեջ. «բացառապես Բ. Կոմիտասի ծայնագրած եկեղեցական ու ազգային-ժողովրդական երգերն են, կրկնակի ուրախ ենք, - ասված է շարունակության մեջ, - Կոմիտասի Թիֆլիսում համերգ տալու համար, մանավանդ, որ Թիֆլիսի հասարակությունը հոգեկան հաճույք և մխիթարություն կստանա այդ բազմիմաստ համերգից»:

Այս ամենի արձագանքները մեծացնում են Կոմիտասի նախապատրաստական աշխատանքների ծավալը ու նրա եռանդը: Այս ամենի մասին գրում է Կոմիտասի երգչախմբի

մեծերգիչ Վահան Տեր-Առաքելյանը. «... Ուսումնական տարին Գևորգյան ճեմարանում հիշեցնում էր ռազմական տենդային մախապատրաստություն գորական ճամբարում»¹:

Կոմիտասը Թիֆլիս տարվող իսթի պարապմունքները սկսելուց առաջ մորից ուշիուշով փորձում է ձայները, վերադասավորում, ըմտրում մոր երգիչներ և պարապմունքից հետո հայտարարում.

«Տղերք,- ասում է Կոմիտասը դիմելով երգչսխմբի անդամներին,- ես ծրագրել եմ մի շատ լուրջ գործ, որի հաջողությունը կամ տապալումը ամբողջովին կախված է ձեզանից, շատ ուշիմ կամ անփութ վերաբերմունքից... Բայց դուք պիտի վստահեք ինձ, պիտի հավատաք իմ ուսուցարարության կարևորությանը և ոչ մի ջանք չխնայեք՝ հարյուր տոկոսով արտաքին խոսքերով իմ սպասելիքները...: 1905 թվի փետրվարին,- շարունակության մեջ գրում է Վահան Տեր-Առաքելյանը,- վերջացավ երկու համերգի համար ծրագրված աշխարհիկ ու հոգևոր երգերի սև աշխատանքը և սկսվեց դրանց գեղարվեստական հղկումը»:

Հենց այս օրերին էլ՝ 1905 թվականի փետրվարին, ավարտվում է Կոմիտասի «Սիփանա քաջեր» խորագրով հոդվածի մախապատրաստական աշխատանքները և մույն թվականի մարտ ամսվա ընթացքում էլ ամբողջացվում է այն:

Կոմիտասը մի շարք անգամներ մշակել է մահ այդ ստեղծագործության տեքստը, որի մասին՝ մի այլ առիթով:

Որպեսզի «Լո-լո» երգի հիման վրա իր մշակած «Սիփանա քաջեր» երգի կատարումը իրականացվի Թիֆլիսում տրվելիք համերգում, Կոմիտասը լուրջ և տևական մախապատրաստական աշխատանք է տանում երգչախմբում: Առվորեցնում է ոչ միայն իր վերամշակած տեքստի խոսքերը, այլև տալիս համազամանալից բացատրություն այդ երգի կառուցվածքի մասին:

Կոմիտասի բացատրության ընթացքում երգչախմբի անդամ Մելքոն Քրիշչյանը, որը տիրապետում էր սղագրության տեխնիկային, ձեռք է առնում թուղթ ու մատիտ և բժախնդի հետևողականությամբ, առանց շրջանցելու որևէ դարձվածք, սղագրում է Կոմիտասի տված ցուցումներն ու բացատրությունները և կատարած ընդհանրացումները:

1969 թվականին Մելքոն Քրիշչյանն իր կատարած այդ սղագրությունը հրատարակում է Երևանում լույս տեսնող իր «Ամսար կանթեղ» խորագրով գրքում:

Մեր հետաժողովության շնորհիվ, ժամանակի ընթացքում, բազմակողմանիորեն կատարված քննարկումներից հետո, այդ սղագրությունը ձեռք է բերում հոդված դառնալու անառարկելի իրավունք և հավաստիություն, ուստի սղագրության միջին դուրս հանելով ընդմիջարկումները և հավելյալ միջամտությունները, բանախոսության տեքստը պատրաստեցինք սղագրության և ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

Այն համազամանքը, որ հոդվածը պատկանում է Կոմիտասի ոչ թե գրչին, այլ կարդացած բանախոսությանը, փոքր-ինչ անսովոր կարող է թվալ այդ հեղինակությունը փաստարկելու հարցում:

Հարկ ենք համարում հավաստել, որ այս մոտեցումը չպետք է համարել արտառոց: Կոմիտասի մեծությունը թույլ է տալիս նրա ժառանգության հանդեպ հանդես բերել մեծ մո-

¹ Վահան Տեր-Առաքելյան (Լուսինի ժողովածու), Երևան, 1998, էջ 86:

տեցում, առավել ևս այն դեպքում, երբ այդ սղագրության մեջ քարձրացված հարցերը հարազատ են Կոմիտասի դավաճած սկզբունքներին և հավաստի են ու փաստարկված և լիովին համահունչ են մեր հեղինակած գործերի ընդհանուր ոգուն:

Այս հոդված-բանախոսության մեջ արծարծված հարցադրումներն իրենց իմաստավորված քվանդակությամբ իրավունք են ձեռք բերում կայուն տեղ գրավելու մահ Կոմիտաս վարդապետի ստեղծագործական ժառանգության մեջ և պետք է արժանանան կոմիտասագիտության ուշադրությամբ և այդ բանախոսությունն իբրև հոդված, առանց վերապահության, պետք է տեղ գրավի Կոմիտասի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության հոդվածներին մվիրված հերթական հատորի մեջ:

ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ս Ի Փ Ա Ն Ա Ք Ա Ջ Ե Ր Ը

(Բանախոսություն՝ կարդացված երգի ուսուցման առիթով)

- Այո՛, տղայք, այս ձեզ քաջ ծանոթ «Լո-լոն»՝ այսինքն Բայտնի «Բեզըրգյան Բեյի» քայլերգն է։ Երրորդ լսարանի տղայքը Բավանորեն կհիշեն, թե ինչպես իմ Գերմանիա գնալուց առաջ, վերակացու պ. Ազնավոդյանի գլխավորությամբ, Բավաքվում էին երեկոները հյուսիսային դռան առջև և ուրիշ երգերի շարքին երգում էին այս երգը առանց բառերի, որովհետև այդ եղանակը քրդական լինելով՝ միայն սրինգով են նվագում։ Մեր սիրելի պրն. Մ. Արեղյանն էլ խանդավառվելով եղանակով, իր պատենական գրչով բառեր գրեց այդ եղանակի համար։ Երգը ժողովրդականացավ, մասնավոր պատանի սերունդը սիրով էր երգում դարձրեցական պատուհանների գնալու կամ վերադառնալու ժամանակ՝ խանդավառելով բոլոր տեսնող-լսողներին։ Ինչպես ձեզ, այնպես էլ ինձ այդ եղանակը շատ է շահագրգռել, սակայն ոչ այդ բառերով։ Եվ ահա ես խնդրեցի իմ սիրելի պաշտոնակցից, որ մի օր նստեմք և բովանդակությունը հայացնելու աշխատեմք և արհմը։

Ինչպես գիտեք, նախորդ բառերով քուրդ աշիրեթներն են, որ Սիփամա սարի շուրջը իրար դեմ են դուրս գալիս և իրար գլուխ ուտում։ Վերամշակվածի մեջ դարձյալ քուրդ աշիրեթն է հարձակվողը Սիփամի լանջերին, մի հայ գյուղի վրա, հայ կտրիճները գիշերվա լռության մեջ թշնամու հարձակվելու լուրն առնելով, իրենց մտուզները հեծած, թշնամու դեմ են ելնում և նրանց երազած առատ ավարի փոխարեն իրենց առատ արյունով սեզ Սիփամա լանջերն են ոռոգում, դիակներով գետինը ողողում և մնացածներին ողջ կամ հաշմանդամ՝ անմոռանալի դասով իրենց տները ուղարկում։ Դուք գիտեք, թե դարեր շարունակ, մասնավոր տաճկահայ անգեն գյուղացին ոչխարի պես մորթվել էր իմանում, անճարակության մեջ ինքն իրեն ուտելով, մորմոք սրտով իր գույքն ու սիրելիները աչքի առջևից հափշտակվել ու տարվել էր դիտում։ Տաճկական բռնակալության տակ հեծող բալկանյան ժողովուրդները, սրանից հազիվ քառորդ դար առաջ տեսան, որ բաժակը լցվել է, մարդ ասածը չի կարող համբերել, ոտքի ելան և գեճքի ուժով, Եվրոպայի քրիստոնյա մեծ պետությունների օգնությամբ, նվաճեցին իրենց անկախությունը։ Հայ եկեղեցականը, հայ քնարը, հայ գրիչը ի տես այդ բոլորի, այլևս չէին կարող անվերջ արցունքոտ աչքերով, տոչորվող սրտով սոսկ դիտողի դերի մեջ մնալ։ Ձեզցից շատերը գիտեն, որ եկեղեցիների բեմից էլ նոր քարոզ հնչեց համձին մեր վեճ Հայրիկի՝ հռչակավոր «հարիսայի»։ Դա բանաստեղծ աշուղների լալկան քնարները ուղղի շեփոհներով փոխարինել տվեց, նրանց ուղղի կոչերը ազատության անձնուրաց խմբեր հանեցին կարճ ժամանակի մեջ Տավրոսի, Սասնո լեռների վրա, ինքնապաշտպանության դրոշմեր ծածանելով այդ բարձունքներից։ Ի տես այդ զարթոնքի, մենք չէինք կարող վաճառել պարիսպների ներքո քաշվել, 1895 թվից այս կողմը հարյուր-հազարավոր գաղթականության սիրտ պատռող ողբն ու կոծն

եմք լսել ու տեսել և միապաղաղ շարական ու գեղջկական սիրո երգեր լսել ու լսեցրել: Մենք էլ թող «Հիմի էլ լռեմքի», «Հայ մեռնիցքի» կողքին մեր այս «Սիփանա քաջերով» մեր տուրքը տված լինեմք ինքնապաշտպանության գաղափարին:

Այսքանը երգի վերամշակված թովանդակության մասին, որ իր առանձին կարևորություն ունի: Այժմ գանջ ճորա երաժշտական զգեստավորմանը: Թե՛ երաժշտությունը և թե՛ թովանդակությունը մի երաժշտի համար մեծ խայծ է սիմֆոնիկ գործի համար մտածելու թերևս ոչ այս բառի նեղ ու խիստ իմաստով:

Բայց «Սիփանա քաջերը» այդպիսի խայծ չէ միայն, նա իբրև հորինվածք իր գաղափարականով, իր միջավայրով, գործողություններով, հուզմունքներով ու ալեկոծությունների տեսարաններով հաղթանակի ու խրախճանքի հաջորդականությամբ և այդ ամբողջի տարողությամբ, երաժշտի առջև շատ լուրջ խնդիրներ է դնում, և այդ ոչ միայն մարդկային ձայնով լուծվել չեն կարող, այլև նվագարաններ է պահանջում, որից մենք առայժմ զուրկ ենք: Եվ որովհետև զուրկ ենք, պետք է առավել ևս ուժ տանք այսպես կոչված «ա կապելա»՝ այսինքն անգործիք խմբական երգեցողության իմաստալի արտահայտությամբ, որն իր հերթին ունի իր գնահատելի առավելությունները: Այսպես թե այնպես, «Սիփանա քաջերը», ինչպես ասացի, իր հասնեմատական բարդությամբ մեզ զբաղեցնող երաժշտական այն կտորը կմնա, որ ամենից ավելի հեշտությամբ կարող է պարզել, թե մեզ, հայ երաժիշտներիցս, պահանջվում է եվրոպական դասական երաժշտության էության և պահանջների խոր և լայն ճանաչողություն: Մի անգամ էլ շեշտելով այդ անհրաժեշտությունը, ամմիջապես պիտի ավելացնեմ. վա՛յ մեզ, հայ երաժիշտներին, եթե տիրաճալով եվրոպական դասական երաժշտության էության և նրա կերպավորման օրենքներին - կանոններին, անգիտանաք, որ մեր ազգային երաժշտությունն էլ ունի իր առանձնահատկություններն ու սրանցից բխող կանոններն ու պահանջները, նրանց կտրորեն եվրոպականով փոխարինելը կլինի մեծագույն մեղացումը, ինչ որ մեր երաժշտության զարթոնքի շեմքին շատ անգամ է կատարվել և վախենում եմ, որ դեռ կկատարվի: Այդ վտանգը սպառնում է մեզ ոչ միայն «Լո-լոյի» պես բարդ, այլև ամենապարզ ժողովրդական երգերը բազմաձայնելիս:

Գալով ժողովրդական երգերի մշակության, այդ հարցի քննարկումը կթողնեմք ապագային, նախ «Սիփանա քաջերի», ըստ հնարավորության, բազմակողմանի քննարկման վրա կանգ առնեմք: «Լո-լոյի» կամ «Սիփանա քաջերի» այդ քննարկության ժամանակ էլ մենք այն դեպքում հնարավոր մեծագույն արդյունքին կհասնեմք, երբ մենք սկսեմք այն՝ եվրոպական երաժշտության զարգացման, վերջինիս ազդակ-գործոնների, ստեղծված դպրոցների վրա մի ակնարկով, որ անհրաժեշտ է ոչ միայն ամեն մի երաժշտասերի, այլև ամեն մեկին, որն ընդհանուր զարգացման է հետևում:

Ամենից առաջ պետք է իմանաք, որ իբրև որակավոր այն ժողովուրդների երաժշտությունն է ճանաչված, որ նույն այդ ազգի ժողովրդական երգերի շուրջ ու ոգով է հագնվել: Բեռլինի իմ ուսանողական կյանքում ես առաջին անգամ մեծ գնահատականի արժանացա, երբ պրոֆեսորս իմ փորձ կոմպոզիցիայի հիմքում հայ ժողովրդական երգը նշմարեց:

Առաջին հարցը, որ ծագում է այս փնտրտությունների ընթացքում, այն է, թե ինչ՞ով թացատրել ազգային-ցեղային երաժշտությունների ուրույն կառուցվածքի այսպիսի կամ այնպիսի կերպավորումը, երանգավորումը: Պատասխանը կարող է հետևյալը լինել:

Մի շարք ազդակներով:

Ինչպես յուրաքանչյուր ցեղի կամ ազգության ֆիզիկականը և հոգեկանը ամենից առաջ աշխարհագրական-տեղագրական կլիմայական միջավայրով է պայմանավորվում, այնպես էլ այդ կարևոր դեր է խաղում մարդկանց հոգեկանի, զգացումների, ձգտումների, երաժշտական ճաշակի ձևավորման հարցերում:

Տարօրինակ պետք է լիներ, եթե Միջերկրականի և մասնավորապես Իտալիայի մշտնջենական ջիմջ երկինքը, Գրա վերևը մավող մշտապայծառ արևը, վերջինիս առատորեն ջերմություն և փոռող ոսկի ճառագայթները, Գրա հրաշագեղ, երկրային բարիքներով լի բնությունը, այնծածան ծովը՝ իր ցամաքը փայփայող զովացուցիչ գեղյուտով, այնտեղ ծնվող ու սնվող մարդու հոգեկան կառուցվածքի, Գրա զգայական կյանքի վրա խոր ազդեցություն չգործեր: Ուստի, Իտալիա այցելող զբոսաշրջիկ բանաստեղծը, մկարիչը, երաժիշտը չի կարող չտարվել, արբել Գրա ժողովրդի կենսախիճից մկարագրով, Գրա անվերջ, իր շրջապատը պարուրող այդ թե կնոջ ոսկեհեղուկ երգերով:

Եվ վերջապես, մի՞թե պատահականություն կարող է համարվել այն, որ Իտալիան մարդկությանը տվել է ոչ միայն կարուզոյի և Զիլիի պես անմեծ տեմոներ, Զուգեպպե վերդիի և Լեոնկավալլոյի պես աշխարհի բեմերը զարդարող հոգեպարար օպերաներ ստեղծագործող կոմպոզիտորներ, այլև այն, որ մի տասնյակ տարի առաջ Իտալիան ամբողջ աշխարհի միակ կոնսերվատորիան էր, ուր վազում էին աշխարհի ամեն ծայրերից այլեր ու կիներ իրենց ապագա խոստացող ծայները Ֆլորենցիայի ու Միլանի կոնսերվատորիաներում մշակել տալու, մկարչական տաղանդները Գուլմ այդ քաղաքների Արվեստից ճեմարաններում հետադասում ձեռք բերելու, իրենց վրձիններին հուշակ ապահովելու հույսով: Ես ինքս թեպետ գերմանո-սաքսոն դպրոցը դիմեցի երաժշտության մեջ կատարելագործվելու համար, սակայն մինչ այդ, իբրև արևավառ Հայաստանի ծնունդ, միակողմանիորեն Իտալական երաժշտության երկրպագու էի:

Ո՞վ կարող է ասել, թե գերմանացի հպարտ չէ իր մութ-կանաչ անտառներով, տեղ-տեղ շրջապատված լեռներով, գետերով ու լճերով: Երկինքը շատ անգամներ է մթագնում և օրը ցերեկով է՛լ ավելի մոայլեցնում առանց այն էլ մոայլ մթնոլորտը: Բայց երբ արևը հաղթում է ամպին ու մշուշի թանձր վարագույրը և անհետացնում է Գրա հետքերը, ո՞վ կարող է ժխտել Գրա գեղեցկությունը: Նույնը կարելի է ասել է՛լ ավելի հեռավոր Գրիզի ծայրագույն Ռյուսին մետված Նորվեգիայի համար, իր մթնաշունչ բնությամբ անհամար կտրված ֆյորդներով, խոր կապուտակ լճերով բնության մասին:

Այդ երկրներն ամեն ժամանակ և միանգամից իրենց վրայից դեն չեն գցում մոայլ քողը այցելող զբոսաշրջիկի աչքին, իրենց գեղեցկությունը լրիվ հայտնագործելու համար: Մինչ արևաթաթախ Իտալիայի ձմեռը մշտականաչ զգեստավորումով, մարիմեներով ծանրաբեռնված ծառերը՝ իրենց կանաչ ու դեղնակարմիր գաղղերով զարուհ-ամառվանից չեն տարբերում, մինչդեռ Ռյուսիսային գոտին՝ գարնան թե ամռան օրը մի քանի անգամ մոայլում է իր դեմքը, մոայլելով իր ծոցում ապրող մարդու դեմքը, կնճիկ կուտակում Գրա ճա-

կատից: Միևնույն արևը այստեղ ամռան իսկ օրերին, շաբաթներով և նույնիսկ ամիսներով սպասել է տալիս նույն այդ հյուսիսի մարդուն դեմքը պայծառացնելու, ճակատի խորշումները փոքր-իմջ հարթելու համար:

Ձմեռը, որն իր սպիտակ պատանքով՝ յուրահատուկ գեղեցկությամբ է պարուրում ամբողջ շրջապատը, միևնույն ժամանակ դող ու սարսուռ է բերում իր ծոցում բնակվող մարդուն, այդ զարմանահրաշ գեղեցկության մահաշումջ պաղությամբ, սննդի ու ջերմության դառը հոգսերով, նորից կնճիոներով է ծածկում հյուսիսի մարդու ճակատը, նրա տակ պարուրված միտքը, ահաբեկված հոգին ու նրան կես ընդարմարած՝ գլորում ոչ միայն այդ բոլորից պաշտպանվելու մտորումների ամդումը, այլև ուղեղը տքնեցնում այն հարցով, թե այդ ի՞նչ դիվային խաղ է, որ խաղում է իր հետ այդ հրաշագեղ սպիտակով պարուրված՝ նույնքան էլ դաժան բնությունը: Եվ ահա ինչպես պատահումը չէ, որ իտալիան մարդկության ամենակենսախիճը, ամենաշերմաշունչ, ամենաալյուրոտ երգիչ-երգչուհիներն է տվել, այնպես էլ անվերջ խորհելու, առեղծվածներ լուծելու դատապարտված հյուսիսի մարդկությունն էլ նոր դարի մեծագույն փիլիսոփաներն է տվել, նրա նրաժիշտներ Բեթհովեն-Վաղներ-Գրիգ՝ Հյուսիսի երաժիշտներն էլ ամբողջ ծնված ու սնված լինելով միևնույն միջավայրում, օժտված պիտի լինեին նույն փիլիսոփայական նկրտումներով ու տրամադրություններով: Ինչպե՞ս կարելի է, օրինակ, մի հակիրճ ու հասկանալի բնորոշում տալ Վաղների երաժշտական փիլիսոփայությանը:

Վաղներն իր երաժշտությունը կառուցել և շաղախել է միևնույն մտորումով, այն է՝ կյանքը միայն խիճ ու վայելք չէ, այլև ահեղ գոտեմարտ է բնության արհաժիրքներ ծնող, սով ու հիվանդություններ բերող երևույթների, ինչպես նաև մարդկային նենգ չարությունների դեմ: Ինչպես բանաստեղծը կամ վիպասանը բարություն, գեղեցկություն, ճշմարտություն, հոգու վեհությունը պատկերացնելու համար այն բառերն ու արտահայտությունները չի գործածում, ինչ բառեր ու արտահայտություններ է գործածում չարություն ու բռնություն, անգիտություն, տգեղություն, խաբեբայություն ու նեղություն կամ դավաճանություն պատկերացնելու համար, այնպես էլ երաժիշտը պետք է գտնի այն եղանակը և այն դաշնավորումը, վերջիններս էլ տա այն ձայներին ու գործիքներին, որ լավագույն պատկերավորեն թված երևույթներն ու հատկությունները: Առնենք նկարիչը: Եթե նա նպատակ է դրել իրեն՝ մի աղքատ ընտանիքի մարդկային թշվառությունը պատկերացնելու, ապա նա իր մտքով իսկ չի անցկացնի այդ ընտանիքի բնակարանը մարմարի պատերով ու սյուներով, բնակիչների՝ բեհեզի ու թավշե զգեստներով ներկայացնելու: Իր բուն նպատակին հասնելու համար նա այն կներկայացնի կիսաքամոտում, բնակիչների՝ ցնցոտիների մեջ, իսկ սրանք էլ պատկերացնելու համար նա վառ գույների մեջ չի թաթախի իր վրձինը, այլ կօգտագործի անհրապույր մոայլ գույները:

Հերթը հիմա գալիս է մեզ հետաքրքրող բուն առարկային՝ երաժշտությանը և նրան սպասարկող երաժշտին: Երաժշտության նպատակը միայն ունկնդիր բազմությանը զմայլեցնող, վերացնող հնչյունների համադրությամբ լն ու դաշտ հրդեհող արշալույսի ու վերջալույսի նկարագիր տալը, և կամ գեղաձիժաղ առավոտ ու ծաղկավետ բուրաստաններ արտահայտելը, սեր, երջանկություն պատկերացնելը չէ: Կյանքը միայն երջանիկ զույգեր միացնող հարսանիք չէ, այլ միևնույն պատերի մյուս կողմը մարդկային ողբերգություններ-

րի ամենաարտակելի տեսարաններ կան, ուր մարդկային զագամություններից ծնունդ առած պատերազմներում հոսեցրած արյան ճապաղիքների մեջ հարյուրավոր հոգիներ են գալարվում, զենքերի որոտն ու շայումը, հրդեհված, կործանվող շենքերի տակ թաղվողների աղիոգորմ ճիչերն են հնչում: Երաժիշտը չի կարող լրիվ իր արվեստին տիրացած ճկատվել, եթե խուսափի և համապատասխան հնչյունների համադրությամբ չպատկերի կյանքի բոլոր կողմերը, պետք է ասել և այն, որ եթե կան երաժիշտներ, որոնց խառնվածքը այդպիսի ստեղծագործությունների համար չէ, նրանք ստեղծվել են միմիայն մարդկային ակամքը շոյող, ակտրոսալուր երաժշտական գործեր արտադրելու, շրջապատող բնուակամքը որոնց հոգիները այդ սեռի արտադրությունների համար է կառուցել, ապա երկրաթյունը նրանց հոգիները այդ սեռի արտադրությունների համար է կառուցել, ապա երկրագունդը ինքը խուսափելով այդպիսի միակողմանիությունից՝ իր վրա երկրամասեր է ստեղծում, որոնք, իրենց հատուկ գեղեցկությունների հետ միասին, մարդկային տիպարներ են ձևակերպել իրենց գրկում, որոնց բնությունը նրանց մղում է մահ կյանքի մոայլ կողմերը տեսնելու, նրանց մեջ խորասուզվելու և այդ երևույթները, երաժշտական գործիքների օգնությամբ, համապատասխան երաժշտական տարրերի ընտրությամբ, կատարյալ կերպով պատկերացնելու, իսկ կատարելությունը ինքնին գեղեցկություն է և յուրահատուկ վայելքի աղբյուր: Եվ որքան հատկանշական է, առաջին հանգամանքով երաժիշտը, որ այդ ուղին բռնեց, ծագումով Իտալիայի ամսիջապես հյուսիսի և Գերմանիայի հարավի ծնունդ ավստրիացի վան Բեթհովենը, զգուշ քայլերով առաջ շարժվեց, թեև չմերժվեց հարավից, սակայն ավելի շերտեր են ընդունվեց հյուսիսից: Միջնդեռ հյուսիսի գավալ Ռիչարդ Վագները հափշտակված իր մախակարապետ-ուսուցչից, շատ ավելի համարձակ ու որոշակի քայլեր են տեց սկսված ուղիով, և ի՞նչ եղավ հետևանքը՝ իր առաջին և հետևող գործերը սուլոցներով ընդունվեցին Փարիզում, միաժամանակ մահ իր հայրենիքում՝ Գերմանիայում: Ինչո՞վ կարելի էր բացատրել այս վերջին իրողությունը, նրանով, որ հյուսիսի ժողովուրդները միջև այդ գուտ իտալական-ֆրանսիական ակտրոսալուր և հեշտամարս երաժշտությամբ էին սնվել: Անշուշտ դրանից քիչ առաջ տեղի ունեցած ֆրանկ-գերմանական պատերազմի ստեղծած մթնոլորտն էլ կարելի չէր իբրև նպաստավոր վայրկյան ճկատել:

Ամփոփելով՝ ասենք, որ երաժշտության արտահայտության եղանակը, ոգին կախումն ունի բնությունից: Իսկ ինչ վերաբերում է թվանդակությանը, դա կախված է ժողովրդի կյանքի պայմաններից: Բրդերը իբր լեռնական, ունեն մի երաժշտություն, որը գորեղապես կրում է բնության կնիքը: Իսկ իբրև թափառաշրջիկ և խաշմարած՝ քրդերի երաժշտությունը անկայուն է և պտտվում է ոչխարների և այծերի շուրջը: Սրան իբրև օրինակ բերենք Լուր-դալուրի հայտնի ավանդությունը, ուր մի հովիվ իր աղայի աղջկան տիրանալու համար սրինգի մվագով ոչխարներից է դյուրում:

ԱԶՆԻՎ ՄՈՎԱԵՍՑԱՆ

*Երևանի Պետական Համալսարանի
արվեստի պատմության ամբիոնի ասպիրանտ*

ՆՈՐՎԵԳԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հազարավոր կիլոմետրեր են ընկած Հայաստանի և Նորվեգիայի միջև, և առաջին հայացքից թվում է, թե այս երկու երկրները, նրանց ժողովուրդներին ու մշակույթները միմյանց հետ կապող ոչինչ չկա: Սակայն բավական է փոքր-ինչ խորանալ մեր ժողովրդի անցյալի մեջ, և այս կարծիքն անմիջապես կփարատվի: Հայոց պատմության էջերից առաջին հերթին կհանձնի նորվեգացի նշանավոր ճանապարհորդ, բնագիտագետ, գիտնական, հումանիստ, հասարակական գործիչ, մեծ հայասեր Ֆրիտյոֆ Նանսենի անունը: Բացի այն բազմաթիվ ջանքերից, որ Նանսենը գործադրել է Հայ դատի արդարացի լուծման և հայ գաղթականների՝ Խորհրդային Հայաստան հայրենադարձման ուղղությամբ, նա թողել է նաև տարբեր լեզուներով հրատարակված կարևոր գրական ժառանգություն Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ: Հայ մտավորականների ջանքերով տասնամյակներ շարունակ հայերեն են թարգմանվել և բեմադրվել նորվեգացի նշանավոր դրամատուրգ և բանաստեղծ Հենրիկ Իբսենի երկերը: Մի քանի տարի առաջ Նորվեգիայում ներկայացվումներով հանդես է եկել Գ. Սուդոուլյանի անվան դրամատիկական թատրոնը:

Նորվեգիայի և Հայաստանի միջև գիտամշակութային կապերը լրացնելու և ամրապնդելու առումով մի նոր քայլ է նաև վերջերս Օսլոյի համալսարանի «Kirke & Kultur» /«Եկեղեցի և մշակույթ»/ պարբերականում հրատարակված 12-13-րդ դդ. Կիլիկիայի հայկական մանրանկարչությանը նվիրված հոդվածը, որի հեղինակն է ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Չուգասյանը:

«Kirke & Kultur»-ը լույս է տեսնում 1896 թվականից և հանդիսանում է մշակույթի վերաբերյալ սկանդինավյան առավել ակնառու գիտական պարբերականներից մեկը: Ամսագրի շրջանակներում տեղի են ունենում գրական և մշակութային քննարկումներ, ինչպես նաև արծարծվում են գեղագիտության, էթիկայի, կրոնական, սոցիալական ու քաղաքական ոլորտների խնդիրներ: Ըստ էության հանդեսը ստեղծում է այն անհրաժեշտ դաշտը, ուր գիտական կենտրոնների տարբեր ներկայացուցիչներ հանդես են գալիս գիտամշակութային հարցերի շուրջ կատարած սեփական ուսումնասիրություններով և հնարավորություն են ստանում կատարել տեսակետների փոխանակում այլ մասնագետների հետ:

Խնդրո առարկա պարբերականի 2003 թ. թիվ 4 հրատարակությունը կրում է «Էկզոտիկ քրիստոնեական արվեստ» խորագիրը: Այստեղ տեղ գտած հոդվածներում հեղինակները քննում են Նիկեայի ու Կիպրոսի, նաև Հորդանանում Պետրայի բյուզանդական հուշարձաններին, Եթովպիայի, Ալբանիայի քրիստոնեական ստեղծագործությունների հետ

առնչվող տակավին քիչ ուսումնասիրված հարցեր: Այսպես, օրինակ՝ «Քրիստոսի գերեզմանը վաղ քրիստոնեական արվեստում» խորագիրն է կրում ճանաչված գիտնական. Օսլոյի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Հյալմար Թորպի հոդվածը:

Պետրոսի բյուզանդական ոճի խճանկարների վերաբերյալ հետաքրքիր նյութ է ներկայացնում Բերգեմի (Նորվեգիա) համալսարանի պրոֆեսոր Բենթե Կիլերիչի հոդվածը: Նույն հեղինակի գրչին է պատկանում մեկ Կիպրոսի ու Նիկեայի բյուզանդական հուշարձաններին վերաբերող հոդվածը: Ուշագրավ է մեկ իտալական արվեստի ճանաչված մասնագետ. Ուդինեի (Իտալիա) համալսարանի պրոֆեսոր Վալենտինո Պաչեի հոդվածը, որը մասնագետների ուշադրությունն է հրավիրում այնպիսի քիչ ուսումնասիրված նյութերի վրա, ինչպիսիք են Ալբանիայում գտնվող դարձյալ բյուզանդական արվեստի ազդեցությանը ստեղծված խճանկարները: Ուսսալայի (Եվեդիա) համալսարանի պրոֆեսոր, եթովպիական արվեստի մասնագետ Եվա Բալիկա-Վիտակոսկան ընթերցողներին է ներկայացնում «Եթովպիայի վանական արվեստը» աշխատանքը:


Ամսագրում հրատարակված «Կիլիկիայի հայկական գրքարվեստը 1100-1200-ական թվականներին» Լ. Չուգասոյանի հոդվածը մվիրված է Կիլիկիայի հայկական ձեռագրերի ուսումնասիրությանը:

Կիլիկյան ձեռագրերն աչքի են ընկնում առանձնակի շքեղությամբ, գրերի նրբագեղ ձևերով, ոսկու առատ օգտագործմամբ, գույների ներդաշնակ համադրությամբ: Հոդվածում հեղինակն անդրադառնում է 12-13-րդ դարերում Կիլիկյան Հայաստանում գործող գրչատների, մասնավորապես՝ Դրազարկի, Սկևայի, Հոմսլայի, ինչպես մեկ Հովհաննես արքեպիսկոպոսի դպրոցների գործունեությանը, այդտեղ ստեղծված մատյանների նկարազարդումների ոճական ու պատկերազարկյալ առանձնահատկություններին: Առաջին երեք գրչատները հանդիսանում են Կիլիկյան գրքարվեստի վաղագույն կենտրոնները, որոնք իրենց լայն գործունեությունն են ծավալել 12-րդ դարում: 13-րդ դարում կարևորվում է Հեթում Ա արքայի եղբայր Հովհաննես արքեպիսկոպոսի դպրոցը:

Հոդվածում հիշատակվում են 12-րդ դարի նկարիչներ Գրիգոր Միհնեցին, Թեոդորոս Քեսուցեցին, Կոստանդինը, 13-րդ դարի մանրանկարիչներ Կիրակոսը, Հովհաննեսը, Հովասափը: Առանձին մեկ զույգ մվիրված է 13-րդ դարի մեծատաղանդ հայ մանրանկարիչ, գրիչ Թորոս Բոսլիմի ստեղծագործությանը:

Հոդվածի վերջում զետեղված են օգտագործված գրականության ցանկը և հեղինակի կողմից արված ծանոթագրությունները: Տեքստը ուղեկցում են քննվող մանրանկարներից կատարված վերատպությունները:

Արտասահմանյան գիտական պարբերականներում հայ արվեստին վերաբերող հետազոտությունների լույսընծայումը չափազանց կարևոր դեր և մշամակություն կարող է ունենալ հայ արվեստի ուսումնասիրման և մասնավորապես օտարազգի գիտնականների ուշադրությունը դեպ հայ արվեստը հրավիրելու տեսանկյունից: Միջազգային գիտական շրջանակների ուշադրությունը գրավելու իմաստով, շատ կարևոր է, որ հայ արվեստի մասին այս հոդվածը ներկայացվում է «Էկզոտիկ քրիստոնեական արվեստ» խորագրի ներքո, Նորվեգիայում քիչ հայտնի այլ ազդությունների և հեռու գտնվող երկրների անձանորս մնացած հուշարձաններին մվիրված ուսումնասիրությունների կողքին:



ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 4-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գուգարաց թեմում օծվեց Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի Ս. Գայանե եկեղեցին: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպս. Չուլջանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Ս. Սիոն եպս. Աղամյանը և Մայր Աթոռի միաբաններ:

Տասնյակ փարիսներ հեռաննի այս եկեղեցին փակ էր հավաքացյալների առջև և այն վերականգնվեց մոսկվաբնակ գործարար Արթուր Բաղդյանի ջանքերով:

Շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով՝ Նորին Արքեպիսկոպոսը մասնավորապես նշեց. «Բազում փարիսներ այս եկեղեցին լռել էր, աղոթք և շարական չէր հնչում նրա կամարների ներքո, հավաքացյալն այսօրեղ երկրպագություն չէր ամենում Ավագ Ս. Խորանից, իսկ Աստված, անհավատների մղածությամբ, թվում էր, թե դուրս է բերվել մեր կյանքից, և մեր ժողովուրդը խարխափում էր անհավատության մեջ: Բայց այսօր, հուրախություն մեզ ամենքիս, բարին մուտք է գործում Ձեր կյանքից ներս, Աստված կրկին խոսելու է Ձեզ հետ իր կենարար պարվիրաններով ու պարգամներով, որպեսզի Ձեր կյանքը դառնա օրհնյալ և աստվածաճաճ. որպեսզի չարը դուրս մղվի Ձեր հոգիներից ու սրտերից և սերը, եղբայր-սիրությունը, կամեցողությունը, ողորմածությունը վերստին Ձեր կյանքի ուղեկիցը լինեն... Մեր ազգի փրկության ճանապարհի 1700 փարիսներ շարունակ եղել և մնում է Աստծո ճանապարհը, որ անցնում է եկեղեցու միջով»:

Վեհափառ Հայրապետն իր գնառատանքը հայտնեց նաև փեր և փիկին Արթուր և Գայանե Բաղդյաններին՝ պարգևատրելով նրանց Հայոց եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով:

Եկեղեցու օծմանը ներկա էին Տավուշի մարզպետը, բազմաթիվ հավաքացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՆԱՐԵԿԻՆ

ՆԱՕՏՏ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբապատկերով 2003 թվականը հռչակված է Ս. Գրիգոր վարդապետ Նարեկացու «Մարյան ողբերգության» Աղոթագրքի 1000-ամյակի տոնախմբման փարի: Նարեկին նվիրված միջոցառումների շրջանակներում դեկտեմբերի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ ՆԱՕՏՏ. Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի, տեղի ունեցավ գիտաժողով, որին մասնակցեցին հայաստանի թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ հարությունյանը, ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Կիկ. Թամարա Պողոսյանը, Մաշտոցի անվան Մապենադարանի տնօրեն Սեն Արեշտյանը և հայաստանի Ազգային համալսարանի հաստատությունները ներկայացնող փարքեր գիտնականներ:

Գիտաժողովը բացվեց Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Վեհափառ հայրապետը օրհնության իր խոսքը հղելով ներկաներին՝ ասաց.

«Ողբում եմք ձեզ այսօր, Վեհափառ այս հանդիսատեսում, Նարեկացու հազարամյակին նվիրված այս գիտաժողովին: Մենք ուրախ ենք, որ գիտական աշխարհի մեր հայրերը արձագանքել են Մայր Աթոռի հրավերին և եկել են իրենց մասնակցությունը բերելու այս գիտաժողովին: Այս փարի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հռչակված էր Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման 1700-ամյակի փարի:

Տրեյանազարդ այս փարում մեր ժողովրդի զավակունք տոնախմբեցին 1000-ամյակը Նարեկացու: Երկու կարևոր, առանցքային իրադարձություններ, որոնք որ մեծ դերակատարություն են ունեցել մեր ժողովրդի կյանքում: Եվ այսօր մենք այդ հորեյանների խորհրդի առթևակությամբ մեր գոհարանական ուղիքն ենք առ Աստված բարձրացնում և փարք փայլա երկնավոր մեր Տիրոջը, որ այսպիսի արժեքներով շնորհազարդել է սագս հայոց, որպեսզի հենված այդ արժեքներին և նրանց խորհուրդներին՝ շարունակի իր ընթացքը:

Մենք կարևորում ենք Նարեկացու հազարամյակի այս տոնախմբումը, որ կոչված է բազմաշերտ արժեքները Մարյանի վեր հանել, մարյակի դարձնել աշխարհին համայն և նաև մեր ժողովրդին: Կարևորում ենք, որ «Մարյան ողբերգության» այդ Աղոթագրքի հետ յուրաքանչյուր հաղորդություն ներգործում է մեզ վրա, մեր հայացքը ուղղում է դեպ մեր ներաշարիք և առաքնորդում մեզ մաքրվելու, առաքնորդում մեզ սրբազործվելու և Աստծուն մոտենալու:

Մենք վարսահ ենք, որ նման գիտաժողովները նպաստում են և հոգևորի արժեքներով մարդկային կյանքում՝ շեշտադրում կատարելով այդ իմաստով նաև: Այս առիթով Մենք մեր գնահատանքն ու շնորհակալությունն ենք ցանկանում հայտնել թուր այն անձանց ու թուր այն կազմակերպություններին, որոնք 2003 այս փարում կազմակերպեցին, պանծացրեցին ինչպես 1700-ամյակը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի կառուցման, այնպես էլ Նարեկի 1000-ամյակը:

Մենք մեր գնահատանքն ենք բերում այս գիտաժողովի կազմակերպիչ անձանց, մասնավորապես Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանին և Իրիար Վարդան Դերիկյանին և իրենց գործակիցներին, և մաղթում գիտաժողովին բարի ընթացք և բարի արդյունք, որով պիտի գորանա մեր հավատքը, որով մենք պիտի հաղորդակցվենք Նարեկացու Մապյանին և մեր հայացքը ուղղենք դեպի Նարեկա աղոթասաց վարդապետը և նրկին՝ առ Աստված: Ու մարդ-Աստված այս հարսերությունաց համերաշխության մեջ գտնենք կյանքի նպատակը, գտնենք ուժը մեր կյանքի և լավարենությունը բայենք դեպի նոր օրերը հայոց գալիքի:

Աստված բոլ օրինի մեզ:

Տ. Շահն արքեպիսկոպոս Աճեմյանը «Նարեկացին որպես վանական» զեկուցումում ներկայացրեց վանական այն միջավայրը, որում ձևավորվել են Նարեկացու հոգևոր ըմբռնումները և աշխարհայացքը:

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոպալյանը «Նարեկացին հրաշագործ» զեկուցումում ներկայացրեց ժողովրդական այն ավանդությունները, որոնցում պարմվում է Նարեկացու գործած տարբեր հրաշագործությունների մասին:

Հ. Պարմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոն-գրեն Գազիկ Գյուրջյանը ներկայացրեց Նարեկ անունով սրբավայրերը՝ նշելով, որ Նարեկի հմայքն այնքան մեծ է եղել, որ այսպես են անվանվել հեքազայում կառուցված մի շարք եկեղեցիներ:

Մաշտոցի անվան Մարենադարանի Կոնգրեսն ակադեմիկոս Սեն Արեշտյանը «Գրիգոր Նարեկացու իմաստասիրությունը» զեկուցումում անդրադարձավ Նարեկացու իմաստասիրական, աստվածաբանական իայացքներին՝ դրանք զուգահեռի մեջ դիտելով անտիկ աշխարհից եկող և քրիստոնեության կողմից նորովի իմաստավորված ուսմունքների և, ի մասնավորի, նորապատմականության հետ:

Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանի «Հայ եկեղեցու նվիրապետական համակարգի արտացոլումը Նարեկում» զեկուցումում Մապյանի համապատասխան հատվածների վկայակոչմամբ ցույց տրվեց, թե այս սրբեղծագործության մեջ ինչ բնորոշումներով են ներկայացված եկեղեցական տարբեր աստիճանները:

Բանասիրության և իրավագիտության դոկտոր Թոմ Սամոնյանի «Նարեկի պարզամը այսօրվա քրիստոնեական աշխարհին» զեկուցումը նվիրված էր արդի քրիստոնեական աշխարհի համար Նարեկի ունեցած հոգևոր արդիականությանը:

Պարմական գիտությունների դոկտոր Պարույր Մուրադյանի «Նարեկի անդրանիկ գիտական հրապարակությունը» զեկուցումը նվիրված էր այս սրբեղծագործության՝ Կ. Պոլսի 1774 թ. հրապարակության արժեքորմանը, որպես բնագրային հին և կարևոր տարբերակ-վածներ պարունակող տպագրություն:

Տ. Ասողիկ քահանա Կարապետյանի «Նարեկը որպես եկեղեցա-ծիսական մատյան» զեկուցումը նվիրված էր Նարեկի այն հատվածներին, որոնք տեղ են գտել Հայոց եկեղեցու ծիսական-արարողական գրքերում և հատկապես «Նորհրդարարում»:

Բանասիրական գիտությունների դոկտոր Անիտա Դուրխանյանի «Գրիգոր Նարեկացի և Միմեոն նոր աստվածաբան» զեկուցումում վեր հանվեցին Նարեկացու և բյուզանդական

գրականության նշանավոր միստրիկ այս հեղինակի ստեղծագործությունների միջև ամկա գրական ընդհանրությունները:

Բանասիրական գիտությունների դոկտոր Գառնիկ Անանյանի «Նարեկացին և ժողովրդական բանահյուսությունը» գեկուցումում ցույց տրվեց ժողովրդական մրաժողության, հավաքակալների, կենցաղի և վերջինիս հետ կապված մի շարք պատկերների արտացոլումը Նարեկացու ստեղծագործություններում և հարկապես տաղերում:

Բանասիրական գիտությունների դոկտոր Զնարիկ Տեր-Դավթյանը «Նարեկացու վարքը և ավանդագրությունը» գեկուցումում անդրադարձավ Նարեկացու վարքագրական կերպարին և վերջինիս հարաբերակցությանը ժողովրդական միջավայրում յուրովի արտացոլված պարականոն ավերարանների մի շարք դրվագների հետ:

Տ. Գառնիկն աքեղա Հարությունյանը «Նարեկը և XX դարի գործնական աստվածաբանությունը» գեկուցումում Մապյանը դիտարկեց արդի աշխարհի հոգևոր հիմնախնդիրների համարեքստում:

Կենսաբանական գիտությունների դոկտոր Նազիկ Խաչեյանը «Սրբալույս Մյուռնը Նարեկի էջերում» գեկուցումում գուգահեռ անցկացրեց Նարեկի՝ Մյուռնին նվիրված գլխի և Մյուռնի օրհնության կանոնի միջև:

Պատմական գիտությունների դոկտոր Ազատ Բոգոյանի «Հայ կանոնագիրական մտքի մի վառ դրսեորում» գեկուցումում ներկայացվեց Նարեկացու ժամանակաշրջանի եկեղեցաքաղաքական վեճերին վերաբերող Հակոբ Ծպարեցու թուղթը:

Երևանի պետական համալսարանի իրավաբանության ֆակուլտետի դասախոս Գևորգ Հովսեփյանը «Նարեկի բնական-իրավական հենքը» գեկուցման մեջ ստրդի աշխարհի հոգևոր հիմնախնդիրների բավականին լայն համապարկերում դիտարկեց Նարեկացու ստեղծագործությունը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Հակոբ Զյոսեյանը «Հայրախոսական աստվածաբանության արձագանքները Նարեկում» գեկուցումում անդրադարձավ Նարեկի և հայրաբանական գրականության ավանդներին:

Կենսաբանական գիտությունների թեկնածու Գայանե Պողոսյանի «Մարդակազմական ըմբռնումները Նարեկում» գեկուցումում ցույց տրվեց, թե բանաստեղծական իր բազմաբնույթ համեմատությունների և գուգահեռների շրջանակում Նարեկացին համապարասխան գրական վերախմաստավորմամբ ինչպես է անդրադարձել մարդակազմական բնույթի մի շարք հարցերի՝ դրանք խարսխելով ժամանակի բնագիրական ըմբռնումների վրա:

Բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դերիկյանը «Մեկնողական գրականության գեղարվեստական անդրադարձը Նարեկում» գեկուցումում անդրադարձավ այն հարցին, թե ինչպես է Նարեկացին սուրբգրային տարբեր հատվածների մեկնությունները բանաստեղծական աղոթական համապարասխան ձևի մեջ ներկայացրել Մապյանում:

Ս. Գրիգոր Նարեկացու «Մապյան ողբերգության» Աղոթագրքի 1000-ամյակի աօթով Մայր Աթոռում լույս ընժայվեց նաև Վարդան Դերիկյանի հեղինակած «Նարեկյան էջեր Սուրբ Էջմիածնի ձեռագրերից» գրքուկը:

ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅՅԵՑ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԴԱՎ Տ. ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹԱՆԸ

Նոյեմբերի 30-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ընդունեց Գեղարքունիքի թեմի ուխտավորներին՝ առաջնորդությամբ թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վարդապետ Դավթյանի:

«Միրելի ուխտավորներ Գեղամա աշխարհի, այսօր հավաքվել ենք այստեղ՝ մեկ անգամ ևս խոնարհվելու Իջման Սուրբ Սեղանի առջև: ...Այսօր էլ մեր հույսն ու ապավենը մեր հավաքն է, այդ աներեր հավաքի տունը՝ հայոց սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: 17 դար շարունակ տարբեր փորձությունների միջով է անցել Ս. Էջմիածինը, բայց կարողացել է պահպանել իր ինքնությունը, հավաքը, ավանդությունները և, վերջապես, իր խոստովանությունը հանդես Հիսուս «Քրիստոսի»,- նշեց Հայր Սուրբն իր քարոզի մեջ:

Ս. Պատարագին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանները: Ուխտավորների թվում էին Գեղարքունիքի մարզպետը, մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ:

ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅՅԵՑ ԿԱԼԿԱԹՈՍԻ ՆԱՅՈՑ ՆՈԳԵՎՈՐ ՆՈՎԻՎ Տ. ՕՇԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆԸ

Դեկտեմբերի 21-ին, Մայր Տաճարի օծման 1700-ամյա հոբելյանական արարողությունների շրջանակում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին եկել մի խումբ հնդկախայեր՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի:

«Նոգեկան մեծ ուրախությամբ եկել ենք հեռավոր Ննդկաստանից, պատմական հնդկա-հայոց այն մեծ գաղութից, որ նույնիսկ հայաբնակությամբ կարող ենք ասել, որ Ս. Նագալենդ հայոց եկեղեցին ամենաառաջին քրիստոնեական կառույցն է ամբողջ Հայկաթայի մեջ: Այսօր այն նույնպես կանգուն է, որովհետև իր հայացքը միշտ ուղղել է գեպի Ս. Էջմիածինը, որովհետև միշտ սնվել է Ս. Էջմիածնով, իր կապը միշտ հաստատվում է պահել Ս. Էջմիածնի հետ»,- նշեց Հայր Սուրբն Ուխտի Պատարագի իր քարոզում (տե՛ս էջ 30):

Ս. Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Ննդկաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Բալետրույանը, ծխական խորհրդի արեւմտապետ Սոնիա Ջոնը և հայ համայնքի անդամներ:

Սրբազան արարողությունից հետո ուխտավորներին ընդունեց Վեհափառ Հայրապետը:

ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳԻՄԱԿ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՂՅԱՆԸ

Դեկտեմբերի 28-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոբելյանական փարվա վերջին կիրակի գրք. ԼԱՕՏՏ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանը (տե՛ս էջ 34):

Հիշարժան հոբելյանի առիթով Վեհարանից հանդիսավոր թափուրով դուրս բերվեց հայոց հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը՝ հավատարմոր ժողովրդի նրկրպագության և օրինության համար: Պատարագի ընթացքում բազում հավատացյալների ամիթ ունեցան եպվելու հայոց մեծագույն սրբի մատունքն ամփոփող Աջին, շնորհագարողվելու սրբազան մատունքից ճառագող գոռությամբ և իրենց աղոթքը նրկինք բարձրացնելու՝ հայցելով Ս. Գրիգորի բարեխառությունը:

«Այս հոբելյանական փարում մեր բարեպաշտ գավակներն իրենց առաջնորդների ուղեկցությամբ եկան Ս. Էջմիածին՝ ծնրադրելու Ս. Սեղանի առջև, եկան իրենց շուրթերով հավելելու նվիրական քարերին 1700-ամյա այս փաճարի, իրենց հոգով հաղորդակցվելու Ս. Էջմիածնի խորհրդին, որ շաղախված է աղոթքով ու հավատքով, արյամբ, նահափախությամբ մեր գավակներին:

Փառք ու գոհություն ենք առ Մսրված բարձրացնում, որ Տիրոջ օրհնությամբ միշտ համախումբ է ազգս հայոց Ս. Էջմիածնի շուրջ և ապրում է Էջմիածնի լուսեղեն հավաքով: Բերկրալի այս օրը մի նոր օրհնություն է երկնքից իջնում մեր կյանքից ներս, քանգի մեր մեջ է Լուսավորչի Ս. Աջը, որին եկել ենք նրկրպագություն մատուցելու, եկել ենք ծնրադրելու ե մեր աղոթքն առ Մսրված բարձրացնելու, եկել ենք մեկ անգամ ևս մեր հավափարմությունն արփահափրելու Լուսավորչի Աջի նկատմամբ, որ գորացավ Տիրոջով, կնքեց հողը հայրենի, հիմերը դրեց Ս. Էջմիածնի, Սրբալույս Մյոռոնով կնքեց ոգին, սիրտը, ճակափը մեր ժողովրդի գավակների: Լուսավորչի Ա. Աջից լույս փարանք մեր հոգիներից ներս, սեր հեղվեց մեր անձերից ներս, ամրացավ առ Տեր մեր հավատքը, և մենք հավատքի, սիրո և լույսի այդ աստվածաալազն շնորհներով անցանք դարերի ոլորաալալույր ճանաալարեներով՝ մեր հոգու մեջ կրելով խորհուրդը, ալալկերը Ս. Էջմիածնի՝ մեր ձեռքերի վրա, մեր սրտերի մեջ վերցրած Աջը Լուսավորչի: Դարերի ընթացքում բազում փորձություններ բաժին ընկան մեզ, սակայն գոռությունների առջև ամեն ինչ ծուր դրեց, փշրվեցին դեալի մեզ արձակված նեփերը, սրերը կոտրվեցին, և բռնակալները ծուկի եկան Աջի գոռության առջև», - նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Պատարագի ալարփին, հափուկ արարողության ընթացքին, Ամենայն Հայոց Հայրաալնոր Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով օրհնեց հավափալալ խուռներամ ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՄՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՈԳԵՏԱՆԳԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

